

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>


841

1995. 000 0

ՆԱՅ
ՄԱՏԵ
ՆԱԳԻՐ
ՆԵՐ

ՂԵՎՈՆԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը, ներածությունը
և ծանոթագրությունները
Արամ Տեր-Ղևկունյանի



32.043

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1982

ԼԵՌՆԱՅԻՆ ՉԱՐՏԱՆԻ
ՊԵ ԱԿ Ե ՇԱՄԱՍՏԻՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

C

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻՍ՝

Աբրահամյան Ա. Ա., Աբրահամյան Ա. Գ.,

Արևշատյան Ա. Ա., Գերիկյան Գ. Խ.,

Խաչիկյան Լ. Ս.], Նալբանդյան Վ. Ս.

Խմբագիր՝ Ս. Ս. Արևշատյան

Ղևոնդ

Ղ 617 Պատմություն (Աշխարհարար թարգմ., ներած. և ծանոթ-
թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, խմբ.՝ Ս. Ս. Արևշատյան.—

Սրբ. Սովետ. հրատ. 1982.— 184 էջ.—

Հեղինակը հարուստ վաստեր է հաղորդում 7—8-րդ դդ. Հա-
յաստանի քաղաքական կյանքի ու տնտեսական ծանր վիճակի մա-
տչության փոփոխությունների մասին, որոնք պայմանավորված են Ղևոնդի
խաչիկյանի կողմից հայ ժողովրդի մղած պայքարի մասին:

4702080100 (825)

ԳՄԴ 63 . 3 (22)

3 (C43)1

705 (01) 82 82 " "

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանություն,
ներածություն, ծանոթաթարգմանությունների և ձևավորման համար, 1982:

**ՂԵՎՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐԸ, ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ
«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»**

Ղևոնդ պատմագիրը, որն ընդհանրապես երեց էլ էր կոչվում, ծնվել և վախճանվել է Ը դարում: Հայտնի չէ նրա ծննդավայրը, սակայն կողմնա-
կի տվյալները ենթադրել են տալիս, որ Ղևոնդը մանուկ հասակում պետք է ապրած լիներ Գողթն գավառում, իսկ իր հիմնական ուսումն ստացած լինե-
ր Վիլիսի հայրապետաճեղում: Կյանքի հետ սերտորեն շփում ունեցող
անձնավարության էր նա և, ինչպես ինքն է վկայում, շատ դեպքերի պա-
նասեն է եղել և որոշ բաներ էլ անձամբ է լսել Եսայեիսի բշեմազի գորա-
կանների քերականից: Ինչպես երևում է Պատմության մեջ եղած ակնհայտե-
րից, նա երկար ժամանակ ապրել է Գլիկում: Մտավորապես 790 թվա-
կանին նա արդեն ավարտած կամ նիմնականում շարադրած է եղել իր
պատմական երկը:

Հավանական է, որ Ղևոնդը այցելել է նաև Կոստանդնուպոլիս, որտեղ
ժանոքացել է այն եամականներին, որոնք գեանդեղ է իր մատյանի մեջ: Ամ-
բողջ Պատմության մեջ Ղևոնդն իր մտածելակերպով և եամակրանքով
Թագրատունիներին կողմնակից է, և հենց իր գրվածքի մեկեևաթը Հա-
պուն Բագրատունին է՝ Սմբատ սպարապետի որդին:

Հարձակալի հակառակը էր վիճակված Ղևոնդի պատմական մատյա-
նին թե՛ միջնադարում, թե՛ նոր ժամանակներում: Երան հաջորդող Հով-
հանես Գրատառակերացին և Թովմա Արժունիս նրան չեն հիշում, քնն
Հովհաննես Գրատառակերացին հագրվ թե օգտված չլինե՞ր նրանից:

Առաջին պատմիչը, որ նրան հիշում է, երկու գար ոչ ապրած Ստե-
փանես Տարանեցի Ասոդիկն է: Ապա նրան հիշում են Սամուի Անեցիին,
Մխիթար Անեցիին, Մխիթար Այբովանեցիին, Կիրակոս Գանձակեցիին և ուրիշ-
ներ:

Այնուամենայնիվ ժԸ դարում հայկական ետ պատմագիտության հիմ-

ճազիք Միխայիլ Զամչյանը իր ետնադարձ «Հայոց պատմության» մեջ, որ ի մի են բերված ոչ միայն հայ, այլև հույն, ասորի և այլ պատմիչների հարուստ վկայությունները, ասորիների կերպով չի հիշում Ղևոնդ պատմագրին:

Ղևոնդի Պատմությունը հայագիտության մեջ առաջին անգամ գեղ մե-
նագրի վիճակում օգտագործել և նրանից մեջբերումներ է արել Յ. Ղալխա
Րենթեյանը, պատմական Հայաստանի տնտեսական-հասարակական և
մշակութային կյանքին եվրոպացի «Հնագիտության աշխարհագրական Հա-
յաստանայց աշխարհի»՝ 1835 թվականին լույս տեսած ետնադարձ ուսում-
նասիրության մեջ: Գրքի նույն ժամանակ լույս տեսած «Նոր Հայկազան
բառարանը» օրինակներ է բերում Ղևոնդի խոսքերից: Չեռագրի վիճակում
Ղևոնդի մասյանն օգտագործել է հուկ հայագետ-վրացագ: Մ. Բրասեն
1849-ին լույս տեսած վրաց տարեգրության ֆրանսերեն թարգմանության
առաջին հատարի ծանոթագրությունների մեջ:

Ղևոնդի մասին առաջին գեղատեսակները տալիս են նրա բնագրի
նրատարակիչ Կ. Շահնագարյանը՝ և ուսուցիչների քաղցմանը Ք. Պատկան-
յանը՝ իրենց առաջարկներում: Երկուսն էլ թե՛ առաջարկում, թե՛ յա-
նավանդ ծանոթագրություններում շատ արժեքավոր դիտարկումներ են
անում Ղևոնդի բնագրին առկա հարցեր պարզաբանելու համար: Ղևոնդի
պատմությունն ըստ արժանիքի գեղատեսիլ և օգտագործել են Գ. Զարգ-
հանալյանը³, Ղ. Ալիջանը⁴, Հ. Թովնյանը⁵, Մ. Ղազարյանը⁶, Ժ. Կոստեր⁷,
Յ. Մարկվարտը⁸ և Մ. Արեղյանը⁹: Ղևոնդի մասին իր մանրամասն ուսում-
նասիրության¹⁰ մեջ Ն. Ալիևյանը բնութագրում է անում նրա կենսագրու-

1 Արշալանը արարաց ի Հայո, արարեալ Ղևոնդ վարդապետի Հայոց,
ի լոյս բնագրաց Կ. Վ. Շահնագարեանց, Փարիզ, 1857, էջ 10—18: Կ. Շահ-
նագարյանցը Փարիզում հրատարակեց հայ պատմիչների մի ամբողջ շարք:

2 История халифов варданета Гевонда — писателя VIII в.
/К. Патканян/, СПб, 1862, стр. III—XI.

3 Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար), Վենետիկ,
1886, էջ 478—480:

4 Ղ. Ալիջան, Հայագիտում, Վենետիկ, 1901, էջ 76—77:

5 Н. Thopdschian, Die inneren Zustände von Armenien unter
Asot I, Halle, 1904, S. 4:

6 M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft,
Marburg, 1903.

7 J. Laurent, L'Armenie entre Byzance et l'Islam, Paris, 1919,
p. 84.

8 Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղազրութիւնը, Քարզմ. Հ.
Ս. Հայագետ. Վիեննա, 1911, էջ 68:

9 Մ. Արեղյան, Հայոց հին դրականության պատմություն, Ա. (Երկեր
Գ), Երևան, 1968, էջ 473—479:

10 Ն. Ալիևյան, Ղևոնդ երեց պատմագիր, Մասնագրական հետազո-
տութիւններ, Երև. Գ, Վիեննա, 1930, էջ 34—43:

թյունը, ձեռագրերը, աղբյուրները և այլն: Զանգվածներ հեռագրված
են Օմարի և Լևոն իսլամները: Ուսումնասիրության երկուսը մա-
տում Ն. Ալիևյանը այն միտք է հայտնում, թե Մովսես Խորենացու Որր
Ղևոնդ երեցի Պատմության վերջաբանն է եղել: Ավելի ստաջ գեղով՝ հա
նայնիակ նույնացում է Մովսես Խորենացուն և Ղևոնդ երեցին: Ինչհան
էլ անհավանական են այս տեսակետները, համեմատյան դեպք Ն. Ալիևյանի
վերլուծումը Ղևոնդի Պատմության ուսումնասիրման համար հետաքրքա-
կան շատ էջեր մեջ:

Նորագույն ուսումնասիրությունը, Ղևոնդի Պատմության և մանավանդ
նրա գրում գեղեցիկ թղթերի մասին, պատկանում է Ա. Ջեֆրիին, որի
դիտարկումները հիշյալ թղթերի մասին արժեքավոր են և հետաքրքա-
կան:

Ղևոնդ աղբյուրներ էլ ունի, և նազի, իր իսկ վկայությամբ, հաճախ
տիպահատես և ակոնջալար է եղել իր նկարագրած անցուցաներին: Հենց
որս հեռանակ է, որ Ը դարի այն դեպքերը, որոնց ժամանակակից է,
մանրամասն և նշգրիտ է նկարագրում, իսկ է դարի մասին իր խոսքը հա-
կիրն է:

Սակայն, իրական է, որ վաղ միջնադարի պատմագրական հարուստ
ժառանգությունը պիտի ազդեր նրա վրա և, իրաք, նրա երկի մեջ ակնբախ
հետքեր են երևում մանավանդ Ազարանգեղոսի պատմության: Հայության
պայքար արաբական խալիֆայության անարգ լծի դեմ հիշեցնում է Հովհի-
սիմյան կույսերի համառ դիմադրությունը շար բունայեթին, և պատմիչը
հաճախ Ազարանգեղոսի խոսքերով համեմատ է իր շարադրանքը: Օրինակ,
եզիկ խալիֆայի հալածանքների մասին խոսելիս՝ Ղևոնդը նշում է, որ նա
ձգտում էր շատ դեմ և համբառակ ընդ վիմին հաստատանդ, վիմին ինչ
ոչ կարէր ստանալ, բայց ինչն առ վիմին խորոտակեցաւ: Սա գրքի
բառացի կրկնությունն է Ազարանգեղոսի խոսքերի³: Ղևոնդը հավանաբար
օգտագործել է նաև վկայագրական գրվածքներ և հենց Մոհակ ու Համա-
գասաղ Արմուրի եղբայրների վկայագրությունն իր պատմության էջե-
րում սերտ կապ ունի նման գրվածքների հետ: Մեծ է Ասովածաշնի
սեական ազդեցությունը Ղևոնդի վրա:

Թեև մի ժամանակ կասկածելի է թվացել Ղևոնդի կապը նրա նախորդ
Սեբեոսի հետ, այսուհանդերձ այժմ կարելի է համոզիչ համարել Հ. Թովն-
յանի և Ն. Ալիևյանի այն տեսակետը, որ Ղևոնդը ծանոթ է եղել Սեբեոսի
պատմությանը: Ղևոնդը շարունակույց է Սեբեոսի, բայց մտ քառամյա
մի ժամանակաշրջան (640—660 մասվարապես) կրկնվում է երկուսի
մտ, և հենց այս տարիների դեպքերը շարադրելիս՝ Ղևոնդը ցույց է տա-
լիս իր ծանոթությունը Սեբեոսին: Ղևոնդը այստեղ ոչ միայն օգտվում է

¹ A. Jeffery, Ghevond's text of the correspondance between
Umar II and Leo III, Harvard Theological Review, 37 (1944), p. 269—
332.

² Պատմութիւն Ղևոնդեայ, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 100:

³ Ազարանգեղայ Պատմութիւն հայոց, 1909, պարթ. 80—81:

ղեկները (առաք խալիֆաների նվաճումները և առաջին արշավանքները Հայաստան) նկարագրությունից, այլև երբեմն սեփական հիմնարկում կա երկուսի միջև, բեև, բնդհանրապես, հարուստությամբ օգտվելով իր նախորդից, Առեղը ձգտում է աննկատելի դարձնել իր կախումը Սեբեոսից: Ե. Ալիեյանն այն ենթադրությունն է անում, թե Առեղն իր Նեոֆի տակ ունեցել է նաև խալիֆաների մի ժամանակագրություն (ըստ երևույթի՝ սրաբերեն), սակայն ընդհանրապես հայ պատմագրության արաբականի հետ ունեցած առեղային հարցը դեռ մշտնապատ է: Առաք պատմագրությունը է դարում դեռ չէր կազմավորված և ղովար է ասել, թե ինչպիսի արհայացանի կամ ժամանակագրություն կարող էր ծանոթ լինել հայ մատենագիրներին:

* * *

Առեղը ապրել է ստեղծագործել է պատմական իրադարձություններում հարուստ ժամանակաշրջանում, երբ Արևելքի պատմության մեջ մեծ ներդաշրջում կատարվեց: Մնունը առավ մի մարտական կրոն և մի նոր գիշատիչ պետություն՝ խալիֆայությունը:

Է դարում Մուսուլմանների շարժումը նոր կրոնի դրոշի տակ միավորվեցին Աբաբիայի վաչկատուն ցեղերը և սրբազան պայաֆաի (չիհադ) դարս կլան բնդդեմ դրացի երկրները: Անապատի ցեղերը ներխուժեցին բարեբեհ Ասորիք ու Միջագետք: Ժամանակն այնքան հարմար էր, որ առանց մեծ զժվարության նրանք իրականացրին իրենց ցանկությունները: Երկարատև պատերազմներից ուժասպառ էին եղել Իրանն ու Բյուզանդիան:

Օմար խալիֆայի (634—644) իշխանության տարբ տարիները հազարանակների մի շրջան դարձան: Իրար Լուրից նվաճվեցին Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքը, եգիպտոսը և Իրանի մի մասը: Նրա հաջորդ Օմարի օրոք (644—656) նվաճվեցին Իրանի բոլոր նահանգները, ինչպես նաև Հայաստանը (ժամանակավորապես): Արաբները եգիպտոսից անցան Լիբիա և ապա՝ Եյուսիսային Աֆրիկա:

Ալի խալիֆայի (656—661) և Ասորիքի կառավար Մուավիայի միջև պայաբար դաճողոցներից արշավանքների հուսմամբ, սակայն Մուավիայի խալիֆա դաճալուց հետո արաբներն արդեն լուրջ բարոսմենն ունեցան Բյուզանդիայի հետ: 669 թվականին Երանի արդեն բախում էին Կ. Պոլսի դռները Քաղկեդոնի կողմից: Մուավիայի մահվամբ թեև Օմարյան պետության մեջ երկպառակություններ սկսեցին, սակայն Աբդ ալ-Մալիքը (685—705) վերջնականապես կազմակերպեց խալիֆայությունը և Բյուզանդիայի դեմ հաղթանակներից հետո նվաճեց Հայաստանը հաճախ երկրներով:

Արաբական խալիֆայության լուծը դարեր շարունակ մաշեց հայասակ ժողովուրդներին, և պատահական չէ, որ նրանց դեմ մղած պայաբարում ծնվեցին մի շարք ժողովուրդների դյուցազնավարներ՝ հայկական «Մանուս ծոները», բյուզանդական «Դիգենիս Ակրիտասը», ֆրանսիական «Ռալանդի երգը» և վերջապես սլավոնական շեմ Սիդի երգը:

* * *
Երբ արաբներն իրենց առաջին արշավներն էին կատարում Հայաստան, երկիրը բաժանված էր Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի միջև: 629 թվականի հաշտությունից հետո արևմտյան բաժինը կատարում էր Հայոց պարսիկը, նուսաժայր ունենալով Քեղզասուպոլիսը (Կարեն քաղաքը), իսկ արևելյանը՝ Հայոց մարզպանը, Դվինն ունենալով որպես կենտրոն:

Խալիֆայության գործերի հաղթարշավից շախախվեցին Սասանյան Իրանն ու Բյուզանդիան: Հայաստանի արևելյան բաժնից վերացավ իրանական տիրապետությունը, իսկ արևմտյան մասում բուլղացավ բյուզանդական լուծը, և 638 թվականին Հայաստանը միավորվեց Հայոց իշխան Քեղզարոս Ռշտունու գլխավորությամբ: Նեղվելով արաբների ներխուժումներից և Բյուզանդիայի նենգ քաղաքականությունից, Քեղզարոս Ռշտունին վճռական քայլի դիմեց, 652 թվականին դաշինք կնքելով խալիֆայության հետ և Հայաստանը բոս էսրյան վերածելով շեզմ իշխանապետության:

Քեղզարոս կնքվեցին Երկու մեծ պետությունների հարձակումները, այսուհանդերձ Մուավիա խալիֆան 661 թվականին վերահաստատեց 652 թվականի դաշնագիրը, և Հայոց իշխան դարձավ Գրիգոր Մամիկոնյանը: Նրա Բասակյա իշխանության տարիներին Հայաստանը բարգավաճեց ու զարգացավ: Դեռ արաբական արշավանքների խռովահույզ տարիներին ներսեռ Տայնից կարողիկոսը ավարտել էր Ջվարբեց տանարի շինարարությունը, իսկ Գրիգոր Մամիկոնյանն իր նուսաժայր Արունում կառուցեց փառահեղ տանար՝ կողմին իշխանական պալատ:

Է դարում Հայաստանը մի իշխանապետություն էր, որի տիրակալ Հայոց իշխանը ընտրվում էր Եսխարարաց ժողովում և ապա հաստատվում և տիրապետեց պատեմ կայսրից կամ խալիֆայից: Մշտական նստավայր չունեց Հայոց իշխանը, քանի որ անեն իշխանապետ նստում էր իր տիրայիններում, Քեղզարոս Ռշտունին՝ Ադրամարում, Համազասպ և Գրիգոր Մամիկոնյանները՝ Արունում, Աշոտ Ռազմասունին՝ Գարույնում, իսկ ներսեռ կամսարականը՝ Մարմեսում (երվանդաշատ): Կիսանկախ էր Հայոց իշխանապետությունը, իսկ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության վերջին տարիներին և նրա հաջորդ Աշոտ Ռազմասունու օրերին (685—689) Հայաստանը լրիվ անկախություն էր վայելում: Է դարի երկրորդ կեսում տիրող խաղաղությունը մեծապես նպաստեց տնտեսական կյանքի զարգացմանը: Տարանցիկ առևտուրը Իրանի և Փոքր Ասիայի միջև անցնում էր Արաբիա հովտով, հող ստեղծելով հին քաղաքների զարգացման և ետերի ստեղծման համար, որոնցից կարելի է հիշել Դվինը, Վաղարշապատը, Արունը, Երվանդաշատը (Մարմես) և Կարեն քաղաքը: Ստեղծվեցին հայկական նարտարապետության դասական կորոզները, և ծաղկեց հայ մատենագրությունը, առյուժ այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Սեբեոսը և Անանիա Շիրակացին:

Հայաստանը է դարում բնթանում էր քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման վերասույց ուղիով, սակայն արաբական նվաճումը

բնօրհասեց նրա բնականոն անը և բարգաւաճեց: Անապատի խորշակի նման անցան արաբական զորքերը 701 թվականին հայկական լեռնաշխարհով: Չորսվար Մուսամմադ իբն Մուսանը Ջերմաձորից ու Մակիցի մինչև Ահան ու Սյունիք ապաստակեց ու ազեկեց: Նրա բռնած տեղակալը՝ սասիկանը, նայնիակ դավ էր նյութում բնաջնջելու հայ նախարարական տանները:

Նեկը սոսիսի արագայրից հեռացող հայ նախարարների խումբը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ ակամա պայքարի բռնվեց նեապեղոզ բշտումի զնդերի հետ, սակայն Վարզանկերտում այնպիսի պարտության մասունց արաբներին, որ ապստամբության արիք բարձրացավ ամբողջ լեռնաշխարհում: Հայերն սպանեցին արաբ սասիկանին:

Ճնշվեց բնօրհասը, սակայն Դամասկոսի արևունիքը զգաց դիմադրության ուժը և զիջեց: Նոր սոսիկան Արդ ալ-Ազիզը ետ հրավիրեց նեապեղոզ նախարարներին, վերստին հանաչելով նրանց հողատիրական իրավունքները: Շինականը համակերպվեց նոր իշխանությանը, լծվեց աշխատանքի, վճարելով գլխահարկ ու հողահարկ, կատարելով մարզահարկ և այլ պարտական: Տասնհինգ ճագարանաց այրածին նախարարների գլխավորությամբ մասնակցում էր խալիֆայության պատերազմներին, ժանկվանը հյուսիսից սպառնացող խազարների դեմ:

Նվաճված հողերից կազմվեց մի քնդարձակ ճահանգ, որի մէջ մտնում էին Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, Շիրվանը և Գարբանդը: Տատանական շէր, որ այս նոր վարչական միավորը կոչվում էր Արմինիա, ամեն որ գլխավոր բաղկացուցիչ մասը Հայաստանն էր, և նրա մայրաքաղաքն էր Կոնստանդուպոլիսը: Այստեղ կար փողերանոց, որը դրամներ էր բաղադրում՝ արծաթ և ոսկին, Հայաստան (Արմինիա) և Դիլին (Գարբի) մաշտաբուրյամբ:

Դեռևս է դարի սկզբից Հայաստանում առաջնության համար մարտնչող Բագրատունիները Ո ղարուն ժառանգաբար իրենց ձեռնում էին պահում Հայոց իշխանի պաշտոնը, և նրա Սմբատ Բագրատունին իշխանից հետո Հայոց պատրիկ հանաչվեց Աշոտ Բագրատունին, ընդգծեցին Դեթգոր և Գավիթ Մամիկոնյան եղբայրները, շկամենալով հրաժարվել Ե—է դարերում իրենց տոհմի վայելած բացառիկ իրավունքներից:

Ահա այսպիսի լարված իրադրության մեջ սկիզբ առավ 747—750 թվականների հայկական ապստամբությունը Օմայան խալիֆայության դեմ: Նաբոնուր սարաձվից ամեն կողմ, սոսիսի կանգնեց Սասունը: Մակայն միջնախարարական երկպառակությունը և շինականների ընդդուրը անսխաբան հայաբարձները դեմ որոշեցին այս շարժման անհաջող վախճանը:

Նորից ծանրացավ բունակալության լուծը նոր տերակալների՝ Աբբասյանների ձեռքի տակ: Մահը, անհանդուրժելի հարկապահանջությունը օր-օրապես էր անում շինականին, և անգի Աբբասյան Աբու Ամարը ոչ միայն ավելացրեց հարկերը, այլև կանխիկ արծաթով էր տուրքը պահանջում: Ապստամբության երթարկվեց Վասպուրականը, որի իշխան Գագիկ Արծառունին, ի վերջու շղիմանալով անհավասար պայքարին, փախվեց Եկան ամրոցում: Ապանվեց Հայոց իշխան Մահակ Բագրատունին և հարձակիս գրավվեց նրա հարստությունը:

Վանդիկ նկարագրած արանմիկ տեսարանները՝ ժողովրդի ամառի խոշտանգումները Եսեղանների կոչվից, բավական են համոզելու, թե ինչպես հայ նախարարն ու շինականը Լաջ դիսակցելով ճանդերն, որ Աբբասյան խալիֆայությունը իր հզորության գագաթնակետին էր գտնվում, նախընտրեցին Բաջրի մահը, քան նվաստացած կյանքը և 774—775 թվականներին Մուսուլի Մամիկոնյանի գլխավորությամբ դուրս եկան անհավասար գոտեմարտի: Ամր իբն Իսմայիլ զորավարի երեսուն հազարանոց զորքի դիմաց հայ ապստամբների հինգ հազարանոց զորքը Արձնիի հալածամարտում կենաց և մահու պայքար մղեց, առգրի դարձում բողոքելով երեք հազար Բաջրի նահատակների, որոնց մեջ էին Մուսուլի Մամիկոնյանը, սպարապետ Սմբատ Բագրատունին և շատ ուրիշներ:

Ապստամբությանը հաջորդող ծանր ապրիներին, նրա Հայոց իշխան էր Աշոտ Բագրատունին, խալիֆայության գրառվիչ բախտները ամենա կատարում էին ժողովրդին, ձգանելով ամեն կերպ բնաջնջել հայ ապստամբությունը: Արմինիայի սասիկանը խազարների դեմ կոմող հայկական այրուծին այնպիսի զոճարին պայմանների մեջ գրեց, որ բնաջնջեց նեմեղաբուրը, զոհվեցին Հայոց իշխանը՝ Տանա Անձաղին, հայոց սպարապետը և այլ զորավարներ:

Ընդհատ լեռնաշխարհը բնկնելու և Քյուստանդուպի դեմ պայքարը ուժեղացնելու նպատակով խալիֆայությունը հայկական որոշ զավաճան՝ լյրեց արաբ զադրական ցեղերով, որոնց շեռեց զոհված հայ նախարարների ձեռնադրանից իջված հողերը: Մահը հարկապահանջությունը հասավ այնպիսի աստիճանի, որ արաբ պատմիչների վկայությամբ Արմինիան Հարուն ալ-Մաշիկը ամիրապետի օրոք տարեկան վճարում էր ասաներեք միլիոն արծաթ դրամ հարկ, մինչդեռ սովորաբար չարս միլիոն էր վճարում: Անշունների հետևանքով առավել ևս ուժեղացավ հայ ապստամբությանը և արաբազորք Քյուստանդուպ, որը շափազանց սղտակի հետևանքներն ունեցավ Հայաստանի համար: Կերպարանափոխվեց հայ նախարարական տների կազմը և նրանց տիրույթների փառանքը: Ասպարեզից դուրս եկան այնպիսի նախարարական տներ, որոնք թե՛ Արշակունյաց յագավորության ժամանակաշրջանում, թե՛ է—է դարերում կարևոր դեր էին խաղում երկրի փառանքական կյանքում: Գրեթե շրջան Մամիկոնյանները, Կամսարականները, Ոշտունիները և այլն:

Մզոճակաշարին դրությունը մասամբ մեղմացավ, նրա թ ղարի սկզբին հայ նախարարական տները նորից հնարավորություն գտան ապարեզ իջնելու: Դեռ Հարունի օրոք խալիֆայության մեջ սկիզբ էին առել ներքին խլրատումներ, իսկ նրա մահվանից (809) հետո երկու առիթների միջև պայքարը շուտից փառլուս նեարավորություն սովեց ննշված ժողովուրդներին:

Ասպարեզ իջան Բագրատունիները, որոնք հայտնի էին ղև Արսաշեսյան բազավորության ժամանակաշրջանից, իսկ Արշակունյաց Հայաստանի բազադիս ապստամբներն էին: Տիրանալով Հայաստանի հողերի զգալի մասին՝ Շիրակից ու Աջոցից մինչև Մակ և Այրարատի Ոստան գավառից մինչև Զարհուր Հայք, նրանք դարձան Հայաստանի ամենահզոր նախարարական տուներ, լրիվ մեկտապանելով մեղակից Մամիկոնյաններին:

Աշտ Մսակեր Բագրատունին դեռ 790 թվականից (Մատավարապետ) Հայոց իշխանի դեր էր կատարում, իսկ 804 թվականին ամիրապետը հաճախեց նրա իշխանությունը: Նա զգույն արար ամիրա Ջահանգիրին, որն իշխանության հավակնություններ ուներ: Առաջիկ փաստվար էր Աշտի արգիւն՝ Բագրատա իշխանաց իշխանը (պատրիկների պատրիկ), որի իշխանությանը ենթակա էր ամբողջ Արմինիա նահանգը, բանգի նա համարվում էր ռափկանի տեղակալը: Ըստ արար պատմիչ Թարսեթի վկայության, նա պահանջել էր նաև Արմինիայի ռափկանի պաշտոնը: Ասպարեզ իշան նաև Արծրունի և Սյունի իշխանները, որանք ավելի ամբողջական վասալառական և Մյունիաց նախնաներում, ինչպես նաև Արցախի իշխանական տանը:

Թովար էր Արցախիների համար հաշտվել նման իրադրության ներքո: 850 թվականին Մուսավաֆիի ամիրապետը Լաստիկ հանձնառուությանը Հայաստան ուղարկեց Սրբա Մահիդ ռափկանին: Սակայն Բագրատա Բագրատունու հրամանով նրան դիմավորեցին հարավային սահմանների վրա և մի կերպ ետ ուղարկեցին: Հաջորդ տարին ուղարկված նրա արդի Յուսուֆը, Էրբ նենգորեն ձերբակալեց իշխանաց իշխանին, խոսքի լեռնականները Հովնան Խոսրոսի գլխավորությամբ գրոհեցին Մաշ Բաղաբը, և մի լեռնակառն աղետով խոցեց եկեղեցում բաժնված ռափկանին:

Կալիֆայության տիրապետության վերջին մեծ աղետն էր Բուլղա գոտավարի գլխավորությամբ բաղմա՛ւզար զորքի ներխուժումը Հայաստան: Առաջին շուր զորեան Սառունի լեռնակառնները: Աշտ Արծրունու հերոսական դիմադրությունը նկատ ամբողջում հերթին գոտությունների հետևանքով վերջացավ կամավոր անձնատվությանը: Գազանարարս քրեմսին բնայեռն ասպատակ տիրեց հայկական զավառներում, այսուհանդերձ շատ անգոր գտնվեց Արցախական աշխարհում, որ ծայրի իշխանը զայնց նրա գործերը: Նորից ռափ կանգնեց վասալառականը՝ Գորգեն Ապրակիների գլխավորությամբ: Աստուհի. վասալառականի և Արցախի հերոսական պայքարը իր փայլուն արտացոլումը գտավ հայ հերոսական վեպի՝ Մսունա ծանրի, հերոսապատում զբվագներում:

Հայ ժողովրդի բանտ պայքարը հասավ իր տրամաբանական վախճանին: Մուսավաֆիի սպանությանը (881) թուլացավ խալիֆայական լուծը, և դիվանագիտական հմտությամբ օժտված Աշտ Բագրատունին կարողացավ ազատագրել Հայաստանն օտար լծից ու վերականգնել Հայոց անկախ պետականությունը՝ Բագրատունյաց քաղաքությունը:

Ահա այս իստվամուտյո շրջանից մտտ մեկուկես զար տեղ ու մի ժամանակաշատված և եկարագրում Անտղը իր պատմության մեջ:



Անտղի Պատմության բովանդակությունը, դասելով նրա մասին պատմիչների վկայություններից, հիմնականում անաղաբս է մեզ հասել: Որոշ վեհերի առարկա է դարձել միայն նրա Պատմության վերեագիրը: Անտղի Պատմության ձեռագրերում այժմ գոյություն ունեցող վեր-

նագիրը, որ նրա աշխատանքը բնորոշում է որպես Մաննեդի և արարաց արշավանքների պատմություն, բովանդ էր յն ժամ վերեագիրը չէ: Հնուհարհախան են հայ պատմիչների վկայությունները Անտղի գրքի մասին: Աստղիք նրա բովանդակությունը այսպես է համառոտում՝ «Պատմություն Անտղ երկրու, որ ինչ վասնճանկաց եկիցն և անցից Հայոց ի նացունց բռնությունը», իսկ կիրակոս Գանձակեցիին այն կոչում է. «Անտղ երկրու Պատմություն, որ գոր ինչ գործեցին Մաննեհ և արոտակալ նորս բնո աշխարհս ամենայն և առանկ ևս բնո սոգս Հայոց»²:

Վերեագրի փոփոխվելու պատճառը Ն. Ալիկյանը համարում է Անտղի մեզ հասած հնագույն ձեռագրի առաջին էջի կորած լինելը: Ըստ նրա՝ գրիչը, կամենալով վերստին քննարկելի առաջին էջի բովանդակությունը, չի կորոզացել վերականգնել հին վերեագիրը³: Թվում է, թե պատմության բուն վերագիրը պետք է լինի նրա հիշատակարանում պահված անունը՝ «Վարդապետություն Անտղի վասն ժամանակագրաց տանս Թարգմայ»: «Գեաք է նշել, որ Անտղի Պատմության սկիզբը ևս վնասված է: Այս բանը երևում է մանավանդ այն դեպքում, երբ Մամուկ Անեցին ֆաղվածարս մեջ է բերում Անտղից տողեր, որանք Անտղի մոտ ավելի հակիրեն են: Հավանաբար Անտղը պետք է ունեցած լիներ մի ընծայական մատր (նեռանական) և որոշ տողեր Մաննեդի մասին: Այս տարիվ Հ. Բ. Սարգսյանը նույնիսկ փորձեց Անտունի (կեղծ Մեքենա) արհայացանի վերագրել Անտղ երեցին, հերքողելով, որ դա նախապես գտնվել է նրա Պատմության սկզբում⁴:

Անտղի Պատմության սկզբնական հատվածը հակիրեն է մանավանդ Սերնոսի պատմության հետ համարելիս արարիները: Թեև պետք է նշել, որ Անտղը այստեղ լրացնում է իր նախորդին և դրա շնորհիվ հնարավոր է դառնում ճշգրիտ ու մանրամասն տեղեկություններ հաղել արարական առաջին արշավանքների շրջանի մասին: Անտղը խոսում է 640 թվականի արարական առաջին (Ջորա պակակի վրայով) արշավանքի մասին, միայն այն համարելով երկրորդը: Նա մանրամասն նկարագրում է 642/43 թվականների Արարատականից եկող արշավանքը, այն համարելով առաջին արշավանքը: Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին ձգտում էր կանոնավոր պաշտպանություն կազմակերպել բշնամու դեմ, սակայն բյուզանդացի Պրակոպիոս գուրավարի անբարյացակամություն պատճառով հնարավոր չնկատվեց նա մղել բշնամուն: Առաքների երրորդ արշավանքը Անտղը դնում է Ջորա պակակի նախադրեթով եկած արշավանքից տասը տարի անց, այսինքն 650 թվականին:

1 Ստեփանոսի Տարսեցուց Աստղիկան, Պատմութիւն Տիեզերական, աշխ. Ստ. Մալխասեանց, Պետերբուրգ, 1885, էջ 7:
2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Միխիլ-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 7:
3 Ն. Ալիկյան, Անտղ երեց պատմագիր, էջ 464:
4 Բ. Սարգսյան, Միմուն Ապարանեցիին և կեղծ Մեքենայի տեղեկությունները, Բազմազեպ, 1915, էջ 38:

Արաբները պաշարեցին Կոզովիս գավառի Արծափ ամրոցը և արդեն գրավելու վրա էին, երբ վրա հասավ Քեոզարս Ռշտունին և ջախջախելով՝ երկրից վաարեց նրանց:

661 թվականից, այսինքն օմայյանների իշխանության գլուխ անցնելուց հետո պատահած դեպքերը Ղևոնդն առուելի մանրամասն և ինֆուսայն է նկարագրում, քանի որ Սեբեոսի պատմությունը այստեղ կանգ է առնում:

Ելենելով նոր իրադրությունից՝ Մուավիան կամենում էր Քյուվանդիայի դեմ պայքարում ապահովել իր քիկունքը Հայկական լեռնաշխարհում և վերջապես 652 թվականին Քեոզարս Ռշտունու հետ կնքած իր պայմանագիրը (որի մասին միայն Սեբեոսն է խոսում)՝ հակառակ Գրիգոր Լեա փկանյանին Հայոց իշխան: Նրա իշխանության վերջին տարում հարձակվեցին խագարները, և այդ պայքարում նա սղախեց: Նրան հաջողեց Աշոտ Քագրատունին, որի օրոք հարձակումներ գործեցին թե՛ բյուզանդացիք, թե՛ արաբները: Զարմանալիորեն Ղևոնդը չի հիշում Հայոց իշխան Ներսես Կամսարականին, որը հաջողել էր Աշոտ Քագրատունու:

Հասկապես արժեքավոր են Ղևոնդի անդեկայությունները՝ արաբների կողմից Հայաստանի վերջնական նվաճման մասին, որի հավաստիությունը հաստատվում է բյուզանդացի (Քեոփանես) և արաբ (Քալազարի, Իբն ալ-Ասիր) պատմիչների զուգահեռ նվյալներով: Նա մանրամասն նկարագրում է արաբ զորավար Մուհամմադ իբն Մուսուբի արշավանքը և երկարատև կռիվները Հայաստանում ու հարևան ճանաչվածներում: 703 թվականին հայկական ապստամբությունը խալիֆայության դեմ Ղևոնդը նկարագրում է ժամանակակից ակնհայտի հեջրությունը և մանրամասնաբար: Նա մանրամասն է նկարագրում նաև արաբ-բյուզանդական պատերազմները, և դա կարծել է տալիս, որ նա Փոքր Ասիայում եղել է և ծանոթացել անգույարձերին:

Արաբների և հույների երկարատև պայքարը ծավալվում էր Փոքր Ասիայի արևելյան մասերում: Արաբներն անեին հասուկ վարչական միավոր, որը կոչվում էր սահմանային գոտի (նկիմ ալ-սուլուր) և բաժանվում էր երկու միավորի՝ Ասարիքի (Շամ) սահմանային գոտի Ցարուն կենտրոնով և Միջագետքի (Ջազիրա) սահմանային գոտի Միլիտիեն գլխավոր և արդյունավետ: Առաջինն ընդգրկում էր Կիլիկիան, իսկ երկրորդը՝ Փոքր Հայքը և որոշ մասեր Քարձը Հայքի և Զարհոյ Հայքի (Մոփ) նահանգներից:

Ղևոնդը նկարագրում է երկու հզոր պիսոյանների գոտեմարտը Փոքր Ասիայում, տալով այնպիսի մանրամասներ, որոնք լրացնում են արաբ և հույն հեղինակների տվյալները: Նա թեև էիչ բան է հաջողում էր դարի ընդհարումների մասին, սակայն Չ դարի վերաբերյալ նա հարուստ տեղեկություններ է տալիս, նկարագրելով Առն Գ Իսրավրացու ժամանակ մղված պատերազմները, ինչպես նաև դարի երկրորդ կեսի ընդհարումները:

Խաղաղների դեմ արաբների մղած պատերազմները Ղևոնդի հատուկ ուշադրության արժանի են: Խալիֆայության սահմանային կարևոր ամրությունները Գարբանդի շուրջը տեղի ունեցած այս կռիվները նկարագրելիս՝

նա տալիս է այնպիսի մանրամասներ, որոնք լրացնում են արաբ պատմիչների (Յակուբի, Քալազարի, Իբն ալ-Ասիր) հաջողած տվյալները, և կարևոր աղբյուր հանդիսանում արաբ-խաղաղական պատերազմները ուսումնասիրելու համար. մասնակցում էր նաև Հայոց այրուծին՝ Աշոտ պատրիկ Քագրատունու և Տանաս Անձևացու ժամանակ:

Առաջին կարևոր իրադրությունը, որին Ղևոնդը ակնհայտաբան-ծանախակից էր, 747—750 թվականներին հայկական ապստամբությունն է արաբների դեմ: Այստեղ պատմիչը բացահայտորեն շարադրում է իր ֆուդալական կողմնորոշումը և չի բացցնում համակրանքը Քագրատունիների զգալի վարձագծին: Ղևոնդը արգարացնում է հայոց իշխան Աշոտ Քագրատունու և Քալազարիի համարձակ և բոլորովին համաձայն չէ Գրիգոր և Գալիք Մամիկոնյանների համարձակ և հախուռն գործելակերպին: Նախարարաց ժողովում Աշոտ Քագրատունին փորձում էր դիվանագիտական նկուկայամբ համոզել հախարարներին՝ հրաժարվել ապստամբությունից, բայց տեսնելով, որ անօգուտ է, ստիպված է ինձում միանալու շահագուտ խորհրդին: Շուտով նորից են սղում Էսրաբությունները Գրիգորի և Աշոտի միջև, որը և ողբերգական վախճան է անենում: Ղևոնդը գաղապարում է Գրիգորի ընթացքը, իսկ Աշոտին համարում հայոց ազգի փառքը:

Փաստիչ այս տրամադրությունները հստակ երևան են գալիս նաև 774—775 թթ. ապստամբության նկարագրության մեջ: Խալիֆայության դաժան ֆազակականությունը երկիրը ֆայձայման էր հասցրել, հարկանանները շրջում էին գավառն գավառ, կոչապետելով շինականին, և անա ապստամբություն էր բռնկվում Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Փաստիչը իր պաշտպան իշխանական տան ներկայացուցիչ Աշոտ Քագրատունու հետ համաձայն էր, որ անիմաստ էր ապստամբել այն ժամանակ, երբ ստիպել իր հզորության գազարնակեսին էր հասել: Այսուհանգեքն նա հակակրանքով չի հիշում Մուշեղ Մամիկոնյանին կամ ապստամբության այլ դեկլարաներին, որոնց մեջ էր սպառապետ Սմբատ Քագրատունին: Ասկայն սոսկ Քագրատունի իշխանի մասնակցությունը չէ, որ որոշում էր Ղևոնդի տրամադրությունը, այլ համաժողովրդական բնույթն այս ապստամբության: Ըմբռանության արշավնու ուղին և խանձմության զգույսվոր դիրժորոշումը գործունեության տարբեր միջոցներ էին, տարբեր դրոշակներ, սակայն նպատակը մեկ էր՝ Հայաստանի ինֆուրոյնություն պահպանումը: Եվ անա այս սրբազան գազարնակեսի վերջն համակում է ապստամբության նախապայմանը Ղևոնդին: Երբ մտնեում էր հայ ռազմիկների վճռական մարտի պահը, զուտը և ստանալուն Ղևոնդը արդեն կորցնում է իրեն, նրա համակրանքը ամբողջովին ապստամբների կողմն է: Աշխատության մեջ այս էջերը բացառիկ տեղ ունեն իրենց կրճատությամբ և գեղարվեստական հուզականությամբ:

Ղևոնդը ոգեշնչված է նկարագրում հայոց վերջին կռիվը երեսուն հազարանոց արաբական զորքի դեմ, Բազեանդի (Արձնի) հակառակմարտը 775 թվականի հրետից ամսի 14-ին, այսինքն՝ ապրիլի 25-ին: Արևածաղին սկսված պատերազմը: Երբ հակառակորդներն իբար բախվեցին, նախ

բազում ունեց հարվածներ ավելց հայոց գունդը և փախաւոր մասնեց
բշտամիներին: Սակայն զգնական ուժ ստացած բշտամու բվական գերա-
զանցարյան առի հայ ռազմիկները դժվարին կացութեան մեջ են ընկնում
և ֆաշիստներու իրար հետեւյալ խոսքերով: «Փաշարչամբ ժնեներ մեր աշ-
խարհի և մեր ազգի համար, և բոլ մեր այրերը շտեմեն մեր սրբաւան-
ների և մեր կառուած փառալուծման վայրերի ստից կոխան լինեն ու
պղծվիլը, այլ բշտամիների սուր բոլ հոխ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա
բոլ անեն՝ ինչ կկամենան»:

Այստամբարչանը հաշարդող տաննիկգամյա դիպիերի նկարագրու-
թյանը Առնդի մտ մալլ է և չոր: Ետից սկսում են բնութայուններ ու
կազմուցա, նահատակվում են Մահակ և Համազասպ Արծրունի երբայրենե-
րը, մեծեղով ունեալ Բրստանեական հավատը: Հայ եկեղեցական զայրի
կողմուստի նկարագրութեամբ էլ ավարտում է Առնդը իր գառն զրամու-
թյունը՝ առանց նույնիսկ հանուն վերջաբեր:

Առնդը առաջին հայ պատմիչն է, որ զգաւորման է հակվական
բվականը: Ետից առաջ հայ պատմիչները, սկսած Ե դարից, պատմա-
կան դիպիերի ժամանակագրութեանը որոշում են բաւ աւրաների (հայ
կամ օտար) իշխանութեան տարիներին: Առնդը դիպիերի ժամանակը որո-
շում է Բյուզանդիայի կայսրերի և իսլամիկների իշխանութեան տարիներով:
Բայց, միաժամանակ, թեկուզ մի դիպիում պատմելով Արծրունյաց
Մահակ և Համազասպ երբայրենի նահատակութեան մասին, նա ավելագ-
նում է.

«Գործեցաւ այս յիշխանութեանն Մուսէի, յազգայնութեանն Խազմայ,
յուսուս սրբոյ յայտնութեանն տեանն, յարում էր բնակեալս Հայոց ՄԷԻ»:
Այստեղ Առնդը հիշում է նախ օրվա իսլամիքայի և Արմինիայի օստիկանի
ախուհները, ապա հշում է այդ օրվա համապատասխանող տանը և վերջապես
տանիքի վր՝ բաւ հայկական բվականութեան:

Առնդի լեզուն և ոճը տարբեր գնահատականներին են արժանացել մեր
բանասիրութեան մեջ: Երա առաջին հրատարակիչը Կ. Վ. Մանեակարյանցը
համարել է այն «հասարակ հայտնութեան», այսինքն սովորական, հակառակ
այն բանին, որ նրանից առաջ նա Հայկազան բաւարանի հեղինակները
այն համարել են «չստակ և ընտիր հայկաբանութեամբ» օժտված¹: Բայ-
րովին անհավանական է Հ. Գ. Զարգիանայանի բնութայունը. թե «զգրեթե
հասարակաց յոսեց ռեին շտարբերի»², Բանդի Առնդի երկը բարբառա-
յին ոչ մի հետք չունի և, թեկուզ անպահույն, այնուհանդերձ մաքուր գրա-
կան լեզվով է գրված: Ինչ խոսք, Առնդի լեզուն զուտ է, երբեմն հույ-
նիկ չար, այսուհանդերձ հոտակ և ընտիր հայերեն է և շատ հորմար իր
ժամանակաշրջանը արտացոլելու համար:

Առնդը մտայնութեամբ և մտածելակերպով հարազատ զավակն է իր
դարի:

Ը դարում հայ մատենագրութեանը զարգացավ այլ հանապարհով,
Բան Եախարզ դարեւում: Երբ Ե—Է դարերում բարգաւաճում էին հունարե-
նից ու աւորերենից, զարգանում էր բազմակողմանի մատենագրութեանը՝
պատմական, բնագիտական, փիլիսոփայական, ինչպես նաև եկեղեցադա-
վանաբանական, ապա Ը դարում բնագիտական և փիլիսոփայական հյու-
դերը շին զարգանում, իսկ բարգաւաճութեանը սահմանափակվում են:
Տիրապետում է եկեղեցական-դավանաբանական գրականութեանը: Միակ
մատենագիրը, որը դեռ կապված է Ե—Է դարերի հնչյունաւոր տրամագրու-
թյուններին, Մանիսեան Սյունեցին է:

Քայքի մատենագրութեան մեջ այս սահմանափակութեանց, ավելա դա-
րի դասնութեանը և աղետներ իրենց կենին են դնում ժամանակի
մտածողների վրա:

Առնդը հակառակագրութեան է: Ամեն մի արտք կամ աղետ նախախնա-
մութեան կազմից է սահմանված, ամեն ինչ նախասահմանված է՝ բաւ
մարդիանց առաքիչութեան կամ մոլորութեան: Մարդիանց բայը դժբախ-
տութեանը պարզապես հատուցումն են նրանց փառ արտքի՝ իսկ
հաշոյութեանը նրանց առաքիչութեան վարձատրութեանն են:

Այսուհանդերձ, Առնդը յուր պատմիչ է, նա պատմավոր տեղ ունի հայ
պատմագրութեան մեջ: Եվ նրա արժեքը առաջին ևս ցայտուն է դառնում.
Երբ նկատի ենք ունենում նրա ապրած ժամանակաշրջանը՝ Բաղամկերով և ողբե-
րում Առնդ երեքը կարողանում է շատ բան պնդանել վայր միջնադարի
հայ պատմագրութեան հարուստ ավանդութեանց: Բազմակողմ և ողբե-
րական ժամանակաշրջանի պատմութեանը նա գրի է առել շատ հաճախ
առնական ստեղծարարութեամբ և հանգիստ տրամագրութեամբ: «Մտաւ
սիրտ և անդրադարձ ձեռք պահէր էր.— գրում է Լ. Ակիլյանը.— տեսնելու և
գրի առնելու համար արյունոտ պատմութեանը: Առնդ այդ ֆաշարի պատ-
մագիրը կը հանդիսանա»:

Առնդի Պատմութեանը համեմատարար իրչ ձեռագրերով է մեզ հա-
նել 14 զգալիք: Մտեցից ուրը գտնվում են Երևանի Մաշտոցյան Մա-
տենագրարանում, ընդ որում հնագույնը (Մ 1902) ԺԳ դարից է և հայտնա-
վում է այն հախագրութեամբ օրինակը, օրից ընդօրինակված են մեզ հա-
սած մյուս գրաւորքը: Երևանի ձեռագրերից շարք (Մ Մ 1889, 5501,
3070, 4534) ԺԷ դարից են, իսկ մնացածները՝ ավելի ուշ: Փարիզի «Ազ-
գային գրադարանում» կան անցյալ դարի երկու ընդօրինակութեաններ:
Վենետիկում (Ս. Ղազար) եղած շատ ձեռագրերից երեքը պակասավոր են³:

¹ Մանեակարյանց, էջ 15:
² Նոր բաղբիւր Հայկազան լեզուի, հա, Ա, Վենետիկ, 1836, էջ 14:
³ Գ. Զարգիանայան, Հայկական հին դպրութեան պատմութեան, (Գ—
ԺԳ դար), Վենետիկ, 1886, էջ 479:

¹ Առնդ երեք պատմագիր. էջ 706:
² Առնդի ձեռագրերի նկարագրութեան մասին տե՛ս Ե. ԱԿՈՆՅԱՆ. Ղե-
տնդ երեք պատմագիր, էջ 34—43: Զ. Վ. ԱՐԶՈՒՄՅԱՆՅԱՆ, Քննութիւն 36-

Գծբախարար Առնոյի պատմությունը շուրջ ոչ միայն առավել հին ձեռագրեր, այլև շիան հին պատմափոխներ, որպեսզի գեր դրանց միջոցով ստուգենք մեզ հասած գրչագրերի հարազատությունը:

Առնոյի առաջին հայերեն հրատարակությունը իրականացել է Կ. Շահնազարյանցը 1857 թ. Փարիզում: Եւ իւր ձեռքի տակ է ունեցել էջմիածնի մասնադարանի ժե դարի մի ձեռագիր (№ 3070) ընդօրինակությունը: Դեռ մեկ տարի առաջ Կ. Շահնազարյանցը հրատարակել էր Առնոյի ֆրանսերեն բարգմանությունը²:

Մի քանի տարի անց Պետերբուրգում լույս տեսավ Ք. Պատկանյանի կառուարած ուսերեն բարգմանությունը³:

Երկու ժամանակ անհայտ մեռուց հետո օտար լեզուներով բարգմանվելը արագորեն հայտնի դարձրեց Առնոյին բանասիրական շրջաններում:

Առնոյի բնագրի ավելի ընտիր հրատարակությունը⁴ լույս տեսավ Կ. Նզյանի ջանքերով, սակայն բնագիրը հրատարակության էր պատրաստել Ստ. Մալխասյանը: Այս հրատարակությունը իրականացնելու համար օգտագործվել են թե Կ. Նզյանին պատկանող ժե դ. մի ձեռագիր (4584), թե՛ հնագույն ժԳ դարի 1902 թվահամարը կրող գրչագիր:

Առնոյի պատմության մեջ եղած Յմարի և Առն կայսեր համակները բարգմանված են անգլերենի Ա. Ջեֆրիի կողմից:

Սակայն մինչև այժմ Առնոյը չէր ունեցել աշխարհաբար բարգմանություն: Առյն բարգմանությունը կատարել ենք Ստ. Մալխասյանի պատրաստած բնագրից, հարկ եղած դեպքում նկատի ունենալով նաև ֆրանսերեն, ռուսերեն և անգլերեն վերոնիշյալ բարգմանությունները:

ապրիլի 9 դարու հայ հեղինակ Առնոյ երիցու պատմագրություն, էջմիածին, 1977, Ա, էջ 38—45:

¹ Արշալանք արարաց ի Հայս, արարիալ Առնոյ վարդապետի Հայոց, ի լոյս բնծայեաց Կ. Վ. Շահնազարյանց, Փարիզ, 1857: Այս տպագրության առթիվ տես՝ Н. Petermann, Zeit. der Deutschen Morg. Ges. 1861, s. 39398:

² Histoire des guerres et des conquêtes des Arabes en Arménie, par l'émminent Ghevond, trad. par G. Ghahanazarian, Paris, 1856.

Ֆրանսերեն Թարգմանության առթիվ ֆրանսիացի արևելագետ Մուլլեր գրեց մի կարճ գեղություն, Մասսեաց Ադամի, 1856, էջ 243—244:

³ История халифов вардапета Гевонда — писателя VIII в. /К. Патканян/, СПб, 1862.

⁴ Պատմություն Առնոյի մեծի վարդապետի, Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

Այս հրատարակության առթիվ տես՝ E. Müller, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1888. Թարգմ., Հանդես ամսագրի, 1888, էջ 128—129:

⁵ A. Jeffery, Ghevond's text of the correspondance between Omar II and Leo III, Harvard Theological Review, 37 (1944), p. 269—332.


Թարգմանելով հանդերձ չձեռնիշխալ հրատարակությունից, օգտվել ենք նաև հնագույն (№ 1902) գրչագրից: Այսպես օրինակ, հայկական խոսքով անգլերենը տպագիր օրինակում ԱԱԽԱՅԱՅԱՅ ԺՈՎ է տրված, իսկ մեծ հայերենի ե՛՛ք հնագույն ձեռագրի ԱԱԽԱՅԱՅԱՅ, որը պատմականորեն նիշտ ձև է:

Կ. Շահնազարյանի մտ (թե հայերեն, բնագրում, թե ֆրանսերեն բարգմանության մեջ) Առնոյի Պատմությունը բաժանված է ութ գլխի, որը կամայական գլխակարգության է՝ հարմարեցված վերնագրերով, իսկ Ք. Պատկանյանը ունի ինն գլուխ, դարձյալ հարմարեցված վերնագրերով:

Ս. Մալխասյանը, ըստ 4584 թվահամար ձեռագրի, Առնոյի բնագիրը հրատարակել Ա.—ԽԲ (1—42) գլխակարգությամբ, մինչդեռ մյուս ձեռագրերի (1902, 3070, 5501, 3583) գլխակարգությունը Ա.—ԽԳ (1—49) է, որը ոչ մի հրատարակության մեջ չի արտահայտվել: Բացի այդ 1932 թվահամար ձեռագրում եղած վերնագրերը, որոնք գլխի ճամարից առաջ են զգված և մանր ձեռագրով, իրենցից է համարից ներկ, որպես զլխի առաջին ազգը (կամ ազգեր):

Այս ձեռագրից տպագիր օրինակի մեջ մտցվել է նաև հրա ճիշատակաբանը:

32 043



Գ Լ Ո Ւ Խ Ա

Նախ և առաջ (նրանց մասին), որ ամիր ալ-մուճնիք² կոչվեցին:

[Քսան տարի իշխանութունը ձեռքում պահելուց հետո մեռավ Մահմետը³: Գրանից հետո Մահմետի իշխանութունը փոխանորդեցին Աբու Քաքրը⁴, Ամրը⁵ և Օթմանը⁶, հոռոմները⁷ աստվածընկալ և բարեպաշտ թագավոր Հերակլիսի⁸ տասնմեկերորդ տարում, (և իշխեցին), երեսունութ տարի Քանի դեռ կենդանի էր աստվածապսակալ Հերակլիսը, նրանք չէին կարողանում ասպատակ սփռել Հրեաստանի վրա, քանզի նրա քաջության համբավը տարածված էր և զարհուրեցրել էր նրանց: Տիրում էր նա Հրեաստանին ու Ասորեստանին⁹ մինչև իր կյանքի վախճանը:

Եվ երբ հոր՝ Հերակլիսի, փոխարեն թագավորեց որդին, որանից հետո՝ տերը զարթնեցրեց շար մարդկանց սիրտը, որպեսզի նրանց միջոցով մեր քրիստոնյա ազգից վրեժ առնի, բանի որ մեղանշել էինք մեր Տեր Աստծու առջև: Սկսեցին գունդ կազմել և զորք գումարել Կոստանդնի իշխանության դեմ (հարձակվել) Հրեաստանի ու Ասորեստանի վրա, քանզի զորավիպ ունեին իրենց օրենսդրի¹⁰ պատվիրը: Նա որո՞մ սերմանողներին պատվիրել էր, թե «Ելեք ամբողջ աշխարհի դեմ, նվաճեցեք նրանց ձեր ձեռքի տակ, բանդի մեզ

Վայելիւ ա համար արժած է երկրի պարարտութունը, կերեք երկրի քնտրյալների միսը և խմեցեք զորավորների արյունը»: Նրանց սագրում և առաջնորդում էին նաև հրեաները¹¹, որոնք, դնալով Մադիամի¹² բանակատեղին՝ ասել էին նրանց. «Աստված Աբրահամին խոստացավ երկրի քնակիչներին ծառայեցնել, իսկ մենք նահապետի ժառանգներն ու որդիներն ենք: Մեզանից ձանձրացավ Աստված մեր շար ընթացքի համար և վերացրեց մեր միջից թագավորական զավազանը ու մասնեց մեզ ծառայական ստրկության: Աբր, դուք ևս Աբրահամի զավակներ եք և նահապետի որդիներ: Ելեք մեզ հետ ու փրկեցեք մեզ Հունաց արքայի¹³ ծառայութունից, և միասին կվերցնենք մեր իշխանութունը»:

Երբ այս ևս լսեցին, (քաջալերված հարձակվեցին Հրեաստանի վրա: Ապա այս բանը հայտնի դարձավ Հունաց թագավորին, որը գրեց Հրեաստանի զորավարին. «Լսեցի, որ սառակինոսները¹⁴ հարձակման են անցել Հրեաստանի ու Ասորեստանի վրա: Արդ, գումարիր քո զորքը, մարտնչիր նրանց դեմ և արգելք եղիր, որպեսզի չասպատակեն մեր երկիրը և սուր ու կտորած չըճրեն նրան. արդ, սպառազինվելով, կազմիր քո զորքը»:

Իսկ նա, ստանալով օգոստական հրամանը, գրեց իր իշխանության տակ եղած զորավարիներին, որ ուր էլ լինեն՝ իր մոտ հասնեն: Շուտափույթ միատեղ հավաքվելով, մեծ բանակ կազմեցին և առաջ շարժվելով՝ գնացին ավազակների¹⁵ դեմ, որոնք զորք կազմած գալիս էին նրանց դեմ: Գնացին միմյանց հանդիպեցին Ապառած Ալարիայի սահմաններում¹⁶. տեսան Մադիամի բանակը, որն անթիվ էր ու բազմամարդ, և մորեխի պարսների նման էր ուղտերի ու ձիերի անհաշիվ բազմութունը: Ապա Հունաց զորքերը, մեծ անգիտություն ցուցաբերելով, բանակի գումակը բազում ասպարեղներով իրենցից անջատեցին և ճամբարում թողնելով՝ նաև իրենց երթվարները՝ իրենք հետիոտն, սպառազինված՝ գնացին նրանց դեմ պատերազմելու: Արեզակնային տապի շերմությունից, շար ապառածների ու ավազի դժվարութունից հոգնած և գեներք ծանրութունից ուժասպառ՝ հարձակվեցին թշնամու վրա:

(Իսկ նրանք, քանզի հանգստացել էին, շուտափույթ հեծան իրենց երիվարները և հարձակվելով՝ հույների զորքին բազում հարվածներ հասցրին. մնացածներին փախուստի մատնելով և հետապնդելով մինչև հունաց ճամբարը՝ շատերին առհասարակ կոտորեցին։) Մնացորդները, հեծնելով երիվարները, փախստական ընկան իրենց երկիրը։

Իսմայելացիք հույների գանձերը ավար վերցնելով և կողոպտելով սրից ընկածներին, խնդուխտաբար վերադարձան իրենց երկիրը։ Այնուհետև տիրեցին Հրեաստանին ու Ասորեստանին, հարկատու դարձրին այդ երկրները և սուրբ Երուսաղեմ քաղաքի եկեղեցիները։ Այդ ժամանակվանից հունաց արքային դադարեցին հարկ վճարել Հրեաստանն ու Ասորիքը, քանզի հունաց զորքը չկարողացավ դիմադրել Իսմայելին, և սա տիրեց Հրեաստանին։

Գ Լ Ո Ւ Ն Բ

Իսկ մի տարի անց նրանք սկսեցին խրոխտալ պարսից արքայի դեմ, զորքի բազմություն հավաքեցին և եկան հարձակվեցին պարսից արքայի վրա, որի անունն էր Հազկերտ, Խոսրովի թոռը։ Հազկերտը նույնպես իր զորքը ժողովեց՝ պատերազմելու նրանց դեմ, բայց դիմադրել չկարողացավ։ Նրա զորքը սրով կոտորվեց, իսկ թագավորին¹⁷ խփեցին սպանեցին։

Դրանից հետո կործանվեց վերացավ պարսից թագավորությունը, որի իշխանությունը 481 տարի¹⁸ էր տևել։ Իսմայելացիք, ավարի առնելով երկիրը, արքունի գանձերն իրենց երկիրը տարան։

Զորքի մի մեծ հատված բաժանվելով՝ Պարսկաստանի կողմից ասպատակեց հայոց երկիրը և գերեց մարաց ավանները¹⁹, Գողթն գավառը և Նախճավան դաստակերտը։ Տղամարդկանց շատերին սրի քաշեցին, այլոց գերեվարեցին կանանցով ու մանուկներով և անցկացրին Երասխ գետից. Զուղայի²⁰ հունով։ Այս զորքը երկուսի բաժանվեց. մի մասը գերիներին վերցնելով դարձավ իր երկիրը, իսկ մի գունդ էլ առանձնանալով՝ ասպատակեց Արտազ գավառը, (հարձակվեց)

հունաց զորավարի վրա, որի անունն էր Պոտկոպ։ Սա բանակ էր դրել Կոզովիտ գավառում, Բազուձորի և Մարդուցայքի սահմանի վրա։ Թեոդորոս իշխանը²¹, որ Ռշտունյաց տոհմից էր, եղելությանն իրազեկ լինելով, ազդարարեց Պոտկոպ զորավարին, թե՛ Իսմայելի²² ավարառու զորքը ելել է ու գալիս է մեր դեմ²³։

Իսկ դա զորքի բազմությանն ապավինելով և ոչ՝ Աստծուն, որը հաջողություն է տալիս պատերազմներում, հայոց իշխանի խոսքերին կարևորություն չտվեց, և սա գառնացած Հայոց աշխարհի կորստյան և զորավարի անտարբերության համար չկարողանալով համբերել, այլ մտնելով՝ երկրորդում և երրորդում էր իր խոսքը։ Զորավարը, բարկանալով իշխանի վրա, իր ձեռքում եղած գավազանը նետեց նրա ետևից։

Թեոդորոսը զայրացած դուրս եկավ նրա մոտից և իսկույն հրամայեց իր իշխանության տակ եղած զորքերին՝ «զրահավորվեցեք և ելեք Իսմայելի դեմ։ Նրանք, իրենց երիվարները հեծնելով՝ դարանամուտ եղան այն բլրի ետևում, որը Եղբարք էին կոչում։ Կիրճերի մուտքը կտրելով՝ նրանցից (արաբներից) շատերին կոտորեցին և կողոպտելով ընկածներին, թողեցին (Պոտկոպ) զորավարին ու գնացին Գառնի²⁴ գավառը։

Ապա Պոտկոպը ևս իր զորքին հրաման տվեց հարձակվել թշնամու վրա. սակայն Իսմայելի զորքը նրանց վրա հարձակվեց, հույների մեծ մասին կոտորեց և, այլոց փախուստի մատնելով, հետապնդեց մինչև ճամբարը, իսկ իրենք (արաբները) իրենց բանակատեղին վերադառնալով՝ հանգրստացան։ Ասում են, թե հունաց զորքի թիվը վեց բյուրից ավելի էր, իսկ իսմայելացիք նվազ, քան մեկ բյուր։ Հաջորդ օրը ճամբարում կուտակված ավարը հավաքելով (արաբները) վերադարձան, գնացին իրենց երկիրը։

Այս բանը կատարվեց Իսմայելի իշխաններ Աբու Թաքրի, Օթմանի և Ամրի քսաներկուերորդ տարում։ Նրանք երեք տարի դադարեցին Հայոց աշխարհի վրա հարձակվելուց։ Ապա իրենց իշխանության քանակեցերորդ տարում ժանր զորքով դարձյալ հարձակվեցին Հայոց աշխարհի վրա։

(Հոտոմոց կայսեր շերակիսի թոռ Կոստանդնի երկրորդ տարում Քեոզորոս իշխանը տեղեկացավ, որ թշնամին հարձակվել է մեր երկրի վրա²⁵։

Վերցնելով իր զորքը՝ նա կամենում էր Ձորա²⁶ ճանապարհի կիրճերը գրավել, սակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանզի թշնամիները) թևավոր օձերի նման, օդաթև արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողնցին հայկական զորքը և առաջանալով ընթացան դեպի Դվին մայրաքաղաքը։ Նրանք քաղաքը պատերազմելու ընդունակ այրերից թափուր գտան, քանզի ամենքը Քեոզորոս իշխանի հետ գնացել էին, և միայն կանայք, մանուկներ և այլ խառնիճազանը (բաղմուժյուն) կար, որի մեջ պատերազմելու ընդունակ այրեր չկային։ (Հասան քաղաք, անմիջապես գրավեցին ամրոցը և այնտեղ գտնվող տղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին՝ երեսունհինգ հազար հոգի, գերեվարեցին։)

Արդ, ո՞վ արդյոք կարող է արժանավորապես ողբալ աղետի թշվառությունը, քանզի ամեն կողմից անելանելի ծանր դրություն մեջ էին։ Սուրբ եկեղեցիները, ուր հեթանոսները չպետք է մտնեին, քանդված ու քայքայված, անօրենների ոտից կոխան էին դարձել։ Քահանաները սարկավազներով ու պաշտոնյաներով հանդերձ ժպիրճ և անողորմ թշնամիների սրով խողխողված էին։ Բազում փառիկասուն տիկնայք, որոնք նեղուժյան փորձանքի շէին ենթարկվել, գանահարություն տանջանքներ կրելով՝ քարշ էին տրվել հրապարակները, ողբ ու կոծ էին անում վրա հասած օրհասի համար։ Այլև գերյալների բաղմուժյունը, ուսուրերով ու դուսարերով, նույն տագնապի, հեծություն և հառաչանքի մեջ էր։ Քանզի՜ չգիտեին, ո՞ր մեկին առավել ողբալ՝ անօրենի սրով խողխողվածներին, թե՛ կենդանի մնացած ուսուրերին ու դուսարերին, որոնց խել տարել էին՝ Քրիստոսի հավատքին ու հոգևոր աստվածային փառատրություններին օտարացնելու համար։ Շատերը թեպետ ողբով լաց էին լինում ողորմելի տեսքով իրար վրա ընկած արշուռաթաթավ դիակների համար, սակայն ի վիճակի չէին նրանց մարմինները հավաքել և գերեզ-

մանին հանձնել։ Ի դեպ այստեղ հարմար են մարգարեի ողբի խոսքերը. «Ով Աստված, հեթանոսները մտան քո ժառանգությունը, պղծեցին քո սուրբ տաճարը, քո ծառաների դիակները շարտեցին որպես երկնքի թռչունների կեր, իսկ քո սրբերի մարմինները երկրի գազանների առջև (նետեցին), և մարդ չկար որ թաղեր* նրանց»²⁷։ Այս ամեն պատահաստյան անցքերը, որոնք այն ժամանակ Հրեաստանում էին եղել, այժմ մեզ մոտ կատարվեցին՝ մեծ տագնապ պատճառելով։

Իսկ հայոց զորքը, նախարարներով ու (Քեոզորոս) իշխանով մեկտեղ, երբ տեսան, թե ինչպես ավազակները սաստիկ նեղում են, նրանց ուղղակի այրերի ձեռքերը թուլացան և չկարողացան ավարառու թշնամու վրա հարձակվել։) քանզի թեպետ տեսնում էին իրենց կանանց և մանուկներին գերի տարված, բայց, քանի որ նվազ էին թվով (չկարողացան դուրս գալ նրանց դեմ, այլ նստած ողբ ու կոծով ավազում էին իրենց կանանց և մանուկներին)։ (Իսկ հազարացիք նրանց տարան Ասորիք և այլևս տասը տարի չհարձակվեցին Հայոց աշխարհի վրա։

Ապա նրանց իշխանության երեսունվեցերորդ տարում զորք հավաքելով, դարձյալ հարձակվեցին Հայոց երկրի վրա, և նրանց զլխավորներն էին Սթմանն ու Օզբան։ Երբ Հայաստանի սահմանները հասան, երեք խմբի բնօրհանվելով՝ ասպատակ սփռեցին։ Մի խումբը, գնալով Վասպուրականի կողմը, գրավեց ավաններ և ամրոցներ, որոնք ձգվում էին մինչև Նախճավան քաղաքը։ Մի խումբը գնաց Տարոնի կողմերը, իսկ մի խումբն էլ, հասնելով Կոզովիտ, պաշարեց Արծափ** ամրոցը։) Թերզի մուտքը գտնելով, (թշնամիները) գիշերը զազտագողի նրա վրա բարձրացան, քանզի պահապանները քնած էին, և գրավեցին ամրոցը։ Այնտեղ գտնվող տղամարդկանց կապանքների տակ դրեցին, այնուհետև իրենց սանձարձակության տալով՝ սկսեցին դազրելի պղծություններ խառնակվել կանանց հետ։

Սակայն ամենատեսն Աստված գթալով՝ չբեց իր անվան հավատացողներին, այլ գործված շարիքների վրեժն առնելու

* Ազգմու շԸ, 1—3:

** Բնագրում՝ Արծափաց:

համար ուղարկեց Քեոզորոս իշխանին, որը 600 զինավառ
ուսուցիչներով արագաթև հարձակումով արժվի նման անմի-
ջապես խոչարցավ ավարտու թշնամու վրա, կոտորեց մո-
տավորապես 3000 թշնամու, կապվածներին արձակեց, իսկ
ուսուցիչ փոքրաթիվ մնացորդներին փախուստի մատնեց (Հայ
ուսուցիչները) գերլալներին վերադարձրին և թշնամու ավարն
ու կողոպուտը ժողովելով՝ խնդուկյամբ վերադարձան՝ փա-
ռավորելով Աստուծոն, որ իրենց վրեժը լուծեց թշնամիներից:
Իսկ այն (արաբական) զորքը, որի մասին նախապես պատ-
մել էմ, առնելով ավարը և գերիներին, զնաց Ասորիք և դրա-
նից հետո երկու տարի դադար տվեց:

Այս շարիքները գործելով իրենց [իշխանության] օրոք՝
Իսմայելի իշխաններ Աբու Բաբբը, Օթմանը և Ամրը, վախ-
ճանվեցին:

Գ Լ Ո Ւ Խ Գ

Նրանցից հետո իշխանութունն անցավ ոմն Մուավիայի²⁸,
որն իշխեց տասներե տարի շորս ամիս ու վախճանվեց:

Այն մասին, թե ինչպես նրա օրոք կար Գրիգոր²⁹ իշխանը
և ինչպիսի անցքեր տեղի ունեցան մեր Հայոց աշխարհում, և
իշխանների մահը:

Սրա իշխանության առաջին տարում և Հերակլեսի թոռ
Կոստանդին կայսեր քսանհինգերորդ տարում տաճկաց իշ-
խանն սկսեց զորք գումարել Հայոց աշխարհի դեմ: Այս մա-
սին տեղեկանալով՝ Կոստանդին թագավորը հրամայեց
Կիլիկիայի կողմերում գտնվող զորավարին՝ ելնել նրանց
դեմ: Նա իշխանութունից հեռացրեց Քեոզորոս իշխանին՝
Պոռկոպ զորավարի հանդեպ գործած նենգության պատճա-
ռով և նրա փոխարեն կարգեց ոմն Սմբատի³⁰ Բագրատունյաց
տոհմից և նրան ուղարկեց իր զորավարի հետ: Նա գրեց Քեո-
զորոս Ռշտունուն³¹, որը նախապես (հայոց) իշխան էր, ասե-
լով՝ «քո ձեռքի տակ եղած զորքով մեզ հետ ելիր պատե-
րազմի»: Սա չկամեցավ պատերազմի ելնել: Նա երկրորդ
անգամ գրեց՝ «եթե մեզ հետ չելնես թշնամու դեմ, ապա
այնտեղից վերադարձին քո տունը կշնչենք մեր ազգատոհ-
մերի միջիդ»:

Վախենալով սպառնալիքից՝ [Քեոզորոսը] սպառազինեց
իր որդի Վարդին, որպեսզի զնա Սմբատ իշխանի հետ, սա-
կայն պատվիրեց նենգութուն գործել բարեկամների դեմ
և միաբանել թշնամու հետ: Սա գնաց հունաց զորավարի
մոտ, և բոլորը շվեցին Ասորիքի կողմերը, անցնելով Եփրա-
տի ծանծաղուտը: Քեոզորոսի որդին, մերձենալով զորավա-
րին, խնդրեց իրեն նավակամուրջների պահապան կարգել, և
սա հրամայեց նրան պահապանել ծանծաղուտի խելիքը:

Երբ միմյանց դեմ պատերազմ սկսելով՝ նրանք բախվե-
ցին իրար, և երկու կողմերից էլ հարվածներ տեղացին,
տաճկաց զորքը դարձյալ զորացավ զատկի մեծ շաբաթ օրը,
փախուստի մատնելով հունաց զունդը: Քեոզորոսի որդին
հենց որ տեսավ Իսմայելի հաղթանակը, համարձակ գետի
այն կողմն անցավ և կտրեց կամուրջի լարերը, որպեսզի
փախուսականները չփրկվեն, իսկ նրանք (արաբները), շրջա-
պատելով հունաց զորքը, ոմանց գետավեժ արեցին, ոմանք
էլ ազատվեցին՝ Հունաց երկիրը փախչելով: Այնուհետև հու-
նաց արքան հուսալքվեց, բանդի գիտակցեց, որ Տիրոջից էր
իր իշխանությանը հասած ձախողութունը, և այլևս չհար-
ձակվեց Իսմայելի վրա:

Իսկ Իսմայելի իշխանը հրովարտակ գրեց Հայոց աշխար-
հը, ասելով՝ «եթե ինձ հարկ չվճարեք և իմ իշխանության
լծի տակ չմտնեք, ամենքիդ սրով կկոտորեմ»: Այն ժամանակ
միաբան ժողով գումարեցին հայոց քահանայապետ Ներսե-
սը³², Սուրբ Գրիգոր (եկեղեցու) շինողը, մեր երկրի իշխան-
ներն ու նախարարները և հանձն առան իսմայելցիների բռ-
նապետությանը հարկ վճարել: Սրանցից պատանդներ խընդ-
րեցին և տվեցին Հայաստանի՝ նախարարներից երկուսին՝
Գրիգորին՝ Մամիկոնյան տնից և Սմբատին՝ Բագրատունի
տնից: Սրանց տարան տաճկաց իշխան Մուավիայի մոտ,
որը Հայոց պշխարհին տարեկան 500 դահեկան հարկ նշա-
նակեց, որի (փոխարեն) աներկյուղ ապրելու էր իրենց բնա-
կավայրերում:

Իշխանության երկրորդ տարում Մուավիան իր մոտ կան-
չեց Գրիգորին ու Սմբատին, որոնք պատանդ էին արքունի
դռանը և Գրիգորին տալով հայոց իշխանի (Հայաստանի իշ-

խանութիւն) պատիւը* բազում մեծարանքով առաքեց մեր
Հայոց աշխարհը:

Սրա իշխանութեան օրերին խաղաղութիւնն էր իշխում:
(Նրանից հետո իշխեց Մուսլիմայի որդի Եղիար³³), նա
ապրեց երկու տարի և հինգ ամիս ու վախճանվեց: (Նա Հայոց
աշխարհից նույն (վերոհիշյալ) հարկի սակը (հարկաշարի)
վերցրեց:

Նրանից հետո (իշխեց) Մրուանի որդի Աբդը-Մեխթը³⁴,
որը ըսանմեկ տարի մնալուց հետո վախճանվեց:

Այսպիսիք էր նրա վարքը. նա ծանառ անձնավորութիւն
էր և կատաղի պատերազմող: Նրա իշխանութեան երկրորդ
տարում առձեռնների մեջ սաստիկ խռովութիւն ու պատե-
րազմ ծագեց և նրանց միջև շատ արյունահեղութիւն եղավ:
Նրանց մտտ պատերազմը երեք տարի սաստկացավ, և ան-
թիվ սպանութիւններ եղան նրանց մեջ³⁵, այնպես որ իրա-
կանացով Գավթի մարդարեութիւնը, որն ասում է. «Նրանց
սրերը խրվելու են իրենց սրտերի մեջ, և աղեղները փշրվե-
լա են»*: Քանզի մեր քրիստոնէյա ազգերի մեջ թափված ան-
պարտ արշան և անողորմ կոտորածների փոխարեն իրավա-
ցիորեն թափվեց լրիժապարտ արշունը, և Աստված հենց
նրանց ձեռքով առավ իր ծառաների անարգանքների վրեժը:

Իսկ Հայոց Գրիգոր իշխանը իր տիրութեան օրերին մեր
Հայոց աշխարհը խաղաղեցրեց ամեն տեսակ թշնամութիւն-
ներից ու հարձակումներից: Նա աստվածերկյուղ մարդ էր,
եղբայրասեր, օտարասեր, աղքատների դարմանիչ և աստ-
վածապաշտութեան հավատքի մեջ կատարյալ: Նա Արաբա-
ծոտն զավառի Արուս³⁶ ավանում շինեց մի տուն աղոթից,
Տիրոջ անվան փառքի տաճար, գեղեցիկ վայելչակազմ զար-
դարված ի հիշատակ իր անվան:

(Տաճիկների միջև տեղի ունեցող պատերազմի ժամանակ
հարկատուութիւնից դադարեցին Հայաստանը, Վիրքն ու Աղ-
վանքը, երեսուն տարի ծառայելուց հետո: Նրանք երեք տա-
րի ապստամբ մնացին: Իսկ շարորդ տարում մեր Հայոց
աշխարհին տիրեց Տյուսիսային ազգը, որ կոչվում էր իա-
զիրներ³⁷: Նրանք պատերազմում սպանեցին Գրիգոր իշխա-
նին, բազում նախարարների և վրաց ու աղվանից իշխան-

ներին: Ասպատակ սփռելով մեր Հայոց աշխարհը՝ բազում
զավառներ և ժամանէր գրավեցին, ապա վերցնելով ավարը և
գերլայններին՝ դնացին իրենց երկիրը:

Գ Լ Ո Ւ Ե Ն

Աշոտի³⁸ իշխանութեան, հոռոմների³⁹ պատճառած հրդեհ-
ների և Աշոտի մահվան մասին:

(Գրիգորի մահվանից հետո իշխանութիւնն անցնում է
Աշոտ պատրիկիին, որը երեւելի պէր էր, Հայաստանի նա-
խարարների մեջ՝ նախամեծար: (Նա Թագրատունյաց տոհմից
էր,) ճոխ և պերճ իշխանութեամբ, իսկ երկրային վարքով
միշտ զգաստ էր, առաքինասեր, ամենքից ավելի ազնվա-
կան և ծանոթ Աստուծո երկյուղին, հոգատար էր ամեն տե-
սակ բարեգործութեան, ջանասեր՝ ուսումնաստութեան մեջ:
Զարգնում էր Աստուծու եկեղեցիները՝ ճարտասան վարդա-
պետներով և եկեղեցական պաշտոնյաների բազմութեամբ:
Պատվում էր [եկեղեցիները] իր գանձերից վերցրած երեւելի
սպասքներով: Իր ոստանում շինեց Գարյունից եկեղեցին՝ և
Քրիստոսի մարդեղութեան մեծաքանն զորութեամբ կենդա-
նազիր պատկերը բերեց արևմուտքից և գետեղեց նրա մեջ և
նրա անվամբ* էլ կոչեց եկեղեցին:

Նրա իշխանութեան առաջին տարում զարմանալի տեսքով
վարսավոր աստղ երևաց, որի էտևից սյունաձև փայլով
հաճանչ էր փողփողում, և որը կոչում էին գիսավոր աստղ:
Այ նշան եղավ լուրի, սրի և մեծ սասանութեան:

Հուստիանոս (Հուստինիանոս)⁴⁰ կայսրը իր թագավորու-
թեան երկրորդ տարում և Աշոտ պատրիկի իշխանութեան ժա-
մանակ բազում զորքեր առաքեց մեր Հայոց աշխարհի դեմ,
որոնք ավերեցին մեր երկիրը ավարատութեամբ: Բազում հո-
յակերտ շինվածքներ հրի մատնելով՝ ավերեցին և ապա վե-
րադարձան իրենց երկիրը:

Հունաց մեծամեծները, թշնամանալով այս Հուստիանոսին,
(Հուստինիանոս) կտրեցին նրա քիթը և արտրեցին ու նրա
փոխարեն թագավորեցրին Անտին⁴¹, Ափսիմերոս Տիրերին⁴²

* Ամենափրկիչ:

և Քեոդոսին⁴³: Իսկ Հուստիանոսը, (Հուստինիանոս) զնայով խազարաց աշխարհը, Խաբանի՝ խազարաց արքայի զստերը կնութիան առավ, նրանից օգնական զորք խնդրելով: Սա բազում զորք ուղարկեց, և զորքի հետ Հուստիանոսի (Հուստինիանոսի) աներ Տրուեղին⁴⁴, որը հզոր անձնավորութիւն էր: Հասնելով Կոստանդնուպոլիս՝ [Հուստինիանոսը] ճակատամարտ ավեց ու հաղթեց հակառակորդներին և վերստին հաստատեց իր թագավորութիւնը: Տրուեղը պատերազմի մեջ մեռավ, իսկ [Հուստինիանոսը] խազարներին մնացած զորքը բազում պարգևներով և պատվական իրերով ուղարկեց իրենց երկիրը:

Աշոտն իշխանութիւնը շրս տարի պահեց, իսկ իշխանութիւն շորրորդ տարում Իսմայիլի որդիներին մի գունդ ասպատակութեամբ հարձակվեց մեր Հայոց աշխարհի վրա: Սրանք հանցանքի որդիներ էին, անօրենութիւն զավակներ և անիրավութիւն էին գործում Մարաց [կոչված] ավանտներում՝ Խրամում, Զուղայում և Խոշակունիքում: Տղամարդկանց հարկապահանջութեամբ խոշտանգում էին, իսկ կանանց զազրելի պղծութեամբ կամենում էին խայտառակել, ըստ իրենց անօրենութեան:

(Նրանց շարագործութիւնների համբավը հասավ Աշոտ իշխանին, որն անմիջապէս հրաման ավեց զորքերին ելնել նրանց դեմ: Ամենքին հարվածելով [հայերը] սրով կոտորեցին ու մնացորդներին փախուստի մատնեցին: Սակայն սատանայի խորամանկ որդին, երբ տեսավ, որ թշնամու հարվածը սաստիկ է, հրաման ավեց իր զորքերին՝ հավաքված գանձը (ավարը) դաշտում ցրել հայոց զորքի առջև: Սրանք անխոհեմորեն ընկան ավարի ետևից՝ թուլացնելով նրանց հետապնդումը: Միայն Աշոտ իշխանը սակավ մարդկանցով հետապնդելով՝ գնում էր նրանց ետևից: Թշնամիները, իրենց զորացած զգալով, դարձան նրա կողմը և հարվածելով վիրավորեցին Հայոց իշխանին: Ապա ճիշ բարձրացավ զորքի մեջ, և շուտափութ հասան ու թշնամուն հարվածելով կոտորեցին: Վերջնելով իշխանին՝ նրանք բերեցին Կոզովիտ՝ կարեվեր խոցված վիճակում: Այնտեղ մահճում փառավորապէս վախճանվեց ու թաղվեց իր հանգստան կացարանում՝ Գարշունց գյուղում:

Ճահճուտի կովի մասին:
Մեր պատմածից հետո՝ դարձյալ զորք ուղարկեց հունաց այբան, որին Ափսիմերոս էին կոչում, Հուստիանոս կայսեր հաշորդը, և հրամայեց բանել Սմբատին⁴⁵, Վարազտիրոցի որդուն, որն իր քինախնդիր էր եղել հունաց զորքից ոխ պահելով իր հոր՝ Վարազտիրոցի, մահվան համար, որին սպանել էին հոռոմները: Գալով՝ պատերազմեցին նրա դեմ Փայիկ կոչված ճահճուտ դաշտում: Հայոց զորքը բազում հարվածներ կրեց, քանզի փոքրաթիվ էր, հունաց զորքից էլ շատերն ընկան:

Երբ Սմբատը տեսավ, որ չի կարող դիմադրել հունաց զորքին, փախուստի դիմեց և սակավ մարդկանցով հեռացավ, իսկ հունաց զորքը դարձավ իր երկիրը:)

Կպատմեմ դարձյալ այն անտանելի ազետների մասին, որ մեզ հասան Իսմայիլի տոհմից:

Արդ-Մելիքի իշխանութիւն տասնվեցերորդ⁴⁶ տարում դարձյալ նրա սիրտը շարասեր սատանայից գրգռվեց, և նա հրամայեց իր զորքերին հարձակվել մեր երկրի վրա: Սրանց զորագլուխն էր արշունարբու և դիվահար Մահմետը⁴⁷, որը երգմամբ անօրինութեան դաշինքն էր կնքել իրենց իշխանի հետ՝ իր սուրը պատյան շղնել մինչև մեր երկրի սիրտը ներթափանցելու: Նա խրոխտալով զնաց հասավ մինչև Զերմաձոր գավառը և ում որ հանդիպում էր՝ սուրը գործի դնելով անխնա կոտորում էր, ըստ իրենց խոստման: Շատերը, տաշվանից տեղյակ լինելով, բաշվել էին, ապաստանելով բերդերի ամրոցները: Նա բազում ամրոցներ խաբեութեամբ դրավեց, քանզի կեղծ խոսքերով խաղաղութեան կոչ էր անում: Սակայն երբ վստահելով՝ իջնում էին ամրոցներից, սուրը գործի դնելով կոտորում էր տղամարդկանց, իսկ կանանց ու մանուկներին գերեվարում: Նա բազում նեղութիւն և տագ-

* Հովհ. Ը, 44:

նապ պատճառեց մեր երկրին, այնքան որ մարդիկ [մահը] նախընտրելով այսպիսի տառապանքներով ապրելուց՝ երանի էին տալիս մեռյալներին, որոնք խաղաղ մահով մեռած աշխարհից հեռացել էին:

Երկու տարի հետո, ամբարշտության գազաթնակետին հասնելով, իր մահաբեր թույնը զուրս տվեց և մահ էր նշույթում սուրբ Գրիգորի ուխտի⁴⁸ դեմ: Քանզի նրանք (արարները) տեսել էին երևելի և պատվական սպասքների վայելչությունը, որ մեր երկրի թագավորների, իշխանների ու նախարարների ձեռքով էին հավաքված: Տեսան և քահանայական դասի հրեշտակակերպ կարգավորությունը, ինչպես նաև վարդապետների ու [եկեղեցու] պաշտոնյաների բարեկարգությունը և լսեցին երկրի վրա հրեշտակային երգերը: Նըրանց սրտերը նախանձով խոցվեցին և գավաճանաբար մահաբեր կորստյան որոգայթ նշույթեցին նրանց դեմ:

Անօրենների մի գունդ գնաց օթևանելու նրանց հարկի տակ: Գիշերը զարթնելով՝ իրենց ծառաներից մեկին խեղճամահ արեցին ու նետեցին խոր փոսի մեջ: Առավոտը լուսանալուն պես գնալու նպատակով ելան և հարցրեցին այն ծառայի մասին, որին իրենք խողխողել էին, ու շտան և բազում նեղություն ու տառապանք պատճառեցին եկեղեցու ուխտին: Ապա փնտրելով գտան խոր փոսի մեջ, ուր գցել էին, և անմիջապես սուտ մեղադրանքի պատրվակ դարձնելով՝ ձերբակալեցին ամենքին, փոքրից մինչև մեծամեծները, ու բանտ նետեցին: Նրանք նամակ գրեցին արյունարբու Մահմետին, թե «այս և այս արեցին մեզ, արդ, որպիսի՞ մահով մեր պետք է պատժվեն»: Իսկ նա, իմանալով, [հրամայում է] ըստ իրենց կամեցողության գատել նրանց և եկեղեցու ունեցվածքը ավարի տալ: Անիրավ հրամանն ստանալով՝ դահիճները իրար հետ մրցելով ելան իրենց հոր՝ սատանայի, հրամանը կատարելու, որն ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց*, ինչպես Տիրոջից սովորել ենք: Ամենքին բանտից շղթայակապ զուրս բերելով՝ նախ ոտքերն ու ձեռքերը ծալրակոտոր արեցին և ապա փայտից կախելով՝ նրանց կյանքից զրկեցին:

Արդ, ո՞վ կարող է առանց արտասուքի պատմել անտանե-

* Յովն. Ը, 44

լի աղետները, որ նրանց հասան. սուրբ եկեղեցին զրկված էր բեմի բարեզարդությունից և լռել էր աստվածային փառատրության ձայնը: Նրա հետ լռել էին հոգևոր և բանավոր պատարագների կարգերը, որ սրբերը շանասիրություն մատուցում էին միակ մաքրագույնին: Շիջել էր և լայտերների պայծառությունը, որով գիշերը ցերեկվա նման լուսավորվում էր: Դադարել էր և անուշահոտ խունկերի բուրմունքը և քահանաների մաղթանքը, որով ժողովրդի փառատրությունը նվիրում էին արարչին և մարդասեր Աստծուց խաղաղություն էին հայցում: Կարելի է միանգամայն ասել, որ սիրող խորանն ամենայն վայելչությունից դատարկվել էր: Ո՞վ Քրիստոսի երկայնամտություն, ինչպե՞ս արդյոք թույլ տվեց անօրեններին՝ զրպարտել իր փառավորիչներին և դառն մահվան [դատապարտել]: Այլ նա ժամանակավոր մահվամբ կամեցավ հավիտենական կյանք պարգևել, որպեսզի նրա շարժարանքներին կցորդ լինելով՝ նրա փառքին էլ հաղորդակից լինեն, և քանի որ Քրիստոսի խաչակից եղան, նրա հետ էլ կթագավորեն նրանք, որ մեռան նրա հետ, նրա հետ էլ հարություն կառնեն և հավիտյան հավիտենից կժառանգեն խոստացված երանությունը: Իսկ սատանայի գործակալները նրա հետ կժառանգեն իրենց համար պատրաստված բազմատեսակ տանջանքների դառնությունը, հուրը, խավարը, անվախճան որդը, աշքիրի լացը և ատամների կրճատեցը, որոնց տեսակները գիտի նա, որ պատրաստել է դրանք: Այս ամենը գալու է բոլոր նրանց վրա, որ անօրինություն են գործում:

Իսկ Մահմետը, որի մասին պատմեցինք, այս ամեն շարքները գործելուց հետո բազում ավարով, գնաց Ասորեստան, իսկ մեր երկրի բնակիչները մնացին իբրև կրակից ծխաղոլ և խոզերի ոտքերի տակ փխրված ցորենի խուրձ:

Գ Լ Ո Ւ Խ Ը

(Երբ Մահմետ զորավարը Ասորիք գնաց, Հայոց աշխարհի վրա իր փոխարեն իշխան թողեց իսմայելացիներից մեկին⁴⁹:

(Սա վատ խորհուրդ հղացավ՝ Հայոց աշխարհից նախարարական ազատախումբ տոհմերը, իրենց հեծյալներով

հանդերձ, մեջտեղից վերացնել: Նրա նենգ խորհուրդը անմիջապես հայտնի դարձավ Սմբատին, որը Բագրատունի տոհմից էր, և այլ նախարարների ու նրանց հեծյալներին: (Սրբնա իմացավ դավադրությունը, իր մոտ կանչեց աղատանի դասից տոհմակիցներին՝ Աշոտ իշխանի որդի Սմբատին, Քեղոզոս իշխանի որդի Վարդին, իր եղբոր՝ Աշոտին, և այլ նախարարներ: (Խորհում էր հնար գտնել, որով կարելի կդառնար իրենց անձեռք փրկել: Վերջապես խորհրդածողով որոշեց հեռանալ երկրից և զնալ հունաց թագավորի մոտ):

Ապա Վասպուրական երկրի⁵⁰ նախարարներից ոմանք բաժանվելով՝ գնացին Վասպուրականի կողմերը, այն դաշտավայր մարզը, որն Առեստակոզմ է կոչվում: Այնտեղ բնակվում էր ոմն միայնակյաց, որի մոտ գնացին գործի որպիսություն մասին հարցնելու, քանզի սուրբ այր էր, բնառըրյալ և լի հոգևոր իմաստությամբ: Սակայն նա ողբալով ու ավազելով մեր երկրի կորուստը, եկեղեցիների կործանումը և նախարարական տոհմերի վերանալը, ոչինչ չկարողացավ հանձնարարել, այլ միայն [խորհուրդ տվեց] խոհեմ լինել և զգուշանալ նենդությունից: Ապա նրանց վրա աղոթք կարդալով՝ հանձնեց Տիրոջ շնորհներին և բաց թողեց նրանց:

Նրանք, ընթանալով Նրասխ գետի Լպերրով, անցան Ուղայի սահմանը ու հասան Ակոտի մեծ ավանը: Իսկ Իսմայելի զորքերը, որոնք Նախճավան քաղաքում էին, ընկան նրանց հոտից և հետապնդելուց լղաղարեցին, բանզի հինգ հազարից ավելի էին և կամենում էին կենդանի կլանել նրանց:

(Սրբ հայոց զորքերը տեղեկացան ավարառու թշնամու մասին, որը շարժվում էր նրանց դեմ, վեր կացան, անցան Նրասխ գետը, բանակ դրեցին Վարդանակերտ ավանում, իսկ տաճկաց զորքերը հետապնդում էին նրանց: Հայոց զորքերը պատգամ հղեցին տաճկաց զորքերին՝ ասելով. «Ինչո՞ւ եք մեզ հետապնդում, ինչո՞ւ՞ հենք մեզավոր ձեր առջև: Ահա վասիկ մեր երկիրը ձեր առջև է, ձեզ հենք թողել մեր բնակավայրերը, մեր այգիները, անտառներն ու անդատանները: Արդ, ինչո՞ւ եք նաև մեր անձերը պահանջում: Թույլ տվեք մեզ հեռանալ մեր սահմաններից»:

Սակայն Իսմայելի զորքերը չկամեցան լսել նրանց, քանզի Տերը կարծրացրել էր նրանց սրտերը, որպեսզի սրի բերան

ընկնեն: Իսկ Հայոց զորքերը, ամրացնելով ավանի փողոցները, պահապաններ կարգեցին մինչև առավոտը լուսանալը և իրենք ամբողջ գիշերը աղոթքի հսկումի մեջ էին: Հայցելով ամենայնի Տիրոջից նրա մեծազոր աչի օգնականությունը և արգար դատել իրենց և թշնամիների միջև: Արևածագին, երբ առավոտյան ժամերգությունը վերջացավ, իսկույն հոգևոր պատարագ մատուցեցին, և արժանավորները հաղորդվեցին Տիրոջ մարմնով ու արյամբ, այն համարելով իրենց անձերի նկատմամբ վերջին անհրաժեշտ հոգսը: (Ապա թեթև կերակրով իրենց մարմինները զորացրին և անմիջապես վեր կենալով՝ հարդարեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, ու պատերազմն սկսվեց: Այնտեղ մեծազոր Աստվածն օգնություն հասավ հայոց գնդին, և թեպետ երկու հազարից նվազ էին, սակայն շատերին հարվածելով՝ սրի քաշեցին: Ցրտաշունչ սառնամանիքի օրեր էին, և զանազան ռազմապետներ և սաստկանալով՝ զրկեց Իսմայելի զորքին իր արի զորությունից, բանզի ամբողջ գիշերը ձյան վրա էին օթադայել (անցկացրել), իսկ լուսածագին ընկան սրի բերանը: Ովքեր սրից ապատվեցին՝ ընկան Նրասխ գետը, որն օդի խոտությունից սառել էր, և երբ զորքի բազմությունը ելավ սառույցի վրա, սառույցն անմիջապես շարդվեց, խորասույզ խեղդվեցին բոլոր սրից փախածները և հեղձամահ եղան:

Մի փոքր մասը՝ մոտավորապես 300 մարդ, փախուստի դիմելով՝ ապավինեց տիկին Շուշանին: Սրանց իր զորքով հետապնդեց Աշոտի որդի Սմբատը, կամենալով փախուստականներին սրի անցկացնել: Նրան ընդառաջ ելավ տիկին Շուշանը⁵¹ և բաղում աղերսանքով ու խնդրանքով փրկեց նրանց՝ մեղկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր վիճակում, որոնց, վերցնելով [իր մոտ], վերքերը կապեց, առողջացրեց և հանդերձներ հազցրեց: Տվեց նաև գրաստ իր երամակից և առաքեց Իսմայելի իշխան Աբդլ-Մելիքի մոտ, որի համար նրանից մեծ շնորհակալություն և մեծամեծ պատիվների արժանացավ:

Իսկ Հայոց զորքերը՝ լիացած թշնամու ավարով, իրենց հաղթության ավետիսն առաքեցին հունաց թագավորին: Ավարից նրան ընծա ուղարկեցին արաբական ձիեր՝ ընտիր երկվարներ և ընկած դիակների քթերը կտրելով նրան հղեցին

ընծայի հետ: Կայսրը, այս նվիրն ստանալով մեծապես գոհ-
հալթյուն մատուցեց Արարչին, ինչպես նաև շնորհակալու-
թյուն հայտնեց Ամբաստին և նրա հետ եղած նախարարնե-
րին ու նրանց զորքերին: Ըստ թագավորական օրենքի՝ հրա-
մայեց նրան կուրապաղատութեան պատիվ տալ: Իսկ նա,
կայսրից պատիվ ստանալով, առավ իբ զորքը և գնաց Տա-
լոց⁵² աշխարհը, մտավ Թուփարը կաշված ամբողջ և զգու-
շանում էր Իսմայելի որդիներին:

Այդ ժամանակ դարձյալ ավարառու թշնամին մի այլ
հարձակում գործեց Վասպուրական նահանգի⁵³ կողմերում
գտնվող [հայոց] զորքի դեմ. և գալով իրար հանդիպեցին
Ռշտունյաց գավառի Գուկանը կոչված գլուղում: Այստեղ
նրանք իրար բախվեցին՝ Սրբ տեսան, որ նրանք (հայերը)
սակավաթիվ են, սաստկապես հարձակվեցին նրանց վրա,
սակայն ողորմածն Աստված այս անգամ ևս գթալով՝ անմի-
ջապես նրանց թիկունք դարձավ, օգնութեան հասավ: ([Հա-
յերը] ամենքին սրի քաշեցին) Բայց միայն երկու հարյուր
ութսուն մարդ փախուստի դիմելով՝ ընկավ եկեղեցի (Եվ
որովհետև [հայերը] շարողացան որևէ այլ միջոց գտնել,
խորհեցին սրբարանը հրկիզել, սակայն Վասպուրականի իշ-
խան Ամբատը, Աշոտ իշխանի որդին, շթոհեց այդ բանն անել,
թույլ շտկեց այդ ապիրատութունը գործել:) Եւ ասում էր
«Քավ լիցի, որ ձեռք տանք Տիրոջ փառքի բնակարանին, որը
նման հաղթութուն պարգևեց մեզ: Եվ պահպանենք կար-
գեցին նրան հսկելու մինչև որ ինքը՝ սրբարանը, նրանց օտի-
պի իրենից դուրս գալ: Քիչ անց Իսմայելի զորականներից
մեկը, որ նրանց գլխավորն էր, հաշտութուն խնդրեց իր ան-
ձի համար, սրպեսպի շապանվի: Իմեց հայոց զորքին՝ ասե-
լով. «Ես եմ, որ բրիստոնյաների ազգը ողորմած է, երբ
մեկին տեսնում է վշտի մեջ, դժում է և ողորմում: Արդ,
ողորմեցեք մեզ և մեր անձերը մեզ պարգևեցեք, իսկ մեր ինչ-
քը ավարի մատնեք»: Պատասխան տվեց Ամբատ զորավարը
և ասաց. «Մենք սովորել ենք Տիրոջից, թե ողորմութունը
ողորմածներին է արժանի ցույց տալ, իսկ դուք անողորմ ազգ
եք ու արժանի չեք ողորմածութեան, և ոչ էլ մենք այդ բանը
կանենք»: Երբ իսմայելացին այս խոսքը լսեց, ասաց. «Արդ,
զոհե իմ անձը խնայեցեք և մի սպանեք, իսկ մնացածներին

ձեռք ձեռք կհանձնենք»: Նրանք հանձն առան շապանել նրան,
իսկ նա ներս մտավ և ասաց՝ «օգուտ չկա մեր այստեղ մնա-
լուց, քանզի տեսնում եմ, որ անողորմ են մեր նկատմամբ:
Արդ, դուրս ելնենք նրանց մոտ: Եթե սպանեն մեզ, կմեռ-
նենք, քանզի մեր օրենսդիր Մահմետը մեզ դրախտն է խոս-
տացել, իսկ եթե խնայեն՝ կապրենք»:

Այս խոսքերից քաշվելով նրանք ամենքը դուրս ելան
և անմիջապես սրի բերան ընկան: Իսկ այն մարդուն, որին
խոստացել էին շապանել, կենդանի ուղարկեցին ծովի խորքը,
իսկ իրենք՝ առնելով սպանվածներից հավաքված ավարն,
իրենց միջև բաժանեցին և տարբեր տեղեր սփռվեցին:

Գ Լ Ո Ւ Խ Թ

Դրանից հետո, երբ Իսմայելի իշխան Արդ-Մելիքը լսեց
իր զորքերի պարտության լուրը, իր մտա կանչեց զորքերի
հրամանատար Մահմետին ու հրամայեց մեծ զորք հավաքել
ու հարձակվել Հայոց աշխարհի վրա, սրի քաշել ու գերե-
վարել:

Սա շուտափույթ զորք հավաքեց և սաստկապես խրոխ-
տալով՝ սպառնում էր իրենց իշխանի հրամանը կատարել:
Երբ Հայաստանի նախարարները լսեցին զորավոր թշնամու
գալուստը, պատրաստեցին Հայոց կաթողիկոս Սահակին⁵⁴
և նրա հետ մեր երկրի եպիսկոպոսներից ոմանց, որպեսզի
ընդառաջ գնան Իսմայելի զորքերին, նրանց զորավարի հետ
խաղաղութեան մասին բանակցելու և ընդունելու նրանց հպա-
տակութեան լուծը: Ծանապարհ ընկնելով մեր երկրի միջով,
նա ամենքին ողջունում էր սիրալիր աջահամբույրով, օրհնում
էր իրեն վստահված հոտը, հովվակից [եկեղեցականներով]
հանդերձ, հանձնելով նրանց Տիրոջ ողորմածութեանը: (Սրբ,
բազում օթեաններ անցնելով հասավ Խառան քաղաքը, այն-
տեղ հիվանդացավ և, նախքան Մահմետ զորավարի ժամա-
նելը, մերձեցավ նրա վախճանը: Անդարձ մահվանից առաջ
նա գրեց իր վերջին խոսքերը Իսմայելի զորավարին.)

«Ես, ասում է, առաքված եմ քեզ մոտ իմ ազգի կողմից,
իմ խորհուրդները քո առջև պարզելու, որ Հայաստանի նա-

լարարներն ու անմիկները միարան խնդրում են քեզանից: Սակայն նա, որ կյանքի շտեմարանապետն է, ինձ վազածամ խելից իր մոտ ու ժամանակ չտվեց հանդիպելու և խոսելու քեզ հետ: (Արդ, երգվեցնում եմ քեզ կենդանի Աստուծով և դաշինք էմ կնքում քեզ հետ) ըստ ձեր նախահայր Իսմայիլի հետ Աստուծու կնքած ուխտի, որով (խոստացավ տալ տիեզերքը և շառայություն և ի հնազանդություն, որպեսզի իմ ժողովրդին խաղաղություն տաս, և նա քեզ կհայտատակի հարկատվությամբ: Ըստ պահիր թո սուրբ արյունահնդուությունից ու թո ձեռքը՝ ավարառությունից, և քեզ կհնազանդվեն [հայերը] իրենց ամբողջ սրտով) Իսկ մեր հավատքի հարցում՝ թող մենք հնարավորություն ունենանք պահպանելու այն, որին հավատացել և խոստովանել ենք, և թող ձերոնցից ոչ ոք չխառնանգի մեզ՝ ստիպելով հավատափոխ լինել: Արդ, եթե իմ խնդրածը կատարես, Տերը կամրապնդի թո իշխանությունը և թո ցանկությունները կկատարվեն, և Տերը ամենքին կհնազանդեցնի քեզ: Իսկ եթե չկամենաս լսել իմ խոսքերը և հակառակ դրանց հարձակվես իմ երկրի վրա, Տերը թո մտազրույթունը կցրի, թո ոտքերի ընթացքը չի հաստատի, թո զորքի սիրտը շուռ կտա, որպեսզի չկատարեն թո կամքը, ամեն կողմից քեզ համար նեղիչներ կհարուցի, և հաստատուն չի լինի թո իշխանությունը: Արդ, անտես մի առնի իմ խնդրանքները, և քեզ վրա կզան իմ օրհնությունները»:

(Երբ Մահմեդը ետան հասավ, պատմեցին նրան Հայոց կաթողիկոսի մասին և մատուցեցին գրվածքը: Երբ կարդաց, հարցրեց նրա վախճանի մասին, և պատմեցին նրան, թե՛ օդեռ չի գրված գերեզման», քանզի նոր էր վախճանվել: Երբ լսեց, անմիջապես վեր կացավ և այնտեղ գնաց. կանգնելով ննջեցյալի մարմնի մոտ՝ ողջույն տվեց, ըստ իրենց սովորության: Ինչպես լսել ենք ճշմարտախոս մարդկանցից, նա երկրորդեց և երրորդեց նույն խոսքերը: Ապա նրա ձեռքը բռնելով որպես կենդանի մարդու, խոսեց՝ ասելով. «Ճանաչեցի թո իմաստությունը այն մատյանից, որ ընթերցեցի, քանզի ըստ օրենքի, որպես քաջ հովիվ հոգալով թո հոտի մասին, փութացիր ընդառաջ գալ իմ խրոխտացող սրին: Համաձայն եմ իմ սուրբ ետ պահել անմեղ մարդկանցից: Արդ, կկատարեմ և կանեմ ամեն ինչ, որ այնտեղ հայցել ես

ինձանից, և թո բարեպաշտ օրհնությունը թող իջնի իմ վրա) Իսկ եթե թո խոսքերից որևէ մեկը չկատարեմ, թող իմ վրա գան այն բոլոր նշովքները, որ կարդացի թո մատյանի մեջ»:

Այս ասելով գնաց իր իջևանը:

Իսկ ովքեր Մահակ կաթողիկոսի հետ գնացել էին Հայոց աշխարհից, առնելով երանյալ հայրապետի մարմինը, տարան գերեզման և փառավորապես տապանի մեջ գրեցին: Նրանք Իսմայիլի զորավարից գրավոր⁵⁵ երգման խոսք վերցրին և վերադարձան Հայոց աշխարհ: Երբ մեր երկրի բնակիչները տեսան երգման և խոստումի գրավոր խոսքը, հավատացին նրան և այնուհետև ստրկական ծառայությունից ծաղայեցին իսմայելացիներին:

(Արդ-Մեկիք իշխանի տասնութերորդ տարում Մահմեդ զորավարը մեծ զորքով երկրորդ անգամ ելավ Հայոց աշխարհ և երեք տարի հանդարտ սպասեց ու ոչ ոք մի վազում չէր հիշեցնում այն անցքերի մասին, որոնք պատահեցին տաճկաց զորքի հետ Վարդանակերտ ավանում, այլ հմատատուն էր պահում այն գրավոր երգումը, որ ինքն էր տվել և միայն թաքուն հետևում էր Հայաստանի նախարարներին):

Այս ձևով վարելով իր իշխանությունը Արդ-Մեկիքը վախճանվեց:)

Գ Լ Ո Ի Ե Ժ

(Նրանից հետո որպես Իսմայիլի իշխան հաջորդեց նրա որդի Վլիթը [և տիրելով] տասը տարի ութ ամիս՝ վախճանվեց:)

Այսպիսին է նրա վարքագիծը:

(Իր իշխանության առաջին տարում սա խորհեց մեր Հայոց աշխարհից վերացնել նախարարական տոհմերը իրենց հեծյալների հետ միասին, այն բնի պատճառով, որ նրանք (արարները) ունեին Ամբաստ կուրապաղատի դեմ՝ նա ասում էր, թե «նրանք միշտ խոչընդոտ և գայթակղություն կլինեն մեր իշխանությունը»⁵⁶: Իսկ մինչդեռ այս շարությունն էին երկնում իրենց սրտերում, հենց այդ ժամանակ Ամբաստը, որի մասին խոսել ենք, անմիջապես գրեց Հունաց արքային և

նրանից օգնական զորք խնդրեց: Կայսրը, հավանելով կատարեց նրա խնդրանքը, բազում զորք դրեց մի զորավարի հրամանատարության տակ և որպես օգնություն առաքեց նրան: Մտախոսը և հունաց զորավարը միանալով՝ եկան հասան վանանդ գավառը, այն գյուղը, որ Գրաշպետ է կոչվում: Այնտեղ նրանք բանակ դրեցին:

Երբ Իսմայելի զորքի իշխանը՝ Մահմետը, լսեց այդ մասին, հավաքեց իր զորքը և մեծ պատրաստությամբ նրանց դեմ պատերազմի ելավ: Իրար մոտ հասնելով՝ նրանք գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ դասավորվեցին և պատրաստվեցին պատերազմի: Այնտեղ շուտով Տիրոշ բարկությունը նրանց վրա հասավ, հունաց պատերազմող ուղղմիկների սիրար թուլացավ և, փախուստի դիմելով, ընկավ իրենց ամբարջված բանակատեղին: Իսկ թշնամիները զորանալով, շատերին սրով կոտորեցին, և ասում են, թե ավելի քան 5 բյուր* սուսերամեթի ուղղմիկներ սպանվեցին: (Մահմետը) նրանց սակավաթիվ մնացորդներին մեր երկրից փախստական զարժրեց և, հավաքելով իր զորքը՝ դարձավ Դվին քաղաք: Երբ Իսմայելի իշխանը տեսավ, թե ինչպես հայ նախարարները հունաց զորքի առաջնորդներ եղան, Մահմետին հրամայեց նույն նենգ խորհուրդը (մտադրությունը) ի կատար ածել:

Ստանալով անիրավ հրամանը, Մահմետը կարգադրեց ոմն Կասիմի, որը հրամանատար էր նախճավան քաղաքի կողմերում, իր մոտ կանչել Հայաստանի նախարարներին, իրենց հեծյալներով մեկտեղ, պատճառաբանելով, թե իբր արբունի մարդահամարից պիտք է անցնեին, հող⁵⁷ ստանալին և վերադառնալին: Իսկ նրանք, սովորական պարզամտությամբ, հավատալով զաղտնի զավոդ-որսողների նենգությունը, անմիջապես այնտեղ ժամանեցին: Երբ հավաքվեցին, նա հրամայեց նրանց երկուսի բաժանել. ոմանց հավաքեցին նախճավանի եկեղեցում, իսկ մյուս կեսը ուղարկեցին Խրամ ավանը և նրա եկեղեցին նետելով՝ նրանց վրա պահապաններ կարգեցին և խորհում էին, թե ինչպես ուղնշացնեն նրանց: Բոլորին հավաքելով, ազատատուն մարդ-

կանց դուրս բերեցին արգելարանից, իսկ նրանց, որ սրբարանում արգելափակված էին, հրկիզեցին ու տուրքեցին աստվածային խորանի կամարների տակ: Գտնվելով նման դաժան սպառնալիքի առջև և տեսնելով, թե ամեն կողմից զրկված են մարդկային օգնությունից, ձերբակալվածներն ապավինեցին բոլորի Աստծուն և միայն նրան էին օգնության կանչում, ասելով. «Թու, որ նեղյալներին ապավեն ես, վտանգվածներին՝ օգնական, տանջվածներին՝ անդորրիչ, հասիբ օգնության նեղյալներին, փրկիր մեզ շրջապատող վտանգներից և դառն մահվանից, որ մեզ է սպասում: Քանզի ահա խիստ զորանում է մեր վրա բոցի տապը և առավել տուրում է մեզ, շրջապատելով յոթնապատիկ, քան Բաբելոնյան բոցի բորբոքումը: Այլ ինչպես երեք մանուկներին օգնության առաքեցիր հրեշտակի պահպանող զորությունը, մեզ ես անտես մի առնի քո զթությունից, քանզի մենք ևս քո ծառաներն ենք, թեպետ բազում անգամներ մեղանչելով՝ բարկացրել ենք քո քաղցր մարդասիրությունը: Թող քո բարկության ժամանակ հիշես ողորմությունը քո ծառաների նկատմամբ: Ահա քո սրբարանը և քո անվան փառքի վայրը մեզ համար գերեզման դարձավ: Գրա համար մենք էլ զոհանալով քո սուրբ ու ահեղ անունից, քո ձեռքն ենք հանձնում մեր հոգին, մեր շունչը և մեր մարմինները»: Այս ասելով, օրհներգությունը ի բարձունս վերառաքելով, ամենքս այս աշխարհից հեռացան:

Իսկ ազատանի նախարարներին բանտի կապանքների մեջ դրին, անհանդուրժելի խոշտանգումների ենթարկեցին, նրանցից պահանջելով բազում ոսկի և կշտով արծաթ. Խոստացան, որ երբ արծաթի սակը վճարեն, նրանց կենդանի կարձակեն: Այս բանի համար երգումով դաշինք կնքելով՝ հաստատում էին իրենց սուտ խոստումը: Իսկ սրանք նեղության վտանգի մեջ իրենց բազում մթերված գանձերը, որ նեղիչներից թաքցնելով պահեստի էին դրել թե ծովի մեջ, թե ցամաքի վրա, ավին թշնամու ձեռքը, որ գուցե կարողանան իրենց անձերը փրկել: Երբ իրենց գանձերից զրկվեցին, անօրհնները ձեռք զարկեցին նրանց և սպանեցին [կախազանի] փաշտից կախելով: Այնտեղ զոհվեցին Աշոտի որդի Մեթաալ Բագրատունի տոհմից, Գրիգորը և Կարյունը Արծրունի տոհ-

* Հիսուն հազար:

մից, Վարազ Շապուհուն ու եղբայրը Ամատունի տոհմից և շատ ուրիշներ Հայաստանի նախարարներից, որոնց մեկ առ մեկ չեմ կարող հիշել: Նրանց բոլորին կյանքից զրկելով՝ մեր երկրում նախարարներից ժառանգորդներ չմնացին:

Այդ ժամանակ մեր Հայոց աշխարհը թափուր մնալով նախարարական տոհմերից, գալչերի մեջ մնացած ոչխարների նման եղավ: (Թշնամիները ամենօրինակ շարիքներ պատճառեցին, և մեր Հայոց աշխարհի բնակիչներին այնպիսի անհուն, շար աղետների մեջ էին պահում, որ տանջվելով անդադար նեղութուններից երկինք էին բարձրացնում հառաչանքների և հեծության աղաղակները:)

(Իսկ Սմբատ կուրապաղատը և նրա հետ եղող նախարարները գնալով մեկնեցին մեր երկրից և անցնելով [սահմանը]՝ հունաց թագավորից խնդրեցին բնակության քաղաք և արտավայրեր իրենց ոչխարների հոտերի համար, և նա տվեց այն քաղաքը, որ Փուլթ է կոչվում՝ Եգեր աշխարհի կողմերում: Նրանք այնտեղ բնակվեցին 6 տարի:

(Այս ամեն շարիքները կատարվելուց հետո մեր երկրից բոլոր բարձրացավ, հասավ Իսմայելի իշխանի ականջը, որի անունն էր Վլիթ: Սա շուտափույթ հրովարտակ ուզարկեց, նրան (Մահմետին) իր մոտ կանչեց և փոխարենը առաքեց ոմն Արդու-Ազիզի, որը լսողությամբ խուլ էր, սակայն՝ խորագետ, լի իրկրավոր իմաստությամբ, հեքիաթասաց և առակախոս: Երբ իշխանության մեջ հաստատվեց, հրովարտակ գրեց Հայաստանի նախարարներին՝ համոզելով վերագառնալ իրենց երկրները և երդումով պայմանագիր⁵⁸ տվեց ըստ իրենց սովորության: Երբ [վերջիններս] վստահ եղան նրա ուխտադրությանը, գրավեցին իրենց բնակված քաղաքը, քաղաքի գանձերն ու եկեղեցու սպասքը հափշտակելով ավարի տվին և վերադարձան Հայաստան, անջատվելով Հունաց կայսրից: Իսկ կայսրը մորմոքեց՝ լսելով եղած ապիրատությունը և կանչելով եկեղեցիների առաջնորդներին, մետրապոլիտին և արքեպիսկոպոսներին, հրամայեց նրանց նդովք գրել մատյանում և կարգադրեց Զատիկի տոնի կատարման ժամանակ կարդալ այն ապիրատություն գործողներին վրա, քանզի այն տոնին էր կատարվել անօրեն գործը: Որոշվեց նույն տոնին ամեն տարի այդ նդովքը կարդալ մինչև

այսօր, որը և ազդեց նրանց վրա և եղավ նրանց կորստյան պատճառը:

Իսկ Արդու-Ազիզը տիրելով մեր Հայոց աշխարհին՝ խաղաղեցրեց (դադարեցրեց) բոլոր անիրավ հարձակումները մեր երկրում և Իսմայելի որդիների խրոխտացող անզգամությունը սաստիկ կշտամբանքով մեղմացրեց: Վերստին շինեց Կիլիս քաղաքը մեծությամբ առաջել հզոր և ընդարձակահիստ, քան եղել էր նախկինում, ամրացրեց դռներով և դռնափակելով, պարսպի շուրջը ջրով լցված խրամատ անցկացրեց քաղաքի ապահովության համար: Արդու-Ազիզն ասում էր իր մասին. «Կիլիսի առաջին ավերածության ժամանակ⁵⁹ իմ ձեռքով կատարվեց քաղաքի կործանումը, և ահա ես վերականգնեի այն: Ես տասներկու տարեկան մանուկ էի և ունեի կարմիր զենջակ, և երբ տանկաց զորքը մարտնչում էր քաղաքի դեմ, ես մտա խողովակի մեջ և ելա պարիսպն ի վեր ու իմ լեզվով ուժգին ձայնով գոռացի մեր զորքին, և նույն ժամին անմիջապես առաջապահ զորքերը, որոնք պարիսպն էին պահպանում, թուլացան և փախուստի դիմեցին: Իսմայելը վճռական հաղթանակ տարավ, և կործանեցինք քաղաքը: Ասվում է, որ այս բանը ինքն էր պատմում իր մասին:

Գ Լ Ո Ի Խ Ժ Ա

Այդ ժամանակներում զորավար Մահմետի սիրտը դարձյալ գրգռվեց ձենաց աշխարհի վրա, և նա մեծ զորք խնդրեց Իսմայելի իշխանից՝ խոստանալով նրան ձենաց արքային հնազանդ ծառայության բերել:)

Սա (խալիֆան) բազում զորք հավաքեց և տվեց նրա ձեռքը՝ մոտավորապես 200000: Մահմետը Դամասկոսի կողմերից զորքերի բազմությամբ շարժվեց արևելքի կողմերը, անցավ Ասորեստանը, Պարսից աշխարհը, Խորասանը ու գնալով հասավ ձենաց աշխարհի մի մասը, և բանակ դրեց Քոտիս կոչված հզորագույն գետի ափին: Հրովարտակ գրեց ձենաց արքային. «Ընչո՞ւ, ասում է, միայն դու ես որ ընդվզելով չես մտնում մեր իշխանի հնազանդության տակ, մինչդեռ բոլոր ազգերը մեզանից սարսափեցին: Դու ո՞ւմ

ապագային ելով մեզ շեռ հնազանդութիւն, շինի՞ թե մեզ քո ազգիկները տեղ ես դրել, որոնց մեզ պէնկած հոխորտում ես Արդ, եթե մեր ծառայութեան տակ շատնես, գիտցիր, որ քո երկիրը ահապատ կդարձնեմ [զրկելով] բնակիչներէն և քո թագաւորութեանը վերջ կտամ: Բայց շինի՞ թե անհոգաբար հապաղես իմ նամակին պատասխանել, այլ արագ ուղարկիր այն:

Սրբ Ճենաց Ճենրակուր⁶⁰ կոչված արքան նամակը կարդաց, իր մոտ կանչեց բոլոր փշտիարաններին և համհարզներին՝ խորհելու, թե ի՞նչ պատասխան տա: Խորհրդակցելով միմյանց հետ, նրանք հետեյալ պատասխանն են գրում.

«Արդյոք դու ավելի՞ հզօր ես, քան բոլոր թագաւորները, որոնք սկիզբներից մինչև օրս տիրել են աշխարհին: Բարեւալցիների թագաւորը, որ տիեզերքին տիրեց և մակեդոնացիներին ու պարսից [թագաւորները] ինչպե՞ս չկարողացան տիրել մեր երկրին: Գիտցիր, որ դու ավելի լիբր ես, քան որևէ շուն, և քո ոտնոցը խնեշտութեան է սիրում, որի հետեանքով քո շար ցանկութեանը և իմ գեղեցիկ կույսերի համբաւը քեզ հարկադրեց քո անձը և քեզ հետ եկած զորքերի անձերը գոհել. կարծես թե ձեր անձերի համար գերեզմաններ չկան Գամասկոսում: Արդ, գիտցիր, որ մեր երկիրը ոչ որի հպատակ չի եղել, և ես ևս այդ բանը չեմ ընդունի: Բայց եթե ինձանից բնծա ես խնդրում, ըստ թագաւորական օրենքի, կտամ քեզ, և խաղաղութեամբ կերթաս քո երկիրը»:

Իսկ Մահմետը դարձյալ լուր ուղարկեց Ճենրակուրին՝ ասուր ինձ, ասում է, 30 000 աղջիկներ, և ես խաղաղութեամբ կհեռանամ քեզանից, ապա թե ոչ, պատերազմով կելնեմ քո դեմ: Համաձայնեց Ճենաց արքան ուղարկված պատգամին և Մահմետին լուր ուղարկեց, ասելով. «Մնա քո բանակում, մինչև կատարեմ քո պահանջը»: Նա անմեղապես հրամայեց իր զորքերին դիպակով ծածկված սայլեր կազմել և իր ընտիր հեծյալներին, կուռ սպառազինութեամբ, սայլերի վրա բառնալ աղջիկների փոխարեն, որ խնդրել էր, որպեսզի կարողանա նրանց որսալ իր որոգայթի մեջ: Գալով գետի եզերքը՝ նրանց դիմաց բանակեցին: Սայլերի վրա կային ավելի քան 40 000 հեծյալներ: Ինքը՝ Ճենրակուրը, սակավաթիվ մարդկանցով բանակ դրեց նրանցից հեռու մի քանի ասպա-

րեզ այն կողմ: Նա լուր ուղարկեց Մահմետ զորաւարին, թե եկ [վերցրու] այն, որ ինձանից խնդրեցիր՝ 30 000 աղջիկները՝ որոնց ես ընտրեցի իմ ամբողջ իշխանութեանից քո պատվականների համար: Արդ, վերցրու քո զորքի պատվականներից ըստ իմ աղջիկների թվի, անցիր գետի այս կողմը և ես կտամ իմ աղջիկներին վիճակ գցելով, ում ինչ որ հասնի, որպեսզի խոսովութեան շինի քո զորքերի մեջ: Նա նավեր ուղարկել տվեց գետի այն կողմը, որպեսզի միանգամից բոլորն անցնեն նրա կողմը, իսկ նրանք միամիտ գտնվելով զորքերի պատվականներից՝ 30 000 մարդ ընտրեցին և անցկացրին գետի այս կողմը: Հենց որ անցումը վերջացավ, Ճենաց արքան հրաման տվեց հարձակվելու Իսմայելի զորքի վրա:

Սրբ պատերազմում իրար բարկեցին, անմեղապես դուրս եկան ծածկութեան տակ թաքնվածները և շրջապատելով սրով կոտորեցին, այնպես որ նրանցից ոչ ոք չազատվեց նուշիսի փախուստի դիմելով: Նավերի լարերը կտրեցին, որպեսզի նրանցից ոչ ոք չփրկվի, և ոչ ոք չապրից: Միայն Մահմետը, սակավ մարդկանցով, երիվարները հեծնելով գետն անցան, ապաստանելով իրենց երիվարները ուժին: Այնպես կորագուրս Ճենաց արքայի կողմից խախտառակված, գնացին իրենց երկիրը և այլևս չհամարձակվեցին պատերազմի դուրս գալ Ճենաց աշխարհի դեմ:

Իսկ [Իսմայելի իշխանը] 10 տարի և 8 ամիս ապրելով վախճանվեց:

Գ Լ ՈՒ Ն Ժ

Նրանից հետո իշխանութեանը ժառանգեց Սուլեյմանը [տիրեց] 2 տարի 8 ամիս և վախճանվեց:

Այս է նրա վարքագիծը:
Իր իշխանութեան երկրորդ տարում նա բազում զորք գումարեց, տվեց Մալիմ⁶¹ զորաւարին և առաքեց Կասպից դռները: Սրանք գալով մարտնչեցին Գարբանդ քաղաքում գտնվող հունաց զորքերի դեմ, հարվածեցին, հալածեցին և քանդելով ավերեցին ամբողջ ղալակապարխալը: Մինչդեռ ամբողջ պարխալն էին քանդում, նրա հիմքում գտան մի մեծ վեմ

քար, որ դրոշմված ուներ հետևյալ արձանագրութիւնը՝ «Մար-
կիանոս ինքնակալ կայսրը շինեց քաղաքը և այս աշտարակ-
ները, իր գանձերից բազում տաղանդ ծախսելով, իսկ հետա-
գայում Իսմայելի որդիները քանդելու են այն և ապա իրենց
գանձերով վերստին են շինելու»։ Երբ քարի վրա դրոշմված
արձանագրութիւնը գտան, պարիսպը քանդելուց դադարեցին
և վերակացու գործավարներ նշանակելով՝ վերստին շինեցին
կործանված պարիսպը։

(Ինքը՝ Մուխիմը, վերցնելով իր զորքի բազմութիւնը, ան-
ցավ Ճորա պահակը, ասպատակ սփռելով Հոնաց աշխարհում
և ապա գնաց բանակ դրեց Հոնաց Թարգու քաղաքի մոտ
Բակ երկրի բնակիչները, երբ տեսան գիշատիչ թշնամուն,
որը ելած էր իրենց դեմ, շուտափույթ իմաց տվին խաղաբաց
արքային, որ խաբան է կոչվում)։ Իր բազմամարդ զորքը և
բոլոր հաղթանդամ հսկայազուններին վերցնելով, որոնց
հզոր արիութիւնը հռչակված էր ամեն ազգերի մոտ, նա
եկավ բանակ դրեց նրա առջև։ (Շատ օրեր միմյանց դեմ մար-
տրելում էին, սակայն ոչ թե զունդը գնդի դիմաց, այլ ըմբշա-
մարտ կռուով)։ Խաբանը հապաղում էր կռիւ մեջ մտնել, սպա-
սելով Այլի Թարխանի գալստյանը, որին օգնութեան էր կան-
չել։ Երբ (Մուխիմը) տեսավ անհուն զորքերի բազմութիւնը, ինքն
իր մեջ վարանեց և խորհում էր, թե ինչպիսի հնար գտնի
նրանցից ազատվելու համար։ Նա (հրամայեց զորքին բանա-
կատեղիում ուժեղ կրակ գցել և թողնելով բանակի աղիւր,
հարձերը, ծառաներն ու աղախիները) և այլ խառնիճազանը
ամբոխ, (ճանապարհ ընկավ դեպի Կովկաս լեռը, կոտորելով
անտառները և ուղի բացելով, մազապուրծ ազատվեց թշնա-
մու ձեռքից։ Այսպես ամոթով լի, կորագլուխ վերադարձավ
Հոնաց աշխարհից)։

Այս ամենը կատարելով՝ Սուլեյմանը վախճանվեց։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

(Նրանցից հետո իշխանութիւնը ժառանգում է Օմարը⁶²,
որն [իշխում] է 2 տարի ու 5 ամիս և վախճանվում)։

Սրա մասին ասում են, թե ազնվագույն էր, քան իր ազգա-
տոհմի բոլոր մարդիկ։ (Նա վերադարձրեց այն գերայլիներին,

որոնց Մահմետը Հայոց աշխարհից դերել էր՝ մեր երկրի նա-
խարարներին այրելուց հետո)։ Նա բազում ամբոցներ էր
գրավել և տղամարդկանց ու կանանց գերեվարել։ Երբ Օմարը
իշխանութեան մեջ հաստատվեց, ազատ արձակեց բովանդակ
սերիներին, յուրաքանչյուրին իր տեղը [ուղարկելով] և իր
իշխանութեան տակ գտնվող երկրները խաղաղեցրեց։

(Սուլեյմ Օմարը նամակ գրեց՝ Հոռոմոց կայսր Լևոնին⁶³,
որպեսզի ճանաչի մեր հավատի էութիւնը։ Նրանում կային
բազում հարցեր⁶⁴) որոնք համառոտ կարձանագրեմ ստորև։

«Անվամբն Աստուծո հավատացելուց իշխան Օմարից հո-
ռոմոց կայսր Լևոնին։

Բազում անգամներ կամեցանք իմանալ ձեր կարծիքը ձեր
հավատի ուսմունքի մասին և հաճախ ձգտել ենք գիտենալ,
թե արդյոք ի՞նչ եք խորհում այդ մասին, սակայն երբեք մեզ
հնարավոր չեղավ վերահասու լինել։

Արդ, ստույգ ասա ինձ, նախ թե ինչու Հիսուս ասաց աշա-
կերտներին. «մերկ եկաք և մերկ էլ կվերադառնաք»⁶⁵, կամ
ինչո՞ւ չես ընդունում այն, ինչ ասաց Հիսուս ինքն իր մասին,
այլ [կամենում ես] ըննել մարդարեւների գրքերը և սաղմոս-
ները, որպեսզի այնտեղ վկայութիւններ գտնես Հիսուսի մար-
դացման մասին։ Դու երկմտեցիր և տարակուսի մեջ ընկար
ու բավական չհամարեցիր այն, որ Հիսուս վկայել է իր անձի
մասին, այլ հավատացիր մարգարեների ասածին։

Սակայն Հիսուս արդարև արժանի էր հավատալու։ Նա
մոտ էր Աստուծո և ամէլի լավ գիտեր ինքն իրեն, քան
[այն] գրքերը, որոնք փոփոխված և աղավաղված⁶⁶ են ազ-
գերի կողմից, որոնց դուք չգիտեք։ Կամ ինչո՞ւ եք արդարաց-
նում գրքերը ու հետևում նրանց այն [մտքերին], որոնք ձեզ
ճշմարտանման են թվում։ Դուք ասում եք, թե Օրենքները
բազում անգամներ գերվեցին և այն կորցրեցին Իսրայելի որ-
դիներից նրանք, որոնք ընթեռնում էին և գիտեին։ Եղան
որոշ ժամանակներ, երբ դրանցից ոչինչ չկար նրանց մոտ,
մինչև որ հետագայում մարդկանցից ոմանք, ըստ իրենց
իմաստութեան, գրի առան՝ ազգը ազգի ետեից և ցեղը՝ ցե-
ղի։ Սակայն նրանք մարմնեղեն էին Աղամի որդիներից և
կայրող էին մոռանալ ու տարակարծիք լինել, քանզի նրանց

մտա են գտնվում սատանան և նրանք, որոնք իրենց թշնամու
թյամբ նման են նրան:

Կամ ինչո՞ւ Մավսեսի օրենքների մեջ չեն հիշվում արքա-
յությունը, դժոխքը, դատաստանն ու հարությունը՝ Այդ մա-
սին ձեզ պատմել են նրանք, որ իրենց հնարամտությամբ
ավետարանը գրեցին՝ Մատթեոս, Մարկոս, Գուկաս և Լու-
հանես (Միխայիլը, որի մասին ավետարանում ասվում է,
որ Քրիստոսը պիտք է ուղարկի, ոչ այլ ոք է, եթե ոչ մեր
Մահմետը՝ կամ ինչո՞ւ Քրիստոսի աշակերտներից հետո քրիս-
տոնյա ազգերը 72 ցեղերի բաժանվեցին: Աստուծո անզու-
գական զորությունը զուգակցում էր հավասար և նման՝ ընկեր
ընդունելով երեք աստվածություններին: (Քուր օրենքները
չանում էր կամայականորեն փոփոխել, թլփատությունը
միտությունամբ փոխարինելով, զոհերը՝ օրհնության հացի ու
բաժակի հաղորդությամբ և կիրակին շաբաթի տեղ պատվե-
լով): Ինչպե՞ս կարող էր Աստված արյան ու մարմնի և պե-
պես ազատությունների մեջ արգանդում բնակվել: Եվ կամ
ինչո՞ւ առաքյալների ու մարգարեների ոսկորները պաշտում
էր, կամ խաչի նշանը, որն ըստ օրենքի [պատժի] դատա-
պարտության գործիք էր, ինչպես նաև պատկերները, որ
պաշտում էր: Եսայի մարգարեն վկայում է մեր օրենսդրի
մասին որպես Հիսուսի ընկերոջ, որը հավասար է նրան, քան-
զի մարգարեն իր տեսիլքի մեջ տեսավ նրանց որպես ուղեկից-
ների, ընդ որում մեկին էջի վրա հեծած, իսկ մյուսին՝ ուղտի
իսկ դուք ինչո՞ւ չեք հավատում:

Այս ամենի մասին վերահասու դարձրու ինձ, որպեսզի
կարենամ ձեր ուսմունքի էությունը ըմբռնել:

{ Այս ամենը և սրանից էլ ավելի ընդդիմաբանություն գրեց
Իսմայիլի իշխան Օմար Լեոն թագավորին, որի պատճառով
Լեոն կայսրը հարկադրված եղավ պատասխան գրել հետևյալ
ձևով: }

Գ Լ Ո Ւ Ե Ժ

«Փարիսն Լեոն՝ կայսր հավաստացյալ է տեք Հիսուս
Քրիստոս՝ մեր ճշմարիտ աստված և իրեն նանաչողների թա-
գավոր:»

Յմարին՝ Եստակիստների առաջնորդին:

{ Ինչպիսի՞ խոսքերով կարելի է ուղղագույն և ճշմարտա-
գույն ձևով պատասխանել այն [նամակին], որն առաքել ես
մեզ: } Մանավանդ որ Աստուծոց սովորել ենք հեղուկությամբ
խրատել ընդդիմակացիներին, որ թերևս նա ժամանակ սա
սպաշխարություն: Թագավորական օրենքները չեն [պահան-
ջում] խրանեցնող խոսքերով, քարի հարվածների նման
խփել այնպիսիներին, որոնք կամենում են լսել ճշմարտու-
թյան սրանչելի խորհուրդը: Բայց քանի որ թո գրություն
սկիզբը ճշմարտության գոնն փոքրագույն կերպարանքն իսկ
լուսներ, ապա [մեզ] ևս հարկավոր է ոչ ճշմարիտի մասին
չասել, թե արդար է:

Քանզի թո գրվածքում ասում ես, թե «բազում անգամներ
դրել ենք ձեզ մեր՝ քրիստոնեաներիս, աստվածային խորհրդի
մասին»⁶⁷ և թե կամենում ենք գիտենալ՝ ինչ եք խորհում
ձեր հավատի ուսմունքի մասին:»

{ Այսպիսի բան չէր կարող լինել և ոչինչ չէր կարող մեզ
ստիպել նման բաներ անելու: Քանզի չենք սովորել մեր
վարդապետից (ուսուցչից)՝ ու տիրոջից մեր միակ աստված-
գիտությունը օտար ուսումնականների առաջը դնել որպես
ծաղրի նյութ և մանավանդ այն մարդկանց, որոնք մարգարե-
ների կանխասացությունը և առաքյալների քարոզությանը
տեղյակ չեն: Այս նույնը մենք այլոց ևս սովոր ենք պատվի-
րել:

Այո, մենք բազում անգամներ գրել ենք քեզ և դարձյալ
կգրենք, եթե կարիք լինի, բայց [սոսկ] աշխարհիկ գործերի
մասին և ոչ աստվածային նյութերի շուրջը, եվ մենք, խրատ-
ված աստվածային ձայնից, թե «ավելք պատասխան ամեն
ինչի, որ հարցնեն ձեզ», իսկ եթե մեկը շարացնի, նրան շա-
տասխանեք: Մենք այլևս չենք կամենում իմանալ ձեր կար-
ծիքի զորությունը, այլ Աստված է մեզ [ուսուցանում]: Այս
առթիվ խրատված ենք, թե «ամեն ինչ ըննեցեք, իսկ ինչ
բարի է՝ ընդունեցեք»⁶⁸: (Արդ, մենք ունենք պատմությունները՝
գրված մեր երանելի եպիսկոպոսների կողմից, որոնք այն

⁶⁷ Ս. Սող., ԽՂ, 5 Սիբաթ, Ե, 14:

⁶⁸ Թեսաղ. Ե, 21:

ժամանակներում են ապրել. նույն ժամանակը եղել է նաև ձեր օրենսդիր Մահմետը և այդ պատճառով կարիք չկա քեզ տանջել նման հարցերով: Բայց մի կարծիք, թե կամալներ մեր սքանչելի աստվածագիտության համար, ևսիր, ապա եթե ախորժես և ինձ ունկնդրես, երկրի բարիքները կվայելար, ինչպես ասել է Նասրիսը:

Հուլիս ղովար է, ով մարդ, լիակատար սուտը հերքել, երբ հակառակորդը խորհում է միայն հակառակվել: Այսպիսին է հետևյալը՝ եթե երկու հոգի կրակին մերձենալով՝ նրանցից մեկը այն հուր կռչեր, ինչպես իրոք է, իսկ մյուսը հակառակելով ասեր, թե սա չրի աղբյուր է, հայտնապես կերևար հակառակասերի ստությունը:

Արդ, ասում ես, թե մեր Տերն ասել է ավետարանում. «Մերկ եկաք և մերկ էլ կվերադառնաք»: Մեր Տիրոջ ավետարաններում ոչ մի տեղ չենք գտնում այս խոսքերը, թեպետ և միշտ հրամայում է խոկալ մահվան մասին: Այլ այն Հորի խոսքն է, երբ արդարին սատանայական փորձությունների ենթարկեցին, նա ասաց. «Մերկ եկա իմ մոր որովայնից և այստեղից մերկանդամ կդառնամ: Տերը տվեց և Տերն առավ: Օրհնյալ լինի Տիրոջ անունը»: Բայց դուք սովորել եք խաբել՝ կցկատուր բաղելով սուրբ Գրոց վկայություններից, որոնք ոչ ընթերցել եք և ոչ էլ կընթերցեք: Ձեզ մոտ գտնվող աստվածավաճառները, այսինքն հավատավաճառները, ձեր տրամադրությունը որսալով, աստվածային գրքերի խոսքով ասած՝ ինչ որ իրենց պետք է, այն են շաղակրատում: Բայց թեպետ հպարտացած ես բռնապետությունքդ, լսիր իմ պատասխանները: Ասացիր, թե մենք Գավթի սաղմոսներում և մարգարեների գրքերում. վկայություններ ենք գտնում մեր տիրոջ մասին: Այժմ նոր չէ, որ նկատել ենք սուրբ Հոգու նման ասացվածքները, որոնք մարգարեների միջոցով ասված են: Աստուծո շնորհքով ու կամքով քրիստոնեական բարոզությունն սկսեց, հենց նրա միջոցով էլ կատարվեց և աճեց ու կաճի նույն արարչի և Աստուծո զորությունքդ:

Գրել ես, թե քրավական համարեցիր ու հավատացիր այդ բոլորին, անուշադիր թողնելով այն, որ Հիսուս Քրիստոս

վկայել է իր անձի մասին, երկմտեցիր և տարակուսեցիր: Նրանի թե, ինչպես դու ասում ես, իրոք հավատացիր Ավետարանին, որպես հաստատուն և անսխալ պատմության, քան որն է մեկ ուրիշին: Մենք հակասություն չենք գտնում Հին և Նոր [կտակարանների] միջև և ոչ էլ հնարավոր էր, որ բարության մեկ աղբյուրը, այսինքն աստվածությունը բխեր շարիք և բարիք, ճշմարտություն և ստություն: Եվ որպեսզի դուրբնկալ դարձնի հրեից անօրեն ազգին իր խոսքի (Բանի) գալուստը մարմնով՝ առականբով, օրինակներով և առավել հայտնի պատվիրաններով իր մարգարեների միջոցով զգուշացնում էր այդ ազգը, որպեսզի ըստ իրենց սովորության Քրիստոսի գալուստյան նկատմամբ անհավատ շմանա: Նրանց միջոցով Տերը վկայեց իր մասին ավետարաններում և այն, որ նա մարգարեների բերանով անմարմնաբար (հոգեպես) խոսեց, չի հակասում այն բանին, որ հետագա ժամանակներում մարմնանալով՝ հայտնապես խոսեց: Այս բոլորը Աստուծո շնորհով ամեն ինչ իր տեղում ցույց կտանք այս նամակում՝ ընդունելով բարձրագույնը, որպես դերմարդկային, իսկ խոնարհագույնը իբրև մարդկային խոստովանելով:

Երկրորդ, գրել ես, թե ասրդարև Հիսուս արժանի էր հավատքի և մերձավոր էր Աստուծո ու ավելի լավ գիտեր ինքն իրեն, քան գրվածքները, որոնք աղավաղված և փոփոխված էին ազգերի կողմից, որոնց չգիտեք:

Պատասխան. ճշմարտությունը չի կարող է-ն չէ ասել և չէ-ն՝ է, իսկ սուտը դյուրությունքդ ամեն ինչի վրա հարձակվում է, քանզի կարող է ուրանալ ոչ միայն երևելի արարածներին, այլև նույն ինքն արարչի մասին ասել, թե Աստված չէ: Ուստի զարմանալի չէ, թե սուտը աստվածային գրվածքները նույնպես կարող է ուրանալ կամ նրանց մեղավոր սկիզբ վերագրել:

Արդարև Հիսուս արժանի էր հավատքի ոչ որպես սոսկ մարդ, զորիկ աստվածային իմաստությունից, այլ երկու կողմից կատարյալ՝ թե որպես աստված, թե որպես մարդ: Արժանահավատ են նաև մարգարեների միջոցով ասված նույն խոսքի (Բանի) ասացվածքները, ոչ այն բանի համար, որ մարդիկ խոսել են նրանց մասին, այլ ոչովհետև նրանց

* Յովր, Ա, 21—22:

միջոցով հոգեպես խոսեց Աստուծո խոսքը (Բանը), Նրանք խառն են թե Հին, թե Նոր [կատարաններում] և այդ պատճառով իրար չեն հակասում:

Դու ասում ես, թե [սուրբ] գրքերը աղավաղված են. եթե այդ բանը քո ուսմունքի առաջնորդն է սովորեցրել, ապա ինքն իրեն մոռացել է [հիշատակել], իսկ եթե այլ ոք է ասել, առավել ևս ստել է: Արդ, լսիր և լավ խորհիր. քո ուսմունքի առաջնորդը չի՞ ասել, թե որևէ բան կարելի է հաստատել միայն վկաներով և նմանապես ասել է, թե օրենքը հրամայում է, որ «ամեն ինչ նրկու և երեք վկաների բերնով պետք է հաստատվի»*: Գիտենք որ Արքաճամբ ամենից առաջ է ընդունել Քրիստոսի մասին ավետիսը, երբ Աստված ասել էր նրան. «Քո զավակի միջոցով թող օրհնվեն երկրի բոլոր ազգերը»* և Սահակը (Իսահակ) այսպիսի հույսով օրհնել է Հակոբին, իսկ Հակոբը նույնպես օրհնել է իր որդուն՝ Հուդային, «Հուդա, քեզանից կծնվի մեկը, որ կլինի իշխան և նրա պետը, մինչև զան գալիքները, և նա է հեթանոսների ակնկալությունը»⁶⁸:

Քանզի Մովսես նրա մասին օրենսդրեց և պատվերներ տվեց Հեսուին, Դավթին, Սողոմոնին և տասներկու մարգարեներին՝ Սամուել, Եզրա, Եզրիս, Եսայի, Երեմիա, Դանիել, Եզեկիել [մարգարեներով] հանդերձ, [ինչպես նաև] արդար Հոբին, Զաքարիայի որդի Հովհաննես Մկրտչին: Սրանց վրա ավելացրու մեր տիրոջ տասներկու աշակերտներին, ինչպես նաև յոթանասունին և միանգամից հներին ու նորերին՝ 111 հոգի: Արդ, դու համաձայն չե՞ս այսքան պրբերի և Աստուծո սիրելիների հետ, որոնք խոսել են Քրիստոսի գալուտյան մասին և որոնց մասին քո Մահմետը վկայել է, թե Աստուծո սրբեր ու ծառաներ են: Դու քո Մահմետին ավելի ես հարգում, քան Աստված, որ խոսեց նրանց հետ և Աստուծո խոսքը (Բանը), որ երևաց մարմնով:

Արդ, համառոտ եմ հարցնում, աղաչում եմ, ասա, ո՞րն է ճշմարիտը՝ Աստուծո 111 ծառաների վկայությունը, որոնք նույնն են ասում և նույնի մասին, թե մի այլախոհի, այլի-

մայի և ստելով իրեն ճշմարտախոս կարծողի [տեսակետը]: Ահա այս է ստելով ճշմարիտ խոսելը: Քո Մահմետը սովորեցրել է՝ ձեզ ընդունել վերագրյալ սրբերին, Աստուծո ծառաներին ու սիրելիներին, սակայն չի ընդունում և այլոց սովորեցրեց ընդունել այն, ինչ նրանց միջոցով խոսեց Աստված:

Ասացիր, թե «ինչպե՞ս եք արդարացնում հրեաների գրքերը և ընդունում եք նրանցում ձեզ համոզիչ թվացող [մտքերը]: Թեև դուք ասում եք, թե այդ օրենքները բազում անգամ պերվել են, կորել են: Իսրայելի այն որդիները, որ կարգում էին, գիտեին նրանցում եղածը և եղան ժամանակներ, երբ նրանցից ոչինչ չէր մնացել նրանց մոտ, մինչև որ դրանից հետո մարդկանցից ոմանք ըստ իրենց հասկացողության և կամքի գրեցին ազգը (սերունդը) ազգի ետևից և ցեղը՝ ցեղի: Նրանք մարմնեղեն էին՝ Ազամի որդիներից, որոնք մոռանում են և տարբեր կարծիքներ են ունենում, քանզի սատանան և նրա նմանները մոտ են նրանց իրենց թշնամությունը»:

Պատասխան. զարմանում եմ և զարմանում, ոչ թե ձեք անհավատություն վրա, այլ թե ինչպե՞ս չեք ամաչել այն հայտնի, այլ դեռ գրով էլ ավանդել եք, որպեսզի առավել ևս ծիծաղելի դառնաք: Դուք կարծում եք, որ կարող եք մեր խոսքերով մեզ զայթակողեցնել: Քո թղթի գույտը սկսելով մեր սասցվածքներով, կարծում ես, որ կհավատացնես, թե դուք եք ասել: Արդ, եթե մեր ասացվածքները ընդունելի են ձեզ, դու պարտավոր ես ամբողջովին հավատալ, քանզի ոչ ոք ստով վկայություն չի տա. դա նշանակում է վկայության մի մասը ընդունել. իսկ մնացածը՝ մերժել: Բայց որովհետև տեղյակ չես այս բաներին, լսիր ու սովորիր: Մենք ասում ենք, թե հրեաները օտարություն մեջ ոչ թե իրենցից ստեղծել են զրույցներ, այլ տեղեկացել են երբայցեի աստվածասեր մարդկանց ստույգ պատմություններին, ինչպես նաև հենց իրենց մարգարեների գրքերին: Աստուծո առաջին վեց օրում ստեղծված արարածների թիվը 22 է, 22 են նաև աստվածային գրքերը⁶⁹, թե՛ երբայցիցիների, թե՛ մեզ մոտ, նույնքան է նաև նրանց այբուբենի թիվը, թեպետ և նրանցից հինգը ունեն կրկնակներ, և սա առանց մեծ խորհրդի չի արված: Այս բանը Աստված իր մարգարեների միջոցով հայտնել և

* Մատթ. ԺԷ, 16:

* Սենդ. ԹԲ, 18:

կարգել է, որպեսզի նրանց մեջ եղած նշմարտութունները երևան: Այս 22 գրքերից հինգը օրինաց* [գրքերն] են, որ հրքայեցիք՝ Քորա, ասորիները՝ Օրաթա, իսկ մենք նմոս ենք կոչում: Նրանք պարունակում են աստվածագիտության էությունը և աշխարհի աստվածային արարչագործությունը, հեթանոսական կուռքերը շարժելու պատվերը, Արրահամի մոտ եղած ուխտը իր զավակի մասին, որը Քրիստոսն է և այլ պես-պես հրամաններ դատաստանների և զոհերի մասին, որպեսզի նրանց հրաժարեցնեն հեթանոսական սովորություններից, որոնց սովոր են: Հեսուի, Դատավորաց, Հաութի, Թագավորությանց շորս գրքերը և Մնացորդացը ըստ ժամանակի պատմում են Աստուծո արարչագործությունը, արդարների անսխալ սոհմարանությունը, որ գալիս կարգով իջնում է մինչև Քրիստոս, [հազորդում են] Իսրայելի Թագավորների պատմությունները, թե ո՞ր մեկը Աստուծոն հաճելի էր եղել և որը՝ ոչ, ինչպես նաև նրանց հանցանքների պատճառով [հրեա] ժողովրդի բաժանումը երկու Թագավորության՝ Իսրայել ու Հուդա, և պատմությունը նրանց գերության: Իսկ Դավթի սաղմոսները, Սողոմոնի գիրքը, որը երբայեցիների մոտ կոչվում է Կոհենդեթ ու Շիրաթշիրիմ¹⁰ և մենք Պատիմոն ու Սամատան ենք կոչում, ինչպես նաև տասներկու մարգարեները և Եսայի, Երեմիա, Դանիել ու Եզեկիել: այս բոլոր գրքերը Քրիստոսի գալստյան մասին մարգարեություններ են: Արդ, եթե հրեաներից որևէ մեկը շփոթելով ապականեր, ապա այդ գրքերը ամբողջական չէին մնա, քանզի շարագործները նախ գրքերի թիվը կջնջեին և մեկ կամ երկու և կամ թերևս երեք գրքի մեջ կհավաքեին: Նրանք կարող էին հավելվածները վերացնել, քանզի շնչելը նրանց համար շատ դյուրին էր:

Գարծյալ կարծում եմ, որ անտեղյակ շեռ այն թշնամությանը, որ քրիստոնյաներիս ու հրեաների միջև կա, և դա սուսկ այն բանի համար է, որ մենք խոստովանում ենք Հիսուսին, թե նա է Քրիստոսը, որ մարգարեների կողմից քարոզվեց որպես որդի Աստուծո: Իսկ հրեաները նրան չեն կոչում Քրիստոս, այլ ընդունում են, թե Քրիստոսը պետք է գա

Նրանք չհավատացին մարգարեների գրքերին և այսպիսով Քրիստոսին չեն խոստովանում որպես որդի Աստուծո: Արդ, ինչպե՞ս է լինում, որ գրքերի ապականիչները այսպիսի հաստատուն և անտարակուսելի վկայությունները թողել են իրենց գրքերում և կամ ինչպե՞ս են նրանք ավելացրել, երբ այդ [վկայությունները] ոչ մի այլ բանի չեն կարող վերարկրել, թեկուզ մեկն այն բունդատի, քան հենց Աստուծո մարմնացյալ որդուն:

Ընդունիր և իմ երրորդ պատասխանը. հրեաների գերությունը եղավ նախքան Քրիստոսի մարմնով գալուստը: Արդ, ինչպե՞ս դեռ նրա ժամանակ հաստատուն կային և տաճարը և կտակարաններն ու քահանայությունը, ինչպես դա հայտնի է սուրբ ավետարաններից և որպես դու իսկ վկայել ես Տիրոջ, թլփատության և այն ամեն ինչի մասին, որ նա ըստ ավետարանների կատարեց: Այս բանը նա արեց ոչ այլ բանի համար, քան արդարացնելու մարգարեների միջոցով իր ասածը և ցույց տալու, թե դրանք իրեն հակառակ չեն, այլ սիրելի են և հաստատուն վկանքն են նրա մարդկություն խորհրդի: Ինչպիսի՞ն էին հրեաների կտակարանները, եթե ոչ մարգարեների գրքերը, որոնք Իսրայելի ու Հուդայի կրկնակի գերությունից հետո հրեաների մոտ կային մինչև մեր փրկչի ժամանակները: Դրանց մասին Տերը բազում վկայություններ է բերում ավետարաններում ուսուցանելու համար անհավատ հրեաներին: Հրեաների ազգը գերի տարվեց Նաբուզոդոնոսորի կողմից, սակայն աստվածային նախախնամությունը թույլ շտվեց, որ նրանց հետ կատարվի այն, ինչ այժմ պատահում է գերյալների հետ, այլ բովանդակ ազգը բնակեցվեց իր ուզած տեղերում: Նրանց մոտ էին նաև գրքերը և մարգարեներից ոմանք, ինչպես Եզեկիելը, որն ասում է ինքն իր մասին. «Նս գերության մեջ էի Քոբար գետի ափին»¹¹: Անանիան և մյուս երանելիները Բաբելոնում հնոցի մեջ ընկան և մեծն Դանիելը մարգարի զարձավ Բաբելոնում և այնտեղ առյուծների գուբն ընկավ և նույն տեղում էր, որ տեղի ունեցան Ծաթի հետ կապված դեպքերը: Բայց որ նրանց մոտ կային գրքեր, [այդ մասին] լսիր սուրբ Հոգուն, որը մար-

* Հեզամատյան

¹¹ Եզեկ. Ա, 1:

գարեի միջոցով Սաղմոսի մեջ խոսում է հրեաների գերության մասին, որը թեպետ տակավին չէր պատահել, սակայն անսխալ հիշատակվել էր գալիք դեպքերը ՃԼԶ (136) սաղմոսում¹⁾, ասելով «Բարեխոնի գետերի մոտ նստում էինք և լալիս՝ հիշելով Սիոնը: Նրանց մեջ ուսիների վրա կախում էինք մեր քնարները, քանզի մեզ գերողները երգ էին խնդրում և մեզ կողոպտողները՝ օրհնության խոսքեր»:

Իսկ որ ասում ես, թե «մանկային իմաստությամբ գրված գրքեր են», գիտեմ որ կամենում ես բամբասել Եզրի երկրորդ [խմբագրման հարցը]: Նրա վրա իջել էր սուրբ Հոգու շնորհքը, և նա առանց վրիպումների ամեն ինչ գրեց: Եվ երբ ամբողջ [հրեա] ժողովուրդը այն երկրներից, ուր սփռված էր, վերադարձավ Երուսաղեմ, իր հետ բերելով գրքերը, այնտեղ երևացին Աստուծո հրաշալի գործերը, քանզի [համեմատելով] հին գրքերը Եզրի [խմբագրած] պատմության հետ՝ ոչ մի պակաս չգտնվեց:

Ասում ես, թե «մարդիկ էին և կարող էին մոռանալ» մարդիկ միշտ ամեն ինչում տկար են, պակասամիտ և մոռացկոտ, սակայն Աստված հավիտենական է, մեծ է գործությամբ, նրա իմաստությունը սահման և եզր չունի և որի մոտ չկա տարակուսանք կամ մոռացման ախտ, խոսեց մարդկանց հետ մարգարեների՝ իր ծառաների միջոցով: Նա խոսեց մարգարեների միջոցով, որոնց նա առանց մարդկային իմաստության չի թողել: Իսկ քո Մահմետը, արդյոք դու նրան մարդ չե՞ս համարում, որի խոսքերով միայն դու արհամարհում ես Աստուծո այսօրան սրբերի վկայությունները: Գու ասում ես, թե «սասանան մոտ է Աստուծո ծառաներին, իսկ Աստված՝ ամենեկին ոչ»: Սակայն տրամաբանող մարդիկ գիտեն, որ եթե մեկը գրքերի վկայությունները չգիտի, ապա նրան է մերձենում սատանան և ոչ այն սուրբ և աստվածահաճո մարդկանց:

Գրքերի մասին այսքանը բավական է:

Իսկ որ ասում ես, թե «Մովսեսի օրենքների մեջ չենք գտնում արքայության ու դժոխքի, դատաստանի և հարության մասին», դու չես կամենում հասկանալ, որ Աստված ուսուցանում է մարդկանց այնքան, ինչքան մարդիկ կարող են ընկալել աստվածային գիտությունը: Ոչ թե մեկ մարգարեի

միջոցով խոսեց Աստված մարդկանց հետ և ոչ էլ մեկ անգամ, ինչպես դու ես կարծում, թե իբր ինչ որ Աստված պատվիրեց մարդկային ցեղին՝ ամենը Մովսեսի միջոցով հաղորդել: Ո՛չ, այդպես չէ, քանզի ինչ որ նրան պատվիրեց, չէր պատվիրել նրանց, որ Նոյից առաջ էին, իսկ ինչ պատվիրեց Աբրահամին, չէր պատվիրել Նոյին, նույնպես և Մովսեսինը չէր պատվիրել Աբրահամին, և Հեսուիսը չէր պատվիրել Մովսեսին, իսկ Սամուելին, Դավթին և այլ մարգարեներին իրենց ժամանակներում [պատվիրածը] չէր պատվիրել Հեսուին: Ինչպես նախապես ասել ենք, Աստված կամեցավ իր էությունը և իր կամքը սակավ առ սակավ ծանոթացնել մարդկային ցեղին, քանզի մարդիկ չէին էլ կարող միանգամից ըմբռնել նրա սքանչելի ուսմունքը:

Արդ, եթե Աստված ամեն ինչը մեկ մարգարեի միջոցով ասած լիներ, ինչո՞ւ պետք է ուղարկեր նաև այլ մարգարեներ: Կամ եթե նրանց թույլ էր տալիս ամեն ինչ աղավաղել, ինչպես դու ես ասում, ինչո՞ւ խոսեց նրանց բերնով: Թեպետ և Մովսեսի միջոցով Աստված միայն նախնական ուսմունքն էր ուղարկել մարդկանց և ոչ տակավին կատարելագույնը, այսուհանդերձ նրա մոտ էլ Աստված նշեց հարությունը, դատաստանը և դժոխքը: Հարության մասին ասում է՝ «տեսն՞ք, ես եմ Աստվածը, և չկա Աստված, բացի ինձանից: Սպանում եմ և ապրեցնում, հարվածում եմ և բժշկում, և ոչ ոք իմ ձեռքից չի փրկի ձեզ»²⁾ Իսկ դատաստանի մասին ասում է՝ «կարեմ սուսերը փայլակի նման և վրեժխնդրության համար կարճակեմ իմ աչքը»³⁾ և դարձյալ «դատաստանի վրեժ կխնդրեմ իմ թշնամիներից, և իմ ատեիները կհատուցեն»⁴⁾, Իսկ դժոխքի մասին՝ «իմ բարկության հուրը բորբոքված է և կայրի մինչև ներքին դժոխքը»⁵⁾, սակայն առավել կատարյալ և զարգացած [ուսմունքը] այս մասին այլ մարգարեների միջոցով ավելի բացահայտ ասված է:

Իսկ որ ասում ես, թե «Մատթեոս, Մարկոս, Դուկաս և Լովհաննես գրեցին ավետարանները», գիտեմ, որ մեր քրիս-

¹⁾ Բ. օր. ԼԲ, 39:

²⁾ Բ. օր. ԼԲ, 41:

³⁾ Բ. օր. ԼԲ, 41:

⁴⁾ Երեմ. ԺԷ, 4:

տոնեական ճշմարտութիւնից զու նեղվում ես և կամենում քո ստույթիան ընկե՞ր գտնել, որպէսզի մենք ասեմք: Քե Աստված այն գրված իշեցրեց կրկնքից, ինչպես զու քո Փորկանի⁷² մասին ասում ես: Քեպես մենք անտեղյակ շենք, որ այն գրեցին Օմարը, Աբու Քուտաբը⁷³ և Մալման պարսիկը⁷⁴, իսկ զուք ստելով հայտարարում եք, թե Աստված երկրնքից իշեցրեց:

Արդ, իմացիր մեր՝ քրիստոնյաներիս, ճշմարտութիւնը, քանզի եթե այդ այդպես լիներ, ինչպես զու զրպարտում ես, թե իբր հետագայում են ավետարանները հորինվել մեր կամ այլ մեկի կողմից, ի՞նչը կարող էր մեզ արգելել վերացնելու ավետարանիչներին անունները և գրել, թե Աստված երկնքից ցած է իշեցրել: Արդ, այս ևս նկատիր, որ Աստված չկամեցավ աննյութական, դեմ հանդիման ասված խոսքերով և ոչ էլ հրեշտակներին մարդկանց մոտ ուղարկելով՝ խրատել նրանց: Սակայն նրանց միջից մարգարեներ ընտրեց և ներանց առաքեց: Դրա համար Տերը, կատարելով իր նախօրոք սահմանածը, որը մարգարեների միջոցով խոսել էր նախքան մարմին առնելը և գիտենալով, որ մարդիկ Աստուծո՞ւ օգնականութիւնը կարոտ են, խոստացավ նրանց ուղարկել սուրբ Հոգին, որպես պառակղիտոս, այսինքն մխիթարիչ, քանզի տրտում էին ու սգում՝ լսելով իրենց վարդապետից և տիրոջից, թե թողնելու է նրանց: Ինչպես ասացինք, նա այդ պատճառով սուրբ Հոգին կոչեց պառակղիտոս, որպես իսկական մխիթարիչը իր համբարձման համար [տրտմողների] և որպես հիշեցնողը նրա բոլոր ասածների և նրանց առջև գործածների, որ նրանք պետք է գրեին (տարածեին) ամբողջ տիեզերքում: Արդ, գիտցիր, որ պառակղիտոսը մխիթարիչ է կոչվում և ոչ Մահմաա⁷⁵, այսինքն գոհանամ՝ եվթաոխստե մեր լեզվով, որը պառակղիտոսը չէ:

Արդարև, այս հայհոյութիւնները շեն կարող թողութիւն արժանանալ, ինչպես Տերն ասել է ավետարաններում, թե «ով սուրբ Հոգուն հայհոյի, նրան չի ներվի»^{*}: Սրանից ավելի շար ի՞նչ հայհոյութիւն կարող է լինել, քանզի սուրբ Հոգի եք անվանում մի մարդու, որը զուրկ է աստվածային

գրքերի գիտութիւնից: Սուրբ Հոգու մասին Տերն ասաց, «Լսիր նրանց իսկ ասածներին», իսկ մխիթարիչը՝ սուրբ Հոգին, ասում է. «Ում որ իմ հայրը կուղարկի իմ անվամբ, նա է, որ ձեզ ամեն ինչ կսովորեցնի և ձեզ կհիշեցնի թե՛ սովորեցրի ձեզ»^{*}: Ասում է. «Ում որ իմ հայրը կուղարկի իմ անվամբ», իսկ քո Մահմետը չեկավ հանուն մեր Տիրոջ, այլ իր անունով: Սուրբ Հոգին ոչ թե մարդկանց ասաց, այլ սրբերին, այսինքն աշակերտներին, և դու ինքզ գիտես, որ տիրոջ առաքյալները երբեք չեն տեսել քո Մահմետին:

Արդ, ինչպես վերևում ասացի, մեր արարիչը ամեն մի մարգարեի միջոցով ժամանակ առ ժամանակ իր աստվածային գիտութիւնն էր ուսուցանում: Սակայն նա միայն մարգարեների միջոցով չկատարեց ամեն ինչ, որ անելու էր մինչև հավիտենական արդարութիւն գալուտը: Դանիել մարգարեի միջոցով Աստված բացահայտեց երեք փոփոխմունքները, որոնցով մարդիկ կարող էին հասնել ճշմարտագույն աստվածագիտութեանը՝ կապալաշտութիւն խաւարից լույսի օրենքների շափավոր ճաճանչը, գրանից դեպի Քրիստոսի ավետարանի հզորագույն լույսը և ապա ավետարանից դեպի հանդերձալ անմար լույսը: Չորրորդ փոփոխումը, վարդապետութիւնը կամ խոստումը, մարդիկ այլ մարգարեներից շատացան, այլ գրան հակառակ նրանք նույն ինքն փրկչից հաճախակի պատվեր ընդունեցին՝ նրա աշակերտներից բացի չընդունել ոչ մի մարգարե կամ առաքյալ:

Իսկ որ ասում ես, թե Տիրոջ աշակերտներից հետո մենք լոթանաստներկու մասի բաժանվեցինք, ապա այդպես չէ: Ստույթամբ ինքզ քեզ մի մխիթարիչ, թե կարող ես օրինակ բերել մեր սխալները: Արդարև նախատինքի արժանի է քո վիճակը, քանզի նման չէ Աստուծո ծառաների վիճակին: Ինչո՞ւ է այդպես, ես կասեմ քեզ. ձեր վարդապետութիւնը պատկանում է մի ժողովրդի և մեկ լեզվի և դրա երևան գալու ժամանակը, ինչպես զուք ասում, 100 տարի⁷⁶ է կամ փոքր-ինչ ավելի կամ պակաս: Արդ, այդքան կարճ ժամանակում մեկ ժողովրդի ուսմունքը, տեսնում ենք, որ բազում աղանդների է բաժանվել: Դրանից ինչ որ մեզ հայտնի է գարձել, հետևյալն է⁷⁷. Քավզի, Սարաբի, Քուրապի, Կնարի,

* Մատթ. ԺԲ, 31:

* Յովն. ԺԿ, 26:

Մարտի, Քաղի, անասնաբուծական Զահրի, որոնք ուրանում են Աստուծո խոթումը, հարուստներ և թո ասած մարգարեին, ինչպես նաև Հարություն Այս Հարություն երկու մասի է բաժանվում մի մասը խոտմարար է, իսկ մյուս մասը ձեր հանդեպ այնքան հակառակություն և ատելություն ունի, որ ձեզ սպանելը ավելի լավ է համարում, քան ամեն մի արդար գործ, ձեզ համարելով և կոչելով անասնաբուծ ու թշնամի նրանք ձեզանից սպանվելը ամենազյալար բարեգործությունն են համարում: Այս արվում է, բանի որ դու քեզ մի փոքր տարակարծիք եղողներին արով կոտորելը Աստուծո գեղ մեղանշել չես համարում:

Ահա քեզ մոտ նման բաներ են կատարվում, մինչդեռ դուք մի ազգ ենք, մի լեզու, [ունենք] մի ազգագրիտ, որն իշխան է, քահանայագրիտ և դահապետ: Եթե արդարև մարդկային իմաստությունը էր կազմավորված քրիստոնեական հավատը, գարմանալի չէ՞ր լինի, թե մեր հավատը ձերից գաղթարագույն լիներ, 800 տարի է, փոքր-ինչ պահաս կամ ավելի այն ժամանակից, որ Քրիստոս երևաց, ավետարանը տարածվեց բոլոր ազգերի մեջ և մարդկային բոլոր լեզուներով, տեղեկություն մեկ ծայրից մյուսը՝ հունաց ու հռոմայեցոց տերություններում և հեռավոր բարբարոսների մոտ: Եվ եթե որևէ տարբերություն է գրացվում, ապա լեզուների տարբերությունից է: Ինչպես ասացի, դա փոքր է և ոչ այնպես աննորոգ թրշնամություն, ինչպես ձեզ մոտ: Կա Գու տունը ես՝ 72 [աղանգներ ունենք]: Չլինի՞ թե մեզ համարում ես հեթանոսներ, նմանեցնելով այնպիսիներին, որոնք պիղծ և ազտեղի էին հեշտասիրության մեջ, Աստուծո նկատմամբ՝ ամբարիշտ և իրենց գարշությունը ձգտում էին Քրիստոսի ամենատարբեր անվան տակ թաքնվելով՝ իրենք իրենց քրիստոնյա կոչել: Մրանց հավատքը հաշտություն էր, մկրտությունը՝ պղծություն, որոնց՝ պղծությունից դարձի գալուց հետո, սուրբ եկեղեցին մկրտում էր որպես հեթանոսների և որոնց Աստված վաղուց ոչնչացրել էր, և հետք չէր մնացել: Մենք՝ քրիստոնյաներս, յոթանասուն ժողովուրդներ ենք, և ամենքս էլ ընդունել ենք մկրտությունը, որպես սուրբ և հավանական կյանքի գրավականը: Իսկ եթե լինեն այնպիսիները, որոնք մասամբ այլ կերպ են մտածում, ապա դրանց [կգտնենք]

հեռավոր երկրներում, այլալեզու մարդկանց մեջ և մահավանդ ձեր քահայությունյան տակ ապրողների մեջ: Մակաչի արանք ևս քրիստոնյաներ են և պետք չունեն վերստին մկրտություն: Եվ գարմանալի չէ, որ հեռավորներն ու այլալեզուները այնքան էլ տեղյակ չեն ճշմարտության ավանդներին, ինչպես որ հարկավոր է: Մակաչի նույն գիրքը՝ ավետարանը, բոլոր լեզուներում ամբողջական է պահված, առանց սխալանքների: Արդ, չհիշելով շատ լեզուներ, որոնցով այս սրանլիկ փրկչական աստվածագիտությունը տարածվեց, միայն քերթն կհիշեմ, առաջին՝ մեր հունաց, երկրորդ՝ հռոմայեցոց, երրորդ՝ եբրայեցոց, չորրորդ՝ քաղղեսացոց, հինգերորդ՝ ասորվոց, վեցերորդ՝ հիբովաացոց, յոթերորդ՝ հնդկաց, ութերորդ՝ ձեր՝ սառակիստաններից, իններորդ՝ պարսից, տասներորդ՝ հայոց, տասնմեկերորդ՝ վրաց, և տասներկուերորդ՝ աղվանից [լեզուները]:

Արդ, ըստ թո ասածի [եթաղները], որ մեկ կամ երկու ազգի մոտ, իրոք, գրքերն ազգավաղվել են: Իսկ ինչպե՞ս [եթաղներ], որ ազգավաղվել են այլ ազգերի մոտ ևս, որոնք, ինչպես գիտեք, հույժ հետո են մեզանից և իրարից օտար են լեզուներով և սովորություններով: Թայց դուք սովոր եք նման բաներ անել, մարմավանդ այն Հաշազը⁷⁸, որը Պարսից երկրում ձեր կողմից կառավարի էր կարգված, հավաքեց ձեք բոլոր հին գրքերը և, ըստ իր ցանկության այլ բաներ գրելով, ձեր ամբողջ ժողովրդի մեջ բաշխեց: Քանզի շատ գյուրին էր մեկ ազգի և մեկ լեզվի մեջ այսպիսի բան կատարել, ինչպես եղավ ձեզ մոտ: Այսպիսով սակավ բան մնաց Աբու Թուաբի գրքերից, քանզի [Հաշազը] չկարողացավ ամեն ինչ ոչնչացնել: Իսկ մենք նախ աստուծոյ հրաման ենք ստացել Աստծուց՝ չհանդգնել այդպիսի բան անել, և այդ եթե որևէ մեկը հանգզներ ընդգիմանալ նրա հրամանին, ապա դարձյալ անհնար էր մի տեղ հավաքել այդքան լեզուներով տարածված գրքերը և խնամքով ըստ յուրաքանչյուր լեզվի ստուգել, փնտրել և նշանակել այդքան թարգմանիչների, որպեսզի գրքերից չնշեն ինչ որ կամենան և ավելացնեն՝ ինչ որ իրենց ախոքմելի է: Այն էլ մի անգիտացիք, ինչպես և դու ինքդ ասացիր, որ մեր քրիստոնյաների միջև հակառակություններ կան, թեպետ ոչ կարևորագույն խնդիրների շարքը:

Ապա, ինչպես տարբեր ազգերի գրքերը, չեն փոխել ըստ իրենց ցանկութեան Սահայն քրիստոնյաներին, ոչ հետազոտողներին և ոչ էլ մերձավորներին, մոտ այսպիսի բան տեղի չի ունեցել, իսկ դու մի կրկնիր քո ստերը, որպեսզի [բեզ մոտ] գտնվող չնչին շափով արդարամտությունն էլ անարժեք չդարձնես:

Բայց ես այն բանին եմ հույժ զարմանում, որ մերժում ես տերունական ավետարանները և մարգարեների գրքերը, ասելով թե մարդիկ ազավաղել են դրանք, և գրել՝ ինչ կամեցել են: Բայց [միաժամանակ] քո անհաստատ կարծիքների վկայությունը այնտեղից ես ջանում հավաքել: Իսկ ազավաղում ես այն խոսքերը, որոնք որպես վկայություն մեջ ես բերում, քանզի ուր որ դրված է հայր, փոխարենը գրում ես Տեր կամ Աստված: Եթե արդարություն ես փնտրում, պետք է հավատաս գրքերին և ապա դրանցից վկայություն մեջ բերես: Իսկ եթե մերժում ես, իբրև ազավաղված [գրքեր], ապա շպտեք է նրանցից վկայություններ բերես: Երբորդ՝ պարտավոր ես նաև քո բերած վկայությունները շրջել քո ցանկություններ, այլ ինչպես որ գրքում կան, այնպես էլ ներկայացնել:

Հույժ դժվար է Աստուծո ծառաներին, որոնք նրա հրամաններին հնազանդ են, ձեզ հետ խոսել, քանզի հեթանոսները, երբ լսում են մարգարեների կամ առաքյալների անունները, ուժգին ծաղրում են: Իսկ դուք, թեև անունները չեք անարգում, այսուհանդերձ նրանց խոսքերը արհամարհում եք, մանավանդ նրա խոսքերը, որը նրանց միջոցով է [խոսել]: Ապա թե ոչ, ի՞նչ անենք Մովսեսին ասված խոսքերը. «Ես եմ Աստվածն Աբրահամի, Իսահակի և Հակոբի»* և կամ թե. Եկեք մարդ ստեղծենք ըստ մեր պատկերի և նմանության** և կամ. «Եկեք իջնենք և խառնվենք նրանց»*** կամ էլ՝ «Տերը հուր տեղաց Մոզամի և Գոմորի վրա Տիրոջ կողմից, Տերը Տիրոջ կողմից»****: Այս բոլորը Մովսեսի զորքերից են, որոնք ոչ դու, ոչ էլ քո օրենստույցը չեք ընթերցել:

Մի կարծիք, թե սա Աստուծո կողմից ասված է հրեշտակներից, որոնք չեն կարող տեսնել նրան: Մենք չենք կարող

աստվածային գրքերը բեզ նման սնտոի և անհիմն համարել: Ո՞ւմ կարող էին ասվել այս խոսքերը, եթե ոչ նրա խոսքին (Բանին), որը նրա էության կերպարանքն է և նրա փառքի լույսի ճառագայթը, ինչպես նաև սուրբ Հոգուն, որն ամենքին սրբում և լուսավորում է: Եվ դեռ գրպարտում եք մեզ իբրև էրեք աստվածություն ճանաչող: Կտիր և ապա պատասխանիր, աղաչում եմ. այլ բան է արեգակը և այլ բան՝ նրա ճառագայթները: Թեպետ արեգակից են, և առանց ճառագայթների արեգակը արեգակ չէր լինի: Եվ եթե մեկն ասի, որ ճառագայթները ծնվում են արեգակից առանց ախտի կամ իգական էություն, չի ստի: Եվ թեպետ արեգակն ու ճառագայթը տարբեր բաներ են, այդ չի նշանակում, որ երկու արեգակներ կան, բայց բեզ արդյոք այդպես չի՞ թվում: Արդ, եթե այդ լույսը, որը մենք աչքով կարող ենք տեսնել, որ Աստուծո ստեղծվածն է, այսպես մաքուր, ախտից զերծ ծնվում է, գիշերը չշանտում է և շինվածքների ետևը ծածկվում, ապա առավել ևս մաքուր պիտի համարես աստվածային ինքնաստեղծ, ինքնարավական և չխավարող լույսը: Ես հարկադրված եղա այս բանը օրինակով ցույց տալ, քանզի Աստուծո կողմից գրքերի մեջ տրված պատվիրաններին չես հավատում, այլ քո կամքը նրանցից ավելի բարձր ես համարում: Ինչ կամենում ես, գրում ես նրանց մասին, իսկ ինչ չես կամենում՝ մերժում ես և ժխտում: Անիծյալ է այն մարդը, որ երկու կամ երեք աստուծո է հավատում և այնպիսիներին պետք է այլացեղ և այլասկզբունք համարել: Իսկ մենք միայն մեկ Աստված ենք ճանաչում՝ արարիչը երկնքի ու երկրի, ոչ խոսքից զուրկ, այլ ամենասուրբ և իմաստուն իր խոսքով (Բանով), որով ստեղծել և պահպանում է արարածներին: Նրա խոսքը (Բանը) նման չէ մեր խոսքին, որն ասվելուց հետո պարզվում է և անհետանում, իսկ ասվելուց առաջ ոչ լաված, ոչ էլ իմացված է: Հենց այն է Աստուծո խոսքը (Բանը), որ ճանաչում ենք՝ անփոփոխ լույսի անխավար ճառագայթը, որը չի ծնվում արեգակի ճառագայթների նման, և մարդկային կայսրությունից վեր է այն արտահայտելու Աստվածային գրքերը սրան են կոչում Որդի, որը ծնունդ է ոչ թե ախտավոր տենչանքի և աղտեղի ցանկությունների, այլ [ծագել է], ինչպես ճառագայթները արեգակից, լույսը հրից և խոսքը մտքից:

* Ելեզ. Գ. Ե:
** ՄՆՆԳ. Ա. 26/
*** ՄՆՆԳ. ԺԱ. 7-
**** ՄՆՆԳ. ԺԲ. 24:

Ահա թե որչափ մարդկային լեզուն կարող է բացատրել այն, որ Աստուծո խոսքը (Բանը) ծագում է Աստուծուց:

Եվ քանի որ Աստուծո արարածներից ոչ մեկը ավելի պատվական չէ, քան մարդը, դրա համար էլ դու խոստովանում ես, թե Աստված հրեշտակներին հրամայեց երկրպագել Ադամին, թեպես և աստվածային գրքերի մեջ այս բանը գրված չենք գտնում: Արդ, Ադամ մարդ էր, և դու գեղեցիկ վկայեցիր, աշխանելով թո հպարտությունը նրանք, որ մարդկանց չեն երկրպագում, թող իմանան, թե որ դասի մեջ պետք է դասվեն, ինչպես դու էլ ասացիր: Արդ, հայտնի է, որ Աստուծո պատկերով ստեղծվեց Ադամը, իսկ չլինի՞ թե դու կարծում ես, որ մեր ախտավոր և ներհակ մարմնի մասին է ասում Աստված, թե իր պատկերն է: Ոչ, այլ նա դրեց նրա մեջ և իր խոսքի (Բանի) ու իր Հոգու նմանությունը՝ հոգին, միտքը և խոսքը: Միացնելով այս բոլորը նրա մեջ, կիրտեց և տալով նրան ինքնիշխանություն, կամք, Աստված տվեց նրան իր պատկերը: Սակայն նա բանսարկու [սատանայի] խաբկանքով զրկվեց պատվից, որ նրան Արարիչն էր տվել, մոռացավ իր ստեղծողին և ապրելով անառակ վարքով, գարշելի ցանկությունը պիղծ և պես-պես դիշուխումը, միմյանց ատելով ու անարգելով, սպանություններով և, որ ամեն շարքների սկիզբն է ու վերջն է, կոապաշտությունը և այնպիսի պոռնկությունը, որ ասել չեմ համարձակվում: Քանզի ոչ միայն գոյություն չունեցողներին և կամ երևացող արարածներին աստվածներ կարծեցին, այլև իրենց իսկ ախտերը՝ պոռնկությունն ու արվամոլությունը աստվածներ կարծելով՝ պաշտեցին: Այդպիսիներին բանսարկու [սատանան] երկրպագուներ դարձրեց և ուրախանում էր, տեսնելով, թե ինչպես իրենց իսկ կերտած կուռքերի արձաններին շարաշար ախտալի ծեսեր են կատարում, և հորդորում էր նույնը շարունակել:

Արդ, Աստված տեսնելով իր պատկերը՝ անարգված բանսարկուի երկրպագությունը և նրան հաճելի գործերի կատարմամբ, որպես բարերար և արդարև մարդասեր, ողորմեց մեզ: Եվ քանի որ փրկությունն այն էր, որ ճանաչեին իրենց արարչին և ետ կանգնեին թշնամուց, այս բանի համար նա ժամանակ առ ժամանակ կոապաշտության խաղարի մեջ որպես

ճրագ վառում էր իր դիտությունը իր ծառաների՝ մարգարենների միջոցով: Եվ քանի որ մարդկանց մտքերը կուրացած էին և չէին կարող ընդունել աստվածագիտության բովանդակ լույսը, այդ բանի համար, ինչպես կանխավ ասացի, իր շահավոր դիտությունը քիչ-քիչ էր հայտնում մարդկանց մինչև աշխարհի վախճանը, որչափ որ Աստված կամենում էր խրատել մարդկանց: Իսկ նախապես մարգարենների միջոցով խոստացել էր իր խոսքի (Բանի) մարմնով գալուստը:

Քանզի Աստուծո խոսքը (Բանը) պետք է ընդունեն մարմին ու հոգի, և ամեն ինչ, որ մարդկային է՝ բացի մեղքերից, և քանի որ մարդկանցից ոչ ոք չէր կարող իջնել խոնարհության այնպիսի աստիճանի, որքան նա իջավ, դրա համար մենք գիտենք, որ խոնարհության վերաբերող ամեն ինչ ասված է նրա մասին, որպես խոնարհագույնի՝ մարդու և որպես բարձրագույնի՝ իրոք Աստուծո, մասին: Հիշո՞ւմ ես արդյոք մեր հիշած Մովսեսի ասացվածքը խոսքի (Բանի) նույն ինքն Աստուծո հետ հավասարության մասին: Լսիր նույն Մովսեսին մարդպես երեման մասին. «Աստված ձեր եղբայրներից մարգարե դուրս կրերի ինձ նման, նրան լսեցեք ըստ ամենայնի՝ ինչ էլ որ խոսի ձեզ: Եթե որևէ մարդ չլսի այն մարգարեին, այդ անձնավորությունը թող սպանվի իր ժողովրդի կողմից»⁶: Ոչ թե մեկ, այլ բազում մարգարեններ երևան եկան Իսրայելում Մովսեսից հետո, սակայն այս պատվերը միայն մեկի մասին էր, որն ամենագորավորն էր և դժվարահավատալի բաներ էր խոսնելու:

Արդ, քեզ կմատուցեմ այսուհետև Քրիստոսի գալուստյան մասին մարգարենների վկայությունների մի հույս: Բայց նախ լսիր այն, ինչ խոնարհագույն ձեռով ասված է նրա մասին: Կարծում եմ, որ ախորժելով կլսես: Թերևս կարողանամ սանդուղքի նման տանել ընդհուպ հասցնել քեզ բարձրագույն [վկայություններին], եթե նրա կամքը լինի: Գալիթը, մարդարեանալով նրա մասին, ասում է. «Ես եմ որդը և ոչ մարդը, մարդկանց նախատինք և ժողովրդին՝ արհամարհանք: Ամենքը, ովքեր տեսնում էին ինձ, այսպես էին, շրթունքներով խոսում էին և իրենց գրուխներն էին շարժում: Նա հուսաց Տիրոջը, և նա կապրեցնի նրան: Կփրկի և կապրեցնի նրան»:

⁶ Բ օրենք, Ժ՝, 15:

քանզի կամենում է նրան»^{*}։ Այս բանը երբեք չպատահեց Դավթին, այլ՝ մեր Տիրոջը, խաչելութեան ժամին։

Արդ, լսիր նույն Դավթին, որ նրա մասին բարձրագույն [խոսքերն] է ասում. «Տերն ասաց ինձ՝ դու իմ որդին ես, և այսօր ծնեցի քեզ»^{**}։ Իսկ ամեն հեթանոսների մասին, որոնք նրան պետք է հավատալին՝ ասաց. «Ննդրիր ինձանից՝ և հեթանոսներին քեզ կտամ որպես ժառանգություն ու տիրություն մինչև աշխարհի ծագերը»^{***}։ Եվ դարձյալ թե՛ «ասաց տերն իմ տիրոջը՝ նստիր իմ աջ կողմը, մինչև որ քո թշնամիներին քո ոտքերի պատվանդան դարձնեմ», «քեզ հետ է զորություն սկիզբը, քո սրբերի պայծառությունը, արգանդից նայաքան արուսյակը քեզ ծնեցի»^{****}։ Իսկ երկնքում աստվածային բնության մեկ լինելու մասին դարձյալ նշեց Դավթը՝ ասելով. «Երկիրը լցվեց Տիրոջ ոգորմությունը, Տիրոջ խոսքով երկինքը հաստատվեց և նրա բերնի հողով՝ նրա բոլոր զորությունները»^{*****}։ Իսկ Երեմիան^{*****} թե, «Տերն ուղարկեց ինձ և նրա հողին»։ Եվ Խոսքի (Բանի) մարմնացման մասին լսիր դարձյալ Երեմիային.^{*****} «Նա է մեր Աստվածը, որին ոչ ոքի չեմ նմանեցնի, [սա] գտավ իմաստության բոլոր ճանապարհները և այն ամեն իր ծառա Հակոբին ու իր սիրելի Իսրայելին։ Դրանից հետո երկաց երկրի վրա և շրջեց մարդկանց մեջ։ Սրանք են Աստուծո հրամանները՝ զրքերը և Աստուծո օրենքները, որոնք հավիտյան կմնան։ Դարձիր, Հակոբ, և բռնիր նրան իր լույսի առաջին ծագման ժամանակ»։ Մարգարեն ցույց է տալիս նրա լույսի երկու ծագում, նախ անբացատրելի՝ խոնարհությունը, որով նա լուսավորեց տիեզերքը աստվածագիտության ճառագայթներով, իսկ երկրորդ՝ համաշխարհային հարությունը, որի մասին մարգարեն զգուշացնում է երրայական ազգին ու խրատում, որ հենց առաջին ծագմանը հավատան և չլինեն ապրա-

տամբներ, ինչպես եղել էին, իսկ օտարները, այսինքն հեթանոսները, վայելին նրա փառքը։ «Դարձիր, Հակոբ, և բռնիր նրան նրա լույսի առաջին ծագման ժամանակ։ Այլոց մի տուր քո փառքը և ոչ էլ օտար ազգին՝ քո օգուտը»։

Ունկնդիր եղիր ասված խոսքերին. ոչ միայն Աստուծո Խոսքի (Բանի) մարգացումը մարգարեացավ, այլև հայտնապես գուշակեց Իսրայելի ըմբոստ ապստամբությունը։ Մեզ ոչինչ չի խանգարի լսելու որևէ օտար մարդու մարգարեություն, որը Մովսեսը դրել է իր գրքերի մեջ. «Ինչ գեղեցիկ է քո տունը, Հակոբ, և քո վրանը, Իսրայել»։ Ապա փոքր-ինչ հետո. «Մի այր կենի նրա տոհմից, կտիրի բազում ազգերի և Գոգից ավելի կբարձրացնի իր թագավորությունը, ու կաճի նրա թագավորությունը»։ Եվ դարձյալ՝ «Ցույց կտամ նրան, սակայն ոչ այժմ, կզննեմ, բայց ոչ մոտեքս. ասող կծագի Հակոբից, և Իսրայելից մի այր դուրս կգա, կհաղթի Մովսեսի իշխանին և Սեթի բոլոր որդիներին գերի կտանի»^{*}։ Արդ, թեպետ այս բաները նրա մասին ասաց իբրև մարդու, սակայն տես, թե ինչպես ցույց տվեց նրա տիրելը ամեն հեթանոսներին։

Կամենում ես գիտենալ, թե որն է նրա տիրելը բոլոր ազգերին. այն, որ ամենքը հավատալու են նրան, ինչպես դու իսկ տեսնում ես։ Կարող եմ ցույց տալ և Մովսեսի իշխանին, դա սատանան է գեների հետ միասին, որոնց Քրիստոս հարվածեց։ Նրանք մարդկանց մեջ զորացնում էին կուռքերի մոլորությունը և պաշտամունքը։ Մովսեսացիներին և նրանց դրացի ազգերի կռապաշտությունը առավել զարշելի էր, քան բոլոր այլ ազգերինը, քանզի նրանք պաշտում էին առնական և կանացի անդամները, որոնցով իրենց անառակ ցանկություններն էին կատարում։

Տես, թե ինչպես նրա թագավորությունը Գոգից ավելի բարձրացավ, քանզի նրանք երկրավոր է, իսկ Քրիստոսի [թագավորությունը]՝ երկնավոր։ Իսկ ի՞նչ է Քրիստոսի թագավորությունը. ուշադրություն դարձրու սուրբ Հոգու Դավթի միջոցով ասած խոսքերին. «Աստված, քո իրավունքը արքային տուր և քո արդարությունը՝ թագավորի որդուն»^{**}։ Չէ՞ որ

* Թուոց, ԽԳ, 5, 2, 17։

** Սաղմ. ՆԱ, 1։

* Սաղմ. ԻԱ, 7—9։

** Սաղմ. Բ, 7։

*** Սաղմ. Բ, 8։

**** Սաղմ. ԶԹ, 1, 3։

***** Սաղմ. ԼԲ, 6։

***** Իմա՝ Ծառի, ԽԸ, 16։

***** Իմա՝ Բարոտայ Գ, 36, 7, 8։

Քրիստոս երկնավոր ու երկրավոր թագավորի որդի է, ըստ աստվածութեան՝ Աստուծո որդի և ըստ մարդկութեան՝ Դավթի որդի, ինչպես բազում անգամներ ասել ենք: Դարձյալ ավելացնում է. «Մնայու է արևի տակ նախքան լուսինը, ազգից մինչև ազգ և տիրելու է նա ծովից ծով և գետերից մինչև տիեզերքի ծագերը: Նրան երկրպագելու են երկրի բոլոր ազգերը և ծառայելու են, ամեն ժամ աղոթելու և հանապազօր օրհնելու են նրան: Սրհնյալ լինի Տիրոջ անունը, քանզի նրա անունը արևից առաջ է: Նրանով թող օրհնվեն երկրի բոլոր ազգերը և երանելի դառնան նրանով»*:

Արդ, ո՞վ կհամարձակվի այս բաները վերագրել սոսկ մարդ-Դավթի որդուն և ոչ թե ըստ մարմնի՝ Դավթի որդուն, իսկ ըստ աստվածութեան՝ Խոսքին (Թանին) և Աստուծո որդուն, որը խաղաղական հավատով է տիրում և ոչ սրի կոտորածի և անողորմ արշուճանակությունների ու գերությունների միջոցով: Այդ մասին նույն սաղմոսում հայտնապես ասում է՝ «Նրա օրոք արդարություն կծագի և բազում խաղաղություն կլինի մինչև լուսինն սպառվի»**:

Դարձյալ Միքիե մարգարիի միջոցով ասել է Աստված. «Եվ դու, Քեթղեհեմ, տունդ Սփրաթա, թեպետ սակավավորես Հուդայի հազարավորների մեջ, քեզանից կելնի նա, որ ինձ կլինի առաջնորդ, կհովվի իր ժողովրդին՝ Իսրայելին, և նրա ելքը աշխարհի սկզբնական օրերից է»***: Իսկ սոսկական մարդուն հնարավոր չէ ելք ունենալ աշխարհի սկզբից: Սրեմիայի միջոցով ասել է Աստված. «Մարդ է, և ո՞վ կճանաչի նրան, Տերը Իսրայելի ակնկալությունն է: Բոլոր նրանք, որ լքեցին քեզ, կամաչեն, հեռացածները գերի են տարվելու երկիր. քանզի թողեցին Տիրոջը՝ կենաց ջրի աղբյուրը»****: Բայց Իսրայել է կոչում ոչ անհավատ հրեաներին, այլ նրանց, որոնք տեսան Խոսքն (Թանն) Աստուծո և հավատացին: Թե Աստված Աստուծո է, քանզի Իսրայել [անունը] երբայերեկից թարգմանելով նշանակում է սրատեսող: Արդ, Աստված կամենում է, որ Իսրայելը տեսնող լինի:

*Սաղմ. 28, 7:

** Սաղմ. 28, 7:

*** Միքիա, 6, 2:

**** Երեմ. 2, 9—13:

Լսիր, թե ինչ է ասել նա Ծայլիի միջոցով. «Մի մանուկ ծնվեց մեզ, սրի իշխանությունը իր ուսերի վրա է, և նրա անունը կոչվեց մեծ խորհրդի հրեշտակ, սքանչելի խորհրդակից, հզոր Աստված, խաղաղության իշխան և հանդերձյալ աշխարհի հայր»*: Հրեշտակ կոչեց նրան, քանզի շուներ մարդկային մեղքերը, իսկ սքանչելի խորհրդակից և Աստված ու հզոր կոչեց աստվածության անվան համար: Նա դեռ ավելացնում է. «Մեծ է նրա իշխանությունը, և նրա խաղաղությունը սահման չկա: Նստելու է Դավթի աթոռին, և նրա թագավորությունը կփառավորվի, իրավունքով ու արդարությամբ կգորայցի նրան, այժմվանից և հավիտյանս ժամանակներում»**:

Արդ, նա շնտեց Դավթի աթոռին և Իսրայելի թագավոր չղարձավ, քանզի ոչ թե անցավոր աթոռի մասին է ասում, այլ այն աթոռի, որի մասին Աստված խոսեց Դավթին. «Հավիտենություն եմ պատրաստելու նրա զավակների համար և ազգի ազգ պահպանելու եմ քո աթոռը, ինչպես երկնքի օրերը»***: Ապա ինչպե՞ս և ի՞նչ Դավթի աթոռ էր, որ զարձակ հավիտյան, ինչպես երկնքի օրերը, եթե ոչ երկնավոր թագավորությունը մարմնով Դավթի որդու, որը Քրիստոսն է, ոտի մասին էլ ասել է. «Կնստի Դավթի աթոռին և նրա թագավորությունը կփառավորվի և կգորանա իրավացիորեն ու արդարությամբ այժմվանից հավիտյան ժամանակներում»: Հայտնի է, որ մարմնով Դավթի որդի Քրիստոսի փառավորագույն և զորավորագույն թագավորությունը փոխադրեց նրա արքայությունը դեպի վեր՝ երկինք, հավիտենականի և անհասանելու մոտ: Դու պետք է ուշադրություն դարձնես նաև Ծայլիին՝ ճահ կույսը հղության մեջ կլինի և կծնվի որդի, ու նրան կկոչեն էմմանուել, այսինքն մեզ հետ է աստված»****:

Ունեմ և մեծ քանակությամբ այլ վկայություններ, որ համառոտելը օգտակար համարեցի, որպեսզի լսողները ձանձրույթով չտարվեն: Եթե կամենում ես, լսիր նաև շարչարանը-

* Ծայլի Թ, 6:

** Ծայլի Թ, 7:

*** Սաղմ. 28, 29:

**** Ծայլի է, 14:

Եւրի ժամանակ՝ նրա ունեցած անձանիւի խոնարհութեան մասին, այն, որ նա կամավոր կերպով կրեց, համբերեց, ինչպես կանխավ գուշակել էին մարգարեները: Եսայիի միջոցով ասաց սուրբ Հոգին՝ «Ես չեմ խստանում և ոչ էլ ընդդիմանում եմ. իմ թիկունքը հարվածների ցուցադրեցի, իմ ձեռքը՝ ապականների և իմ երեսը չեմ շոշոկ թքեկու ամսթից»¹: Նույնպես և Զարարիայի միջոցով ասաց Աստված. «Եթե ձեր աչքին բարի է թվում, տվեք իմ վարձը, ապա թե ոչ՝ զանց առեք: Եվ կշռեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ»²: Այս բանը իրոք կատարվեց փրկչի հետ, երբ նա իր աշակերտից վաճառվեց՝ մահվան մատնվելով: Տիրոջ վրա կատարվեցին նաև այլ մարգարեություններ, որոնց մասին պատմում են սուրբ ավետարանները, և եթե կամենաս, կարող ես ուշադիր ընթերցել, և այս բաները կգտնես: Բազում այլոց շարքում Դավիթն էլ մարգարեությամբ ասաց այս ամենի մասին. «Նա, որ իմ հացն էր ուտում, իմ դեմ բարձրացրեց իր դարշապարը»³: Լսիր և մյուս ազգումը Եսայիի միջոցով. «Ահա վասիկ, իմ ծառան իմաստուն կդառնա, կմեծանա, կբարձրանա և շատ փառավորյալ կդառնա, ինչպես որ շատ ազգեր զարմացան քեզ վրա, և թագավորները իրենց բերանը պիտի փակեն նրա առջև, քանզի, ինչ չի պատմված նրա մասին, պիտի տեսնեն, իսկ ինչ չեն լսել՝ պիտի իմանան: Տե՛ր, ո՞վ հավատաց մեր տված լուրին և Տիրոջ բազուկը՝ ո՞ւմ հայտնվեց: Քանզի նա մատաղատունիկ պես դուրս եկավ և արմատի նման՝ ծառավոր երկրից: Տեսանք մենք նրան՝ ոչ տեսք ունեք, ոչ էլ գեղեցկություն, այլ նրա կերպարանը ավելի անարգ էր և ավելի վատ, քան մարդկային ցեղի որևէ որդու: Մի այլ, որ հարվածներ ընդունեց և գիտեք ցավերին համբերել, այնպիսին էր, որից երես էին դարձնում, անարգվեց ու ոչինչ համարվեց: Նա մեր մեղքերը տարավ և մեզ համար շարշարվեց, և մենք նրան համարեցինք Աստծուց ցավեր, հարվածներ ու շարշարանքներ ստացած: Բայց նա վիրավորվեց մեր մեղքերի համար և պատժվեց մեր անօրինության պատճառով: Մեր խաղաղության պատիժը նրա վրա հասավ, և նրա

վերքերով զուժիցեցինք: Ամենքս ոչխարների պես մուտքվեցինք, ամեն մեկս իր ճակագարհին մուլը վեց: Տերը՝ նրան մատնեց մեր մեղքերի պատճառով, բայց նա վշտի մեջ իր բերանը լրացեց: Երբև ոչխար սպանդի տարվեց և իբրև մաքի՝ խուզողի առջև պնտունը մնաց և այնպես իր բերանը լրացեց: Նա խոնարհությամբ դատապարտվեց, իսկ նրա ազգատոհմի մասին ո՞վ կարող է պատմել, քանզի նրա կյանքը կրկրից վերացվեց: Նա իմ ժողովրդի անօրինության պատճառով մահվան տարվեց, քանզի նա անօրինություն չգործեց, և նենգություն չկար նրա բերանում»⁴:

Արգ, այսքան վկայությունները, որ Սուրբ Հոգին խոսեց իր ծառաների՝ մարգարեների միջոցով, ուրանում ես և սուտ համարում, [հավատալով] միայն թա Մահձեռի խոսքերին: Ո՛ր է թո օրենսդրի առանց երկու վկայի չհաստատելու հրամանը, նույնիսկ հույժ փոքրագույն բաները: Իսկ ինչպե՞ս ես հանդգնում այսպիսի ահագին հայհույություն անել՝ միայն նրա խոսքերը լսելով: Թո օրենսդրի ահագին ստույթունը մոռացար, թեև շգիտես իսկ, թե Մարիամը ոչ թե Ամրամի դուստրն է և Ահարոնի քույրը, այլ նա մեր Տիրոջ մայրն է: Այն ժամանակներից մինչև Տիրամայրը 2000 տարի է անցել, երեսուն տարի հանած, իսկ սերունդների [թիվն է] 32: Թե արդարև մարմնեղեն է թո երեսը և ոչ քարեղեն, ամայր հայտնի ստույթուններդ այսքան բացահայտելուց հետո: Քանզի Աստված խոստացել էր, որ Քրիստոսի գալուստը կլինի Հուդայի ցեղից և Մարիամն Ամրամի դուստրն էր Ղևիի ցեղից և, ինչպես ասացի, այնքան հնագույն ժամանակներում էր ապրում: Բազմաթիվ և բացահայտ ստերի պատճառով անհնար է ձեր [խոսքերին] հետևել, սակայն ինչքան էլ որ թո անսահման ստույթյան անհիմն առասպելները խորն են, մենք կարող ենք ճշմարտության փոքր դուլով այն ցամաքեցնել:

(Ասում ես, թե դուք և հրեաները օրինաց գիրքը, ավետարանները և սաղմոսները աղավաղել եք և ավելացնում ես, թե վկայում եմ, որ դրանք Աստծուց են: Եթե մերը շփոթված է և ապականված, որտե՞ղ է թոնը, որի մասին վկայում ես: Հասկա ցույց տուր ինձ Մովսեսի, մարգարեների և Դավիթի

¹ Եսայի Մ, 5-6:

² Զարարիա ԺԱ, 12:

³ Սաղմ. ե, 10:

սաղմոսների այլ զրքերը և կամ այլ Ավետարան, որպեսզի տեսնենք: Ո՛հ, ամոթի արժանի է քո ստույթունը և ամեն ինչից առավել՝ առասպելական ստույթունը: Գոնե ավելացնեիր, թե ևս այդտեղ չլի, և դուք մի հավատացեք: Ո՛վ մարդ, քո վկայությունները, որոնք թեպետ մեր ավետարաններից ես վերցրել, խեղաթյուրել ու այլայլել ես և տակավին ասում ես, թե զրանք ձեր կողմից են աղավաղված: Հապա խոսիր այն Ավետարանից, որ քո օրենսդիրը տեսել է, և կիմանամ, թե ճշմարիտ ես խոսում:

Որ ասում ես, թե հավատարմի է, արդարև մի է հավատը և մի է մկրտությունը, և չկա Աստուծուց ավանդված այլ հավատ և կամ այլ պատվեր, որ տրված լինի մարդկանց: Ասում ես թե [հենքը] ըստ օրենքի չէին ազոթում այն կողմի վրա, ուր դուք ուղղվում եք ազոթելիս և չէին հաղորդվում ձեր հաղորդությունները: Սա անհեթեթություն է և դատարկ խնդիրների հույլ, քանզի չի նշված, թե մարդարենները որ կողմն էին ուղղվում ազոթելիս: Դու պարզապես կամենում ես երկրորդապես հեթանոսական զոհարաններին, որոնք դու Աբրահամի տուն ես անվանում: Աստվածային գրքերում ոչ մի տեղ չենք գտնում, թե Աբրահամը եղել է այն տեղում, որը քո օրենսդիրը ուսուցանեց ձեր ազգին միշտ երկրպագել, իսկ հաղորդվելու խորհրդի մասին իր տեղում կտամ պատասխանք:

Այժմ տեսնենք, թե արդյոք ավետարանական ասացվածքներն այնպե՞ս են, ինչպես դու ես կարծում: Հիսուս արդարև ազոթից մարդկային ձեռով, որը մեղանից էր վերցրել, որպեսզի մեզ ուսուցանի, սակայն աստվածային կողմից նա կարոտ չէ ազոթի: Աղոթքի ժամանակ նա չէր ասում այն, ինչ դու ես գրում, այլ [ասում էր]. «Հա՛յր, եթե հնարավոր է, անցկացրու ինձանից այս բաժակը», ցույց տալով, թե ճշմարիտ մարդ է: Եթե որևէ մեկը Աստուծո խոսքը աստվածությունից զուրկ ճանաչի, իր կյանքի հույսը կկորցնի, նույնպես և նա, ով նրան մարդկայնությունից մեզ կատարյալ չի ճանաչի:

Բայց տեսնո՞ւմ ես դու ավետարանների ճշմարտությունը, որին մենք հավատում ենք, քանզի ավետարանների մեջ

* Կով. ԻԲ, 42:

պահպանված են թե՛ խոնարհագույնը, թե՛ բարձրագույնը, և եթե մենք կամ մեր նախորդները այն ապահանջինք, ինչպե՞ս ավետարաններից չէինք ընչի նրա մասին խոսքերը, որպես խոնարհագույնի: Ասել է՝ «մարդու որդին չի կարող անձամբ իր կողմից ոչինչ ստեղծել, այլ հայրը, որ իմ մեջ բնակված է, նա՛ է, որ գործ է կատարում»*: Եթե հավատում ես հետևյալ գրվածքին՝ «չեմ կարող ինքս անձամբ ոչինչ ստեղծել», ապա հավատա նաև այն [խոսքին], թե «հայրը, որ իմ մեջ բնակված է, նա է գործեր կատարում»: Հավատա նաև կենարար մահվան ժամի երկյուղին ու քրտինքին, ոչ Աղամի քրտինքի փոխարեն թափեց, քանզի նա անմարմնաբար ասաց Աղամին՝ «թող քո երեսի քրտինքով ուտես քո հացը»**, նրան զօրացրեց հրեշտակը, որը սակայն հայտնեց ոչ նրան անձամբ զորացնելու, այլ որպեսզի հաստատուն դարձնի նրա աշակերտների հավատը, քանզի նրան նայում էին որպես լուկ մարդու և նրան սոսկ մարդ էին կարծում, որպեսզի գոնե հրեշտակի հետ խոսակցությունը նրան առավել բարձր ցույց տա, քան սոսկական մարդ:

Արդ, եթե սրան հավատում ես, հավատա նաև այն բանին, որ ասել է նույն գրքերում. «Ես ինքս դնում եմ իմ անձը և դարձյալ ինքս վերցնում եմ այն»***, եվ դարձյալ չի ասել. «Աստված ինձ տիեզերք ուղարկեց, և ես նրան կվերագտնամ», ինչպես դու ինքդ գրել ես, այլ նա ասում է. «Հայրը, որ ինձ ուղարկեց, ինձ հետ էս**** և դարձյալ թե՛ յեղև հորից և եկա աշխարհ. դարձյալ թողնելու եմ աշխարհը և երթալու հոր մոտ»****, Բայց ուր որ Հայր է գրված, դու Տեր կամ Աստված ես շրջում և կարծում, թե ինքդ քեզ արդարացնում ես:

Բազում անիրավ կարծիքների մեջ միայն մեկը շատ ստեղծ է թեև վկայությունը ուղիղ ես բերել, շատ ուղում հավատալով որ ինձ հավատա, ոչ թե ինձ կհավատա, այլ նրան՝

* Յովհ. Ե, 19, ԺԳ, 10:

** Մենդ. Գ, 19:

*** Յովհ. Ժ, 17—18:

**** Յովհ. ԺԶ, 32

***** Յովհ. ԺԶ, 28:

ինձ անաբել է*, այսինքն ոչ թե անբնական մարդուն, այլ աներեւոյթ Աստուծո խոսքին: Դարձյալ ասում է՝ «ով որ ինձ անարգի, կանարգի ինձ ուղարկողին» և «ով որ ինձ տեսնի, կտեսնի նոսն՝ որ ինձ է ուղարկել»**: Ուղարկվում է իբրև մարդ և իբրև Աստված [այլոց] է ուղարկում: Ասել է աշակերտներին. «Իմ հայրը մեծ է ինձանից»***, այսինքն ավելի մեծ է, քան մարդկությունը, և չէ՞ որ դարձյալ ասաց. «մն և իմ հայրը մեկ ենք»****: Ասել է իր աղօթքի մեջ, ինչպես որ դու գրել ես՝ «միայն քեզ թող ճանաչեն ճշմարիտ Աստված, որ առաքեց իր Հիսուս Քրիստոսին»****: Ահա նույն աստվածային պատվի աստիճանին գրեց Հիսուս Քրիստոսին: Արդ, եթե նա սոսկ մարգարե լիներ, ապա պետք էր ասել, որ ճանաչեն միայն ճշմարիտ Աստուծո, Մովսեսին և այլ մարգարեներին և ապա՝ Հիսուսին: Բաց թող ցնդաբանություններով լի քո մտքերը, քանզի նա կատարյալ Աստված էր և մարդկություն մը դարձավ ճշմարիտ մարդ:

Ինչպես բազում անգամներ ասել եմ, նրա մասին [գրքերում] գտնում ենք խոնարհագույնը՝ իբրև մարդու և բարձրագույնը՝ իբրև արդարև Աստուծո: Աստանայի կողմից փորձություն ենթարկվեց նրա ծածկույթը, այսինքն մարմինը, քանզի սատանան լսելով աստվածային ձայնը մկրտության ժամանակ՝ «դա է իմ սիրելի որդին, որին ես հավանել եմ»,***** զարհուրեց, սուկաց և չգիտեր ում վերագրել այս ձայնը: Իսկ Տերը, քառասուորյա պահի ձեռնարկելով, բացահայտորեն ցույց է տալիս, որ ձայնը իրեն է վերաբերում, այնպես որ չարը միշտ նախանձում է և տրտմում՝ տեսնելով առաքինության փութացողներին, և մարդը մերձենալով տեսնում է Տիրոջը: Իսկ նա, իբրև ամեն ինչի գիտակ, պատասխանում է նրան որպես մարդու, իսկ մեր թշնամուն արժանի չի համարում իր կատարելության խորհուրդը հայտնելու: Ինչպե՞ս է որ դու շեք կարգացել, թե փորձության ենթարկվելուց հետո սատանան մի առ ժամանակ հեռացավ նրանից, և հրեշտակ-

* Յովհ. ԺԲ, 44.
 ** Յովհ. ԺԲ, 45, 48.
 *** Յովհ. ԺԴ, 28.
 **** Յովհ. Ժ, 29.
 ***** Յովհ. ԺԵ, 31.
 ***** Մատթ. Գ, 17:

ները մոտեցան և ծառայում էին նրան*, իսկ հրեշտակները սոսկ մարդուն շեք ծառայում: Ինչպես երևում է, ճշմարտությունից պարզապես փախչում ես և այլևս ոչինչ չես կամենում: Այս ենք ասում՝ ընդդիմանում ես Աստված ճանաչել մեր Տիրոջը և սոսկ մարդ ես համարում, օրինակ՝ բերելով Աղամին, թե նա էլ Աստուծոց էր ծնվել առանց ծնողների:

Կենարար մահվան մասին լսել ես և գեռ ատում ես, թե մարդկանցից ոչ ոք կարող էր սպանել նրան. եթե նա սոսկ մարդ էր, ըստ քո կարծիքի, ապա ի՞նչ զարմանալի բան կա, եթե մարդը մեռնում է: Արդ, լավ մտածիր և խորհիր այս մասին, և ինչու ես դու հեշտությամբ ընդունում խոնարհագույնը, որ ասված է Տիրոջ մասին, իսկ բարձրագույնը, թողնում ես և մերժում: Կիր աչք մասին հենց նույն ավետարաններին: Հովհաննես ավետարանիչը ո՞ւմ մասին է ասում՝ «ով որ հավատա Որդուն, հավիտենական կյանք կունենա, իսկ ով չի հնազանդվի Որդուն, կյանք չի տեսնի, այլ Աստուծո բարկությունը նրա վրա կմնա»**: Դարձյալ Զաքարիայի որդի Հովհաննեսն ասում է՝ «ասհա Հիսուս Աստուծո զառը, որ տանում է աշխարհի մեղքերը»***: Եվ հենց Հովհաննես ավետարանի սկիզբը. «Սկզբից կար եռոսքը (Բանը), և եռոսքն Աստուծո մոտ էր, և Աստված ինքը եռոսքն էր: Նա սկզբից Աստուծո մոտ էր: Ամեն ինչ նրանով կղավ և առանց նրան ոչինչ չեղավ»****:

Հենց ինքը, մարմին առած Աստուծո եռոսքը, ասում էր՝ «ով ինձ է տեսել, տեսել է իմ հորը»***** և «ինչպես հայրն ինձ գիտե, ես էլ հորը գիտեմ»*****, և «հայրը, որ ինձ առաքեց, ինձ հետ է»*****, «եյնում եմ իմ հոր մոտ և ձեր հոր մոտ, իմ Աստուծո մոտ և ձեր Աստուծո մոտ»*****, Բնություն մը նրա հայրն է, իսկ շնորհքով՝ մերը, «քանզի

* Մատթ. Գ, 11: Դուկ. Գ, 13:
 ** Յովհ. Գ, 18:
 *** Յովհ. Ա, 29:
 **** Յովհ. Ա, 1-2:
 ***** Յովհ. ԺԳ, 9:
 ***** Յովհ. Ժ, 15:
 ***** Յովհ. ԺԶ, 32:
 ***** Յովհ. Ի, 17:

նրանք որ ընդունեցին նրան, իշխանություն տվեց նրանց Աստուծո որդի լինելու, որոնք հավատացել են նրա անվանը*։ Աստված ըստ մարմնի մեզ հետ նույն բնությունից է։ Ուղարկվում է որպես մարդ և ինքն [այլոց] ուղարկում որպես Աստված՝ «ինչպես ինձ առաքել է հայրը, ես էլ ձեզ եմ առաքում»**։ Այս բանին համաձայն են բոլոր ավետարանները։

Ասում ես, թե մենք կամայականորեն թլփատությունը փոխարինել ենք մկրտությանը և զոհերը՝ օրհնության հացի ու բաժակի հաղորդությանը (Այդ ոչ թե մենք, այլ նույն ինքը՝ Տերը, հին պատվերները փոխարինեց ճշմարիտ օրհներոցով, ըստ Երեմիայի մարգարեության) որ ասում է՝ «ահա գալիս են օրերը, ասում է Տերը, և Իսրայելի տան ու Հուդայի տան համար նոր ուխտ կուխտեմ, ոչ այն ուխտի նման, որն ուխտել էի նրանց հայրերի հետ այն օրերին, երբ հանեցի նրանց եգիպտացոց երկրից»***, Եվ ինչ ուխտ դրեց նրանց հայրերին եգիպտացոց երկրում, եթե ոչ գառան արյունը [թափել] պասքային, այսինքն գատկին, որի մասին ասաց՝ «այս օրերը թող մնա ձեր ազգի մեջ»****։

Արդ, անկեղու գառան արյամբ Իսրայելի որդիները փրկվեցին սատակչից, իսկ մի՞թե անարատ գառան արյամբ մենք չենք փրկվի հավիտենական մահվանից։ Աստուծո անբիծ գառը շարչարանքների ժամանակ առավ հացը օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին, ինչպես նաև զինու բաժակը, ասելով, թե իր մարմինն ու արյունն են, և պատվիրեց այս բանն անել իրեն՝ ի հիշատակ խորհրդանշելու համար իր՝ որպես անբիծ ու անարատ գառան, մորթվելը։ Փանդի այն ճշմարիտ գառը նկատի ուներ հիշելով գառը։ Իսկ դու չես կարդացել գրքերը և [չգիտես] անունները, որոնցով կոչում են աստվածային գրքերը։ Բան (Խոսք), Որդի, Ճառագայթ, Աստուծո կերպարանք, Մառալի կերպարանք, Աստված, Մարդ, Հրեշտակ, Մարգարիտ, Կարթ, Տեր Տերանց, Մառա, Գառն, Ոլջար,

Հովիվ, եղբայրներից Անդրանիկը, մեռյալներից Անդրանիկը, Ինձ ոչինչ չի արգելի այս անուններից ամեն մեկը բացատրել, թե ինչու այդպես անվանվեցին, եթե միայն իմանալի, որ դու արդարություն խնդրող ես։

Ինչ վերաբերում է թլփատությանը, որն ասում ես, թե փոխարինել ենք մկրտությանը, ապա թլփատության խորհուրդը դու չգիտես, թե ինչու՞ Աստված կամեցավ այդ ծածուկ անդամին դնել իր ուխտը և ոչ այլ ավելի փառավոր և հայտնի անդամների վրա։ Արդյոք ա՞յն էլ չգիտես, որ Աբրահամը նախքան թլփատությունը արդեն սիրելի էր Աստուծո և որպես առ Աստված ունեցած հավատի ու սիրո նշան՝ ընդունեց թլփատության հրամանը։ Բայց ինչպես վերևում գրել էինք, դու չգիտես ինչու է դա վերաբերում ծածուկ անդամին։ Իսկ մենք [քրիստոնյաներս] հրաման ստացանք կատարել սրտի հոգեկոր թլփատություն և ոչ արտաքին մարմնի, այլ ըստ վերևում հիշվածի, որի համաձայն Աստված խոստացել էր նոր ուխտ կնքել։ Եվ եթե թլփատությունը, զոհը և շաբաթը չվերացնեն ճշմարիտ օրհներոցի ուսուցիչ Քրիստոսը, ապա ի՞նչ նոր ուխտ կնքած կլինենք։

Արդ, այս բանի համար քեզ վայել էր ամաշել, քանզի ապրելով նոր ժամանակներում, երբ Աստված մարդկային ցեղը ազատել է այդ օրհներոցի կապանքներից, ապա դու թլփատություն պահանջելով՝ հույժ խայտառակում ես նրան։ Հնում Աստված հրամայել էր թլփատել ամեն [նորածին] արու զավակին ութերորդ օրում, իսկ դուք ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց⁷⁹, որ հասակում էլ որ լինեն, ամոթալի խայտառակության եք ենթարկում։

Այլ աստվածային մկրտության մասին Աստված Եզեկիել մարգարիի միջոցով կանխավ գուշակեց՝ տեսելով, «Ձեզ վրա սուրբ ջուր կցանեմ, ու կսրվեք ձեր բոլոր պղծություններից, և ձեր բոլոր կուտքերից կմաքրեմ ձեզ»*։ Նույնը Տերն իր ավետարանում պատվիրեց. «Գնացեք այսուհետև աշակերտեցեք բոլոր հեթանոսներին, մկրտեցեք նրանց հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու»**։ Այսպիսով կատարվեց մարգարեի

* Յովհ. Ա., 12։

** Մատթ. ԻԸ, 18։

*** Երեմ. ԼՍ, 31։

**** Ելից, ԺԹ, 17։

* Եզեկ. ԼԶ, 25։

** Մատթ. ԻԸ, 19։

ախ խոսքը թե «քեզ հեթանոսների լույս դարձրի», և դարձյալ թե՝ «խաղարում նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ»^{*}։

Իսկ կիրակին մենք շաբաթի փոխարեն չենք դրել, ինչպես դու սովոր ես կարծել անխոհեմաբար։ Դու անխոհեմորեն ուրբաթը ժողովի օր ևս կարգել, առանց որևէ իրավացի պատճառի։ Իսկ մենք [կիրակին] տոնում ենք որպես Տիրոջ՝ մարմնով հարության օրը, որով մեզ ևս հարության խոստացավ, և աղոթում ենք ու գոհանում Արարչից այսպիսի արդարեւ մեծ խորհրդի համար։ Քանզի սկզբում այն օրը, նրա Աստված ասաց՝ «Թող լինի լույս, և եղավ լույս»^{**}», այդ նույն օրը հարության ավետիսի լույսը ծագեց մարդկային ցեղին իր միածին Բանի (Խոսքի) մարմնով հարությանը։ Մենք հրամանն շտապանք այդ օրը դատարկ մնալու հրեաների նրման, որոնք այդ օրը մինչև անգամ հրեական կերակուրներ չեն պատրաստում։ Բայց դու որովհետև չես հավատում մարգարեներին և իր իսկ տիրոջը, ինչպե՞ս կարող ես կարևորություն տալ մեր՝ քրիստոնյաներիս, ճշմարիտ ավանդություններին։ Քանզի քո և քեզ նմանների մասին է ասել Աստված մարգարեի միջոցով։ «Տեսեք արհամարհողներ և արհամարհեցեք ու եղծանեցեք, իսկ ես ձեր օրերում այնպիսի գործ եմ կատարելու, որին չեք հավատա, եթե որևէ մեկը ձեզ պատմի»^{***}։

Չեմ մոռացել այն, որ ասացիր, թե «ինչպե՞ս կարող էր Աստված բնակվել մարդկային արգանդի մեջ արյան, մարմնի և պես-պես աղտեղությունների մեջ»։ Ինչքան գիտեմ՝ տեղյակ ես, որ բազմաթիվ են Աստուծո արարածները, որոնց իր հրամանով անգո վիճակից խոսքով լինելության հասցրեց, ասելով 148 ազգություն՝ «նա ասաց, և [ամեն ինչ] եղավ։ Ինքը հրամայեց, և շինվեցին»։ [նա ստեղծեց], և այն բոլորը, որ թերևս բոլոր կարծիքի մարդուց ավելի պատվական և մաքրագույն է՝ երկինքն ու երկնամասերը, արեգակով, լուսնով, աստղերով, երկիրը բուսականությանը և ամեն կենդանիներով, իսկ այն կենդանիները, որոնք դու աղտեղի կոչեցիր, Աստված ստեղծել է ոչ սոսկ հրամանով, այլ իր ամե-

նակարող, ամենասուրբ, ստեղծագործ ձեռքերով և իր փշե-լով հոգի տվեց, կենդանացրեց։

Արդ, Աստուծո համար պիղծ չէր մեր բնության կազմը-վածքը, որն ստեղծվեց նրա արարչագործ ձեռքերով և պատվովեց ստեղծող արարչի պատկերով։ Ուստի մի հայհոյիր նրա բարի արարչին, քանզի Աստուծո համար ոչինչ պիղծ չէ, որ իր կողմից է ստեղծված, բացի մեղքերից, որոնք Աստված մարդու մեջ չի ստեղծել և ոչ էլ պատվիրել է այն։ Սակայն չկա պատվականագույն արարած, քան մարդը, որի համար ստեղծվեց ամեն ինչ։ Այսքան պատվի արժանի դարձնելուց հետո [Աստված] ամոթ չհամարեց նրա պատկերը առնել ու փրկել նրան։ Քանզի, ինչպես ասացի, մարդկային բնության մեջ ոչինչ աղտեղի չէ, բացի մեղքերից, իսկ ինչ դու մեր բնության մեջ աղտեղագույն ես համարում, այն հարդարել է [Աստված] մարդկային ցեղի օգտագործման համար, ինչպես կանանց ամսականը՝ մարդկային ծննդաբերության համար և ավելորդ կերակուրների ու ըմպելիքների արտահանման խողովակները՝ կյանքի պահպանության համար։ Ահա թե ինչն է քեզ աղտեղություն թվում։ Իսկ Աստուծո համար [աղտեղի է] այն, ինչ քեզ սիրելի է՝ գիշտությունը, սպանությունը, հայհոյությունը և այլ այսպիսի աղտեղություններ, և ոչ թե վերոհիշյալները, որոնք ինքը սահմանել է մարդկանց ծննդաբերության և հանգստության համար։

(Այս բոլորից բացի այն էլ իմացիր, որ եթե Մովսեսի առջև Աստված մորենին վառեց իր աստվածային հրով և շհրկիզեց, ապա մարդը առավել պատվական է, քան մորենին և ամենայն արարածները։) Քանզի սբբերի մասին, որոնք մարդկանց մեջ էին, ասաց Աստված. «Արնակվեմ նրանց մեջ և կգնամ նրանց մեջ»^{*} և դարձյալ ասել է, թե «ո՛ւր կբնակվեմ, եթե ոչ հեզերի, խոնարհների և այնպիսիների մեջ, որոնք կզողան իմ խոսքերից»^{**}։ Ահավասիկ Աստված արդար մարդկանց իր աստվածության բնակարան կոչեց, իսկ նա խորշանք կամ թշնամանք չունեցավ մարդկային բնական ախտերի հանդեպ, որոնք դու աղտեղություն ևս կոչում, քան-

* Մատթ. 9, 16։

** Մենդ. Ա, 3։

*** Ամբակ. Ա, 5։

* Բ. Կորնթ. 2, 16

** Եսայի, 42, 2։

զի վայել էր և կենդանուն լինել տաճար միշտ կենդանիի համար: Այս բոլորը քեզ ներկայացնում էմ մանավանդ այն բանի համար, որ խանդում ես Աստուծո սրբերի պատվին և նրանց նշխարներին, որոնց մեջ Աստված է բնակվում, ինչպես ինքն է ասել: Եթե Աստված բոլոր մարդկանց ոսկորների մասին, հոգում է հասարակաց հարություն համար, առավել ևս պետք է իր սրբերին [հոգ տանի], որոնց մասին նա բազում անգամներ մեծամեծ և փառավորագույն խոսքեր է ասել, մանավանդ այնպիսիների մասին, որոնք իր համար մահվան համբերեցին: Հենց այս մասին էլ սուրբ Հոգին ասաց Գավթի բերնով՝ «պատվական է Տիրոջ համար իր սրբերի մահը»*: Գարձյալ՝ «արդարները բազում նեղություններ են քաշում. նա ամեն ինչից կփրկի նրանց. կպահպանի նրանց ոսկորները, և նրանցից ոչ մեկը չի փշրվի»**: Նա ասում է՝ «չեն փշրվի», ակնարկելով աստվածային զորությունը, որը սրբերի մեջ բնակված է: Սակայն շատ սրբերի ոսկորներ փշրվեցին և հրով կիզվեցին: Դու բնավ չես կարող նման բաներ հասկանալ, այլ մանուկի նման միայն երևացողին կհայես: Գարձյալ ասել է՝ «սքանչելի է Աստված իր սրբերի մեջ»***, Ասել է նաև Սողոմոնը՝ «արդարները հաճիտյան են ապրում, և Տիրոջից է նրանց վարձատրությունը, քանզի թեպետ նրանք մարդկանց աչքին մեռած են, սակայն նրանք հանգստյան մեջ են»****:

Գիտեմ որ այն էլ տեղյակ չես, թե սպանված անթլփատ աշխարհիկն զրվեց Ծղիս մարգարեի գերեզմանը և հենց որ զիպավ մարգարեի ոսկորներին՝ անմիջապես հարություն առավ: Արդ, եթե աստվածային զորությունը բնակված չլիներ սուրբ մարգարեի ոսկորների մեջ, ինչպե՞ս կարող էին սոսկ մեռյալ մարդու ոսկորները մեռած մարդուն հարություն տալ: Կենդանի Աստվածը իր աստվածության համար աղտեղություն չհամարեց բնակվել մեռյալների գերեզմանում. սա ինձ և քեզ աղտեղի է թվում, սակայն Աստուծո համար՝ քննչու՜ կառակը: Բայց բեղանից սրբերի նկատմամբ ի՞նչ պատիվ

* Սաղմ. ԺԺԵ, 15:

** Սաղմ. 17, 20:

*** Սաղմ. 45, 36:

**** Իմաստ. Սող. Ե, 16, 7, 2-3:

կարելի է պահանջել, երբ դու այժմ ըստ քո սովորական հեթանոսական մոլորություններից Տիրոջից Երկրորդածնեին խոշտանգում ես, որ ուրանան [Աստուծո], իսկ շենթարկվողներին սպանելով, քո անձն ես հավիտենական մահվամբ սպանում, ըստ մեր Տիրոջ կանխասացության, թե «կգա ժամանակ, երբ ամեն ոք, որ ձեզ սպանի, կհամարի, որ Աստուծո պաշտոն է մատուցում»*: Ինչպես քո հորեղբայր Մահմեդը⁶⁰ այն օրը, երբ անաստված զոհաբերություն էր մատուցում, սպանված ուղտի արյունը խառնում էր Աստուծո ծառա գրլխատված բրիստոնյանների արյանը: Իսկ դու այն բանից ես դժոճ, թե Աստուծո սրբերին, որոնք նրան խոստովանելու համար նահատակվեցին, Աստուծոն նվիրարեղված տեղերում ենք դնում:

(Իսկ ինչ վերաբերում է խաչի նշանին և պատկերին⁶¹, որ դու հիշեցիր, այդ մենք այն պատվում ենք ի հիշատակ Աստուծո մարմնացյալ խոսքի (Բանի) խաչի վրա կրած շարժարանքների: Այդ մենք իմանում ենք Աստուծո Մովսեսին տված հրամանի և մարգարեների քարոզության միջոցով: Աստված Մովսեսին հրամայեց առնել և դնել [խաչի] կնիքը քահանայապետի ճակատին, անվանելով այն սուրբ և նվիրական թիթեղ: Թիթեղի ձևը այնպես է, ինչպես կենդանի արարածն է երևում: Քանզի խաչի նշանով կնքվում են մեր քրիստոնյանների ճակատները, Աստուծո խոսքի (Բանի) մարմնով մեզ համար շարժարկելու պատճառով: Իսկ Սասյիսս մարգարեն հայտնապես հիշել է փայտը, որից պատրաստել են խաչը և որով պսակված՝ միշտ պարճենում է եկեղեցին: «Մայրի ծառով, ասում է, սոճիով և կիսարիսով⁶² կփառավորեմ իմ սրբավայրերը և իմ ոտքի տեղը կփառավորեմ»*: Իսկ Սողոմոնն ասում է՝ «օրհնյալ է փայտը, որով արդարություն է լինում»***, և դարձյալ՝ «նա կենաց փայտն է բոլոր նրանց, որ ապաստանում են նրան և նրան են հենվում որպես հաստատուն Տիրոջ»****:

Իսկ պատկերի մասին մենք այսպիսի կարծիք չունենք,

* Յովհ. ԺԶ, 2:

** Նաչի 4, 13:

*** Իմաստ. ԺԳ, 7:

**** Առակաց 7, 18:

որովհետև սուրբ գրքերից այսպիսի պատվերներ չենք ստացել, թեպետ և գտնում ենք, որ հնում Աստված հրամայել է Մովսեսին վկայության խորանում ընդմիջել նմանություններ [պատկերներ] դնել: Այսպես և մենք, հետևելով Տիրոջ աշակերտներին և խանդավառված մարմնացյալ Տիրոջ սիրով, պահպանել ենք հավաստի կենդանագրությունը և պատճենները, որոնք այն ժամանակներից մեզ են հասել, որպես նրանց իսկական կերպարանքները, հրձվելով փառավորում ենք Աստծուն՝ մեր փրկչին, որն այդպիսի նմանություններ զգեստավորել է իր միածին սրբուն՝ իր սրբերի փառավորողին: Սակայն մենք չենք երկրպագում փայտին կամ փայտի վրայի ներկին:

Քայց դու չես ամաշում զոհերով պատվել քո այն սուունը, որ Քաբար⁸³ ես կոչում և համարում ես Աբրահամի տուն, թեպետ Աբրահամը այդ արգարև անջրդի անասատը երազում անգամ չէր տեսել: Այդ սուունը նախքան Մահմետն էլ ձեր ազգը պաշտում էր, ձեր այդ սովորությունը ձեր Մահմետը չվերացրեց, այլ միայն Աբրահամի տուն կոչեց: Այլ որպեսզի բեզ հախուսն նախատող չերևամ, այդ մասին սուրբ ավետարաններից և քո իսկ պատմություններից կբացատրեմ: Տերը շատ անգամներ դեբրի բազմություն է ուղարկել այն անապատը, ինչպես ասվում է Ավետարանում՝ «չըջում են, ասում է, անջրդի տեղերով»^{*}: Իսկ դեբրը այնտեղ բնակվելով և ձեր աչքին երևալով երբեմն օձի նմանությամբ և երբեմն անդտեղի և վավաշոտ ցանկություն, ըստ իրենց սովորության խաբելով ձեզ, ամուսնանալու ցանկություն են առաջացնում: Իսկ դուք անընտրողաբար նրանց պատրանքներով տարվելով՝ այստեղ և հանդերձյալ կյանքում հավասարվում եք նրանց: Այն էլ չգիտեք, թե հանդերձյալում, ըստ Փրկչի Ավետարանի, նրանք չեն կարող ոչ որի մերձենալ, այլ նրանց ըմբոստ կարողությունը թեպետև շարասեր է իրենց հայր սատանայի նման, մարդացյալ [Քրիստոսի] զորություններ կապված լինելով, չի կարող հայտնապես վնաս հասցնել: Քանզի եթե կարողանային և ուժ ունենային, ապա մի օրում հրով տոչորելով ձեզ կսպանեին, սակայն նրանք սոսկ զողաբար խաբելությամբ հրապուրում են՝ կորցնելու համար ձեր հոգիները:

* Մատթ. ԺԲ, 43:

Իսկ քարը, որ սորուն⁸⁴ ես կոչում, որին ինքդ էլ չգիտես, թե ինչու ես երկրպագելով համբուրում, նույնպես և [չգիտես] թե դիվական կոտորածը, որից գազանները և թռչունները դարչում են և միտտանի փախչում, և քարաձուլությունը, փախուստը, և գլուխ սափրելը և այլ ամոթալի գործեր, որ կատարում են [ի՞նչ բանի համար են]:

Զեմ հիշելու ձեր օրենսդրի աղտեղի հրամանը տղամարդկանց՝ կանանց մուտենալու վերաբերյալ, որի մասին ամաշում եմ ասել, և նա օրինակ բերեց անդաստանները արորով վարելը, և այսպիսի պղծություններ ձեռնից շատերը սովորեցին կանանց մերձենալու: Կամ ի՞նչ ասեմ ձեր կեղծ մարգարեի անողջախոս պարկեշտության մասին՝ Զեղի կնոջ⁸⁵ լպիրշ պղծությունը: Իսկ այս աղտեղության պատճառը վերագրում են Աստծուն, որի հետևանքով այդ այլանդակ օրենքները մտել են ձեր ազգի մեջ: Կա՞րողոք ավելի շար հայհուություն, քան այն, որ պղծության պատճառը համարվում է Աստված: Օրինակ, Դավիթը Ուրիային կին առավ և մեղանչեց Աստուծո դեմ, որի համար էլ Աստված նրան պատուհասեց: Իսկ քո Մահմետը և դուք հակառակվում եք [ճշմարտությանը], լավ եք անում: Ի՞նչն է ավելի վատ, քան շարագույն մեղք գործելը և շնորհակալելը, որ դա մեղք է, ոչ թողություն խնդրել և ոչ էլ անամոթ մեղքերի թողություն ստանալ:

(Աստված հրամայել է ավետարաններում, որ տղամարդը չթողնի կնոջը) բացի պոռնկության պարագայից: Իսկ դուք, հազենալով ձեր կանանցից, որպես կերակուր, (երբ կամենար թողնում եք: Եթե հնար լիներ ծածկել այդ ամոթը, չէի ասի, քանզի դուք նախ այդ եք տալիս կնոջը, որ պղծվի, ապա անում եք նրան: Ինչպե՞ս խոսեմ ձեր հարմերի անխիղճ պոռնկության մասին, որոնց համար մարդկանց ամբողջ ստացվածքը և կողոպուտը ծախսում եք: Մեծագին ստացվածքով թանկ գնում եք և պղծությամբ հաղենալուց հետո անասունի նման վաճառում եք: Պատմում են մի օձի մասին, որ խանակությամբ մերձենում էր ծովի զեռուն մյուսինես [ձկան], սակայն երբ մերձենում էր ծովի եզրին, իր մահացու թուխը բաց էր թողնում և այսպես կատարում իր ցանկությունը: Իսկ դուք հենց այդ նույն օձից ավելի թունավոր եք

և առավել նենգավոր, քանզի ձեր նենգ շարությունը մարմնավոր մերձավորութեամբ չի ոչնչանում և նույնիսկ ձեր մեղանշական մահվան ժամանակ շար դևից ներշնչվելով, խեղդամահ անելով ոչնչացնում եք [ձեր կանանց]։

Հիշելով սատանայի և արգարների հոգիների մասին՝ սուտ էիր, թե մենք սատանային Աստուծո գանձապահ ենք համարում, ապա դու շատ սխալ կարծիք ունես մեր խոհականութեան մասին։ [Ուղեկառուկը] սատանան ուրախ էր այն անհուսալի վիճակի համար, որ մարդիկ ունենին մահվանից հետո և կարծում էր, թե արգար նեղեցյալները կորած են և Աստուծո կողմից մոռացված։ Տեսնելով Աստուծո խոսքը (Բան) մարմնով և անբավ խոնարհությամբ, կարծեց, թե նա էլ իրեն նման է և հորդորեց նրա աշակերտներին՝ մատնել նրան, իսկ հրեաներին ներշնչեց սպանութեան խորհուրդը։ Տեսնելով Տիրոջ կամավոր երթը դեպի իսալի մահը, վախեցավ և սկսեց արհամիթքներով կշտամբել (տանջել) դատավորի կնոջը՝ խափանելու համար մարդկային ազգի փրկությունը։ Սակայն նա մարդկային ձևով ճշակեց մահը, անմահ մնաց իր աստվածությամբ, լինելով անբաժանելի իր մարդկությունից իբրև ճշմարիտ Աստված՝ [ժողով] ճշմարիտ Աստուծու։ Հարություն առավ, մանավանդ հարություն տվեց իր մարդկայնությունը, ըստ Դավթի մարգարեության, թե «հՀաննի Աստված, և նրա բոլոր թշնամիները կցրվեն»*։ Իսկ տասներկու մարգարեներից մեկը, թե՛ «ինձ մնում է իմ հարության օրը»**։ Նա հարություն առավ ոչ իր համար, քանզի նա անմարմին էր, անմահ և անապական, այլ մարդկային ազգի համար, մարդկային [կերպարանք] առավ և նրանով մահվան համբերեց։ Նա իր հարությունը մարդկանց հարություն շնորհեց և ննչեցյալ մարմինների մեջ՝ վերստին հոգի ներարկելու հույսը, ազատելով անմարմին հոգիները թշնամու անտեսանելի ազդեցությունից։ Քանզի հոգիները խոսքի (Բանի) ի Քրիստոս մարմնավորման հետևանքով Արարչից ոչ փոքր խնամք են ստանում։ Արդ, կապված իր անհատությամբ, տկարությունը և իր դեերի կորստյամբ՝ սա-

տանան [տեսավ], որ անկարող է մարդկանց օտարոտի պաշտամունքի բռնադատել, որն Աստուծո համար անցանկալի է, և նրան մնում էր միայն հավիտենական գեհեննի հուրը ժառանգելու հույսը։

Չեմ մոռացել և այն, որ ասել էիր Սասի մարգարեի մոտ պատմվող էջի և ուղտի վրա հեծյալների մասին։ Արդ, այդ տեսիլքի իմաստն այս է. «Մովսիսն անապատի տեսարանը ըստ ծովեզերյա անապատն է, որը սահմանակից է և դրացի բարելացոց իշխանությանը»։ Ապա քիչ հետո սուտ է. «Տեսնում էի երկու հեծյալների, մինը հեծյալ էջի վրա և մյուսը՝ ուղտի»*։ Երկուսը մի հեծյալ էին, ինչպես նույն տեղում մարգարեն պարզ կերպով սուտ է։ Թայց էլ է կոչում մարգարեն հրեա ժողովրդին, որը կարգում էր օրենքներն ու մարգարեները, սակայն հավանելով սատանայի վարդապետությունը շնորհունեց և շնազանդվեց տիեզերափրկող Ավետարանին։ Ինչպես ինքն էլ իր գրքի սկզբում գատապարտում է նրան ասելով՝ «եզր ճանաչեց իր տիրոջը, և էշն էլ՝ իր տիրոջ մուրը, սակայն Իսրայելն ինձ չճանաչեց»**։ Իսկ ուղտ կոչեց մարդանացիներին և բարելացիներին այն բանի համար, որ այդ կենդանիները ձեզ մոտ հաճախ են լինում։ Նույն թշնամին, որ հրեաներին օրինապահության անվան տակ մուրեցրեց, ձեզ ևս կոպաշտություն մեջ գլորեց։ Իսկ ինչ վերաբերում է երկուսի մեկ լինելուն, տես, թե ինչպես պարզ ցույց է տալիս մարգարեն և զարծյալ սուտ. «Տեսնում էի նույն հեծյալին, որ գալիս էր երկձի»***։ Ահա մեկ է երևում նա, որ առաջ երկու էր երևում։ Իսկ ինչո՞ւ երկձի. քանզի տիրեց հրեաներին և հեթանոսներին, որոնց հպատակեցրեց։ Եվ ինչո՞ւ էր գալիս և ի՞նչ էր խոսում. «Գալիս էր, սուտ է, երկձի և աղաղակ բարձրացնելով սուտ՝ «ընկավ Բարելունը, և կործանվեցին նրա ձեռքի գործերը»։ Ահա թշնամին է սա, որ ողբաց իր ամաչությունը և փախստյան այլ վաչր չգտավ, բացի ըստ անապատից։ Նա ըստ ազգին բերեց իր ամբարշտության երկու ձիերին, այսինքն հրեական անհաստատությունը և հեթանոսական անառակությունը։ Այս երկուսը

* Եսայի, ԻԱ, 7։

** Եսայի, Ա, 3։

*** Եսայի, ԻԱ, 9։

աղմ. 44, 2,
Սասի. 9, 6,

միասին տվեց ձեզ նենգորեն խաբեությամբ և ոչ բռնությամբ, սրպեսզի հրեաների նման թլփատվեք և ճանաչեք աստվածութիւնը առանց գոյութիւն ունեցող և արարչական խոսքի (Բան) ու Հոգու: Իսկ բախտին, ճակատագրին և դեներին, որոնք գեհնեի [ծառաներ] են, հեթանոսների նման հավատում եք: Նրանց հետ և նրանց նման աղտեղի կյանք եք վարում անասելի գիշությամբ: Աստուծո ճանապարհ եք կոչում՝ ձեր ասպատակութիւնները, անողորմ սպանութիւններով և մարդկանց գերությամբ: Ձեր հավատը և վարքը այսպիսին են, իսկ ձեր վարձը և պարծանքը [իր] հրեշտակային կյանքն է:

Իսկ մենք գիտակ և ծանոթ լինելով մեր սքանչելի փրկչութեան խորհրդին, մեր հույսը դնում ենք մեռյալների հարութեան, երկնքի թագավորութեան մեջ վայելքի վրա, քանզի մենք հնազանդվել ենք Ավետարանի քարոզութեանը, ակեկալում ենք այնպիսի բարիքներ, «որ աչքը չի տեսել և ականջը չի լսել, որ Աստված պատրաստել է իր սիրելիների և հավատացյալների համար»*, և ոչ թե գինու, կաթի և մեղրի աղբյուրներ ու միշտ կույս մնացող կանանց հետ խառնակութիւն, որդիների ծնունդ և այլ այսպիսի հեթանոսական և հիմարութեան անդունդների (զժոխքի) շաղակրատանքներ: Վերջ տուր առասպելական զառացանքներիդ, «քանզի արքայութեանը կերակուր և ըմպելիք չէ»**, ինչպես ասել է սուրբ Հոգին, «այլ արդարութիւն է և սրբութիւն», «քանզի հարութեան ծամանակ ոչ կին են առնելու և ոչ էլ՝ մարդու գնալու, այլ այնպես են լինելու, ինչպես երկնային հրեշտակները»***: Սակայն քանի որ դուք գիշությամբ և աղտեղի ցանկութիւնների հետևանքով երբեք չեք հագնւում և բացի դրանից այլ որևէ լավ բան չեք ճանաչում, այդ պատճառով էլ երկնքի արքայութեանը առանց դրանց ոչինչ եք համարում և դրանցով եք կամենում զարգարել այն:

Ահա թե՛ համառոտ պատասխաններ: Մենք հնում մեր անասան և անխախտ հավատի համար նեղութիւն ենք կրել և հիմա էլ նեղվում ենք ձեզանից՝ հեթանոսներից, և հանապազօր մեռնում ենք պատվական սուրբ և անզուգական ան-

վան համար, որը մեզ հայտնված է կանխագուշակ մարգարե Եսայիի միջոցով, թե «թեղ նոր անունով պիտի կոչի, որով տերը թեղ անվանելու է»: Այսպես է պատվիրել Տերը, քանի դեռ մարմնապես աշխարհում էր, ասելով՝ «եթե ինձ հալածեցին, ապա և ձեզ կհալածեն, եթե իմ խոսքը պահեցին, ապա և ձերն էլ կպահեն: Նույնը կանեն նաև ձեզ, քանզի չհավատացին ինձ առաքողին»**: Գարձյալ ասել է՝ «այստեղ՝ աշխարհում, նեղութիւն կունենաք»: Հորը ուղղված աղոթքի մեջ ասել է՝ «ինչ որ տվեցիր ինձ աշխարհում՝ քոնն էին, և տվեցիր ինձ» և «այս աշխարհից չեն, ինչպես և ես աշխարհից չեմ, քանզի եթե աշխարհից լինեին, աշխարհը իրեններին գուցե սիրեր. բայց աշխարհից չեն, այլ ես նրանց ընտրեցի աշխարհից, որի պատճառով աշխարհն ատկեց նրանց»***:

(Արդ, այսպիսի հույսի համար դուք տանջում եք մեզ սպառնալիքներով ու մահվամբ: Սակայն մենք համբերում ենք, քանզի ոչ թե մեր աղեղին ենք հույս դնում և ոչ էլ մեր սուրբ կփրկի մեզ, այլ՝ Տիրոջ աչքը, նրա բազուկը և նրա երեսի լուսավորութիւնը) Ձեր տված նեղութիւնների փոխարեն, եթե կամենա և հաճի՝ տակալին այս աշխարհում կվարձատրի մեզ և կամ՝ հանդերձյալում, ինչպես որ կամենա և երբ որ կամենա: Իսկ դուք հույս ունենալով նույնը վայելել ձեր բոնակալութեան և կողոպուտի միջոցով, կարծում եք, որ Աստուծո համար հաճելի չորժ եք կատարում, չհիշելով պարսիկների օրինակը, որոնք 400 տարի⁸⁶ բռնակալեցին, որի պատճառը միայն Աստված գիտի: Միայն թե ոչ իրենց ուղիղ հավատքի համար:

Իսկ մենք ուրախանում ենք նեղութիւնների ու վշտերի համար, որոնք մեզ հասել են մեր Տիրոջ ու Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, փաստորջալ անվան համար, որպեսզի հանդերձյալ [կյանքի] բարիքները ձեռք բերենք նրանց հետ հավասար, որոնք սիրեցին Աստուծո երեսելի մեծ զատավորութեան օրը ի փառս և ի գովեստ նրա անվան սիրողների:

* Կորնթ. Բ, 9,

** Յովհ. ԺԵ, 20—21,

*** Յովհ. ԺԶ, 20,

**** Յովհ. ԺԷ, 9—11:

* Ա. Կորնթ. Բ, 9,

** Առ. Հոովմ. ԺԴ, 16,

*** Մատթ. ԻԲ, 20:

Նրանց հետ և մենք փառավորելով արժանի լինենք մեկ
աստվածութեանը, Հորը, իր միածին Նոսֆին (Քան) և սուրբ
Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտանից, ամեն:

Գ Լ ՈՒ Ե Ժ

Այս պատասխանի պատճենը գրելով՝ Լեոն կայսրը իր
հավատարիմ ծառաներից մեկի հետ առաքեց Իսմայելի Օմար
իշխանին, որը, երբ կարդաց մեծ պատկառանքով, շատ ամա-
շեց: Այս Թղթի պատճառով առավել ևս բարյացակամ և բա-
րեմիտ դարձավ քրիստոնյա ազգի նկատմամբ՝ և ամեն առ-
թիվ ցույց էր տալիս իր բարեհաճությունը: Քանզի, ինչպես
նախապես պատմել էինք, դերիներին վերադարձրեց և ամեն-
քին ներում էր իրենց հանցանքները ձրի թողութեամբ (առանց
փրկագնի): Իր ազգին նույնպես բարեհաճություն ցուցաբե-
րեց, առավել քան իր նախորդները, որոնք իրենից առաջ
իշխում էին: Գտնաւարանները քացելով ձիւղոր գորականնե-
րին (սպաճ) հոռոգ (սոճիկ) էր բաշխում:

Այս բոլորը կատարելուց հետո վախճանվեց:

Գ Լ ՈՒ Ե ԺԳ

Իսկ նրանից հետո 6 տարի տիրեց ոմն Եզրիմ⁸⁷, որը դա-
ժան մարդ էր և մոլեգին կատաղութեամբ բազում շարիքնե-
րով մարտնչում էր մեր քրիստոնյա ազգի դեմ: Քանզի պիղծ
դեի կատաղութեամբ բռնված հրաման տվեց փշրել և խոր-
տակել մեր տիրոջ ու փրկչի ճշմարիտ մարդեղութեան և նրա
աշակերտների կենդանագիր պատկերները: Խորտակեց և
Քրիստոսի տերունական խաչի նշանը, որը շատ տեղերում
կանգնեցված էր հանդես համազոտ երրորդութեան և նրա երկրոր-
դական համար: Չար ոգու մոլորությունը հույժ ստի-
պում էր նրան ընդվզել և դեմ կանգնել [եկեղեցու] հաստա-
տուն վեմին: Վեմին ոչինչ չկարողացավ անել, բաց ինքը
վեմի վրա խորտակվեց: Մարդութեան գաղաթնախեղի հաս-
տատվելով՝ խորասուզեց ճշմարտության տվեց և երկրից ջնջել

տվեց անսուրբ անասունների՝ խոտաճարակ խոզերի բազ-
մությունը, քանզի շար ոգու մոլորությունը այս բանին հաս-
ցրեց նրան: Երբ վախճանին մոտեցավ, և նրա մահը մերձե-
ցավ, այնպես խեղդամահ սատկեց դեի բռնությունից, ար-
ժանավոր դատաստանը դանելով բոլորի տիրոջից: Եվ այս-
պես սատկեց դառն մահվամբ:

Գ Լ ՈՒ Ե ԺԸ

Նրա փոխարեն տիրեց Շամը⁸⁸, որը Հեշմն է, 19 տարի:
Սա իր իշխանության առաջին տարում, վատ խորհուրդ
հղանալով, Հերթ⁸⁹ անունով մի զորավար ուղարկեց աշխար-
հագիր անելու մեր Հայոց աշխարհում, որպեսզի տեսակ-տե-
սակ շարիքներով ծանրացնի հարկատվության (ուժը) իբրև թե
դժգոհ լինելով Օմարի բարեմտությունից, որն ապօրինի
ծախսել էր այն գանձերը, որոնք մթերված էին նախորդ
տիրակալների կողմից: Բազում վիշտ պատճառեց մեր երկ-
րին, մինչև որ ամենքը սկսեցին հառաչել դառն նեղություն-
ներից, և լիար ոչ մի հնար անտանելի տագնապներից ազատ-
վելու: Դրանից հետո առավել ևս ծանրացավ նրա ձեռքը մեր
Հայոց աշխարհի վրա:

Գ Լ ՈՒ Ե ԺԹ

Այդ ժամանակ դարձյալ հուզումներ եղան հյուսիսի կող-
մերում, քանզի մեռավ խազարաց արքան, որը խաբան էր կոչ-
վում: Երբ այդ տեսավ նրա մայրը, որի անունն էր Փարսիթ,
հրաման տվեց թարմաչ կոչված զորավարին՝ բազում զորք
հավաքել և հարձակվել մեր Հայոց աշխարհի վրա: Հայաք-
ված զորքերը շարժվեցին Հոնաց աշխարհի միջով, այսպե՛ս ճո-
րա պահակի և Մազթթաց երկրի միջով, ասպատակեցին հա-
տակարան աշխարհը, անցան Երասխ գետը դեպի Պարսից
երկիրը, ավերեցին Արտավեստն ու Գանձակ շահաստանը,
Աթշիրագուտն կառված գավառը, Սպատար Փերոզը և Որմիզդ
Փերոզը⁹⁰, Հազթեցին Իսմայելի զորքին, որի զորավարն էր

Զատայի⁹¹ անունով սմն զորավար: Ամենքին կոտորեցին սրի քաշելով և իրենք ասպատակեցին Զարեանդ գավառը: պաշարեցին Ամարիոտիկ կոչված ամրոցը, իսկ բանակի աղխը և սրով գերվածներին թաղեցին Արտավէտ քաղաքի մոտ: Մինչդեռ Ամարիոտիկ ամրոցի գեմ մարտնչում էին, (Քանկարծակի իսմայելացոց զորքից մի գունդ, սակավ մարդկանցից բաղկացած, իր զորավարով, որի անունն էր Սեթ Հարաշի⁹², ընկավ նրանց բանակի վրա և շատերին սրի քաշելով կոտորեց և ազատեց նրանց սրով գերվածներին) Շուտով պարտութեան զույժը հասավ Ամարիոտիկ ամրոցը պահող զորքին, և երբ լսեցին նրանց հասած շարիքը՝ թողեցին բերդը, որ պաշարել էին, և շտապեցին իրենց բանակատեղիի վրա հարձակվող թշնամու դեմ: նրանք (արարեն: ր) հարձակվեցին այդ զորքի դեմ, բազում հարվածներ հասցրին և հափշտակեցին նրանց զրոշի զինանշանը՝ մի պղնձե պատկեր, որը Հարաշիի գունդը դեռ պահում է իր մոտ՝ իբրև իրենց նախնիների քաջութեան պատվո նշան:

(Գրանից հետո Իսմայելի իշխանը ուղարկեց իր հղորդը՝ Մսլիմին⁹³, զորքի բազմութեամբ օգնական լինելու Հարաշիի զինին: Երբ Մսլիմը եկավ ու տեսավ, որ ինքը չէր կարողացել հասնել պատերազմին, և հաղթութունն ստացել է Սեթը, շատերին սրով կոտորեց, մյուսներին փախստական դարձրեց՝ ավարն ու գերյալներին վերցնելով) Ապա բազում թշնամանքով կշտամբելով խոշտանգեց նրան և նույնիսկ կամենում էր սպանել, սակայն շկարողացավ բացահայտ հրաման տալ, քանզի նրա տոհմակիցները ոտքի կանգնելով՝ աղմուկ-աղաղակ բարձրացրին: Այսպես, չհամարձակվելով իր կամքը կատարել, նա, լռելով, կասեցրեց իր մտադրութուններն և վերադարձավ Իսմայելի իշխանի մոտ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

(Գրանից հետո սկսեց [խալիֆան] սպառնալ հունաց թագավորին և դեսպան հղեց հոռոմոց Լեոն կայսրին, [պահանջելով] հարկատու-հպատակ դառնալ: Երբ Լեոն կայսրը հանձն շառավ ուղարկված պատգամի պահանջը կատարել,

նա զայրացած իր եղբորը՝ Մսլիմին, մեծ զորքով ուղարկեց Հունաց աշխարհի դեմ: Սա իր բազմամարդ զորքով Կիլիկիայի միջով անցավ Ասորիք՝ Միսիգիոն (Միսիգիոն), որը թարգմանաբար նշանակում է Միջերկրեայք, զնաց հասավ Քիթանացոց (Քիթանացոց) աշխարհը և բանակեց Սագառիս կոչված հզորագույն գետի եղբրքին: Պատրաստվեցին նաև հունաց զորքերը և երկրի բնակիչներին գաղթեցրին ամրոցներն ու Իսմայելի դեմ պաշտպանված քաղաքները, իսկ իրենք նրանց դեմ բանակեցին գետի մյուս ափին, իրենց բանակատեղին ամրացրին, շրջապատելով խրամատի փոստով, և այնպես նստած հսկում էին երկար ժամանակ: Ապա Լեոն թագավորից օրըստօրե բազում զգուշացումներ էին հասնում հունաց զորավարին, որ չլինի թե նրանց նենգ որոգայթի մեջ ընկնի, այլ միայն անշարժ հսկի նրանց առանց պատերազմելու:

Իսկ նա, կայսեր հրամանի համաձայն շագուշացավ: Թանայն է, որ Իսմայելի զորավարը կռւ էր արել իր զորքին, որ ամեն կողմ ասպատակ սփռեն, ավարի առնեն, շատերին գերեն և վերադառնան իրենց երկիրը: Այս լսելով (հունաց զորավարը հրամայեց իր զորքին զինվել ու հարձակվել նրանց վրա: Երբ հարձակվեցին Իսմայելի զորքի վրա, [վերջիններս] անմիջապես տեսան և զգացին նրանց գալըստը իրենց ետևից, քանզի նրանց փոշու մեզ էր պատել: նրանք հեռացնելով իրենց բանակի աղխը և զորագնդերը երեք մասի բաժանվելով, այստեղ և այնտեղ դարանամուտ դարձրին, և ինքը՝ Մսլիմը, ու զորքի մի մասը նրանց դեմ ճակատեցին, իսկ սրանք, անպատրաստ վիճակում ընդհարվելով նրանց հետ, բանակի աղխով հանդերձ, ընկան թշնամիների մեջ: Դարանամուտ եղածները թաքստոցներից դուրս գալով՝ պաշարեցին հունաց զորքը, իրենք այդ կողմերում ասպատակ սփռելով՝ շատերին սրով կոտորեցին և գրավեցին այդ երկրի գավառներն ու քաղաքները: Գերյալների թիվը, ասում են թե ավելի քան 8 քյուր էր, և բազում խնդութեամբ իրենց երկիրը վերադարձան:

Իսմայելի մեծ իշխանը, տեսնելով հաղթությունը, իր նախարարներով մեկտեղ մեծ ուրախություն պարեց և մեծամեծ պատիվներով պատվեց իր եղբորը ու նրա հաղթությունը հան-

գիտավոր տոնեց*.) Բերված ավարը զորքերին բաժանեց, գիր-
յալներին վերցրեց իբրև ծառաներ ու աղախիններ և այդ
տարին հանգիստ մնաց:

Գ Լ Ո Ւ Ե Ի

Մյուս տարում դարձյալ զորք գումարեց ավելի շատ, քան
նախորդ տարում, ավելց Մալիմ զորավարի ձեռքը և ուղար-
կեց Հունաց աշխարհի դեմ⁹⁴ Մա ուխտեց, երգվելով իր եղ-
բորը՝ լվերադասնալ նրա մոտ, մինչև շկատարի նրա ցան-
կությունը, քանզի ուխտել էր վերացնել (Հունաց) թագավո-
րությունը, հիմքից կործանել Կոստանդնուպոլիս կոչված քա-
ղաքը և փառահեղ կառուցվածքը սուրբ Սոփիայի, որի երկրի
վրա շինված էր վերին իմաստնությունը, որպես Աստուծո
տուն, այդժախց գիցապաշտության տեղի վերածել:

Այս աժեհը իր միտքը դնելով, առաջ խաղաց զորքի բազ-
մությունը, հասավ Հունաց աշխարհը՝ և իր ամբողջ պլյսով
բանակ գրեց Պոնտոս ծովի եղերքին՝ Բակույն խորխտալով
Առն արքայի դեմ, զեսպան ուղարկեց՝ վերադարձան հրո-
վարտակ գրելով, որի մեջ բազում ծաղր ու ծանակ կար՝
հետեյալ ձևով.

«Ե՛նչի է նման քո համառությունը, որին ապաստանած՝
չեկար մեզ հնազանդ հարկատու դառնալու Մինչդեռ բոլոր
ազգերը սարսափած գողացին մեզանից, իսկ դու ո՞ւմ ապաս-
տանած՝ այդպես ընդդիմանում ես մեզ: Արդոյք չե՞ս լսել այն
չարիքների մասին, որ պատճառեցինք բոլոր թագավորու-
թյուններին, որոնք դիմադրեցին մեր իշխանությունը. նրանց
խորաակելով՝ փշրեցինք խեցեղեն անոթի նման և մեր ձեռքն
ընկան երկրի բոլոր հարստությունները: Քանզի կատարվեց
Տիրոջ հրամանն ու խստումը մեր Հոր՝ Բամայիին, և բոլոր
թագավորություններին հաղթելով՝ հպատակեցրինք: Կամ թե
ա՞յն էլ շտեմար, թե որչափ պատուհաս եկավ երկրիդ քո
թագավորության օրոք: Ես իմ ձեռքով եմ ավերել քո բազմա-
թիվ քաղաքները և իմ սրով եմ կտորել քո զորքերի բազ-
մությունը:

* Բնադրում՝ օրհնեց:

Արդ, գիտցիր, որ եթե իմ հարկատվության տակ չմտնե-
ն, երդումով ուխտ եմ տրել, որ չեմ տեսնելու իմ ծնած երկիրը,
մինչև շվերացնեմ քո թագավորությունը և շկործանեմ ուժ-
րությունը պարսպավոր քաղաքիդ, որին հուսացել ես: Քո
անվանի Սոփիան, որը քո երկրպագության տունն է, իմ զոր-
քերի լվացարանի պիտի վերածեմ, և խաշափաշաք, որին
երկրպագում ես, խորտակելով պիտի ջախջախեմ քո գլխին,
քանզի մեր հավատի փառքը մեծ է Տիրոջ առջև, որը կօգնի
մեզ»:

Այսպիսի և վատթարագույն նախատիքներ պրեկ էր Առն
կայսեր: Իսկ նա, կարդալով վերալորտիան գրությունը, (չու-
տափույթ հրաման տվեց հայրապետին սինկղիտասի⁹⁵ հետ
մեկտեղ՝ քաղաքի ամբողջ բազմությունը, երեք օր չադարեց-
նել փառաարթյան հնչյունները Սուրբ Սոփիայում: Գորդաց
ամբողջ քաղաքը, հավաքվելով պաշտամունքի վայրում ըստ
կայսեր հրամանի՝ Ապոս նաև ինքը՝ թագավորը, եկավ ժամա-
նեց սուրբ քավարանը և ձեռքում պահելով նախատիքի
գրությունը՝ երեսներվայր քնկավ Տիրոջ առջև: Եզեկբայի նման
խնդրելով բազմախեմա ներողությունը մեր Փրկչի, որն ի
սկզբանե ողորմել է իր սիրելիներին: (Արտասուքով աղերսում
էր տիեզերքի Աստծուն՝ օգնել և վրեժխնդիր լինել շարասեր
թշնամուց): Հիշեց և անօրենի անարգանքը, արտասանելով
Կավթի խոսքերը. «Որչափ ապականեց թշնամին քո սրբարա-
նը, պարծեցան քո թշնամիները իրենց բարեկենդանության
մեջ, իրենք իրենց հաղթություն տվին և ի վերուստ եկած այ-
ցելությունը շճանաչեցին»:

Այս և նման բազում խոսքեր Տիրոջ առջև արտասանեց
որպես խոստովանություն: Երեք օր մնալով տառնց հաշելու՝
կատարում էր աղոթքի ուխտը: Իրանից հետո Բամայիի Մալիմ
զորավարին այսօրինակ հրովարտակ գրեց.

«Ինչո՞ւ պարծեցար քո շարագործությունը, ով հորդ ան-
օրինության մեջ, աժելու նման սրեցիր քո նեղությունը և
ամենապարի դեմ ընդվզելով հոխորացիր, մեծամտաբար
ապիրատություն ծրագրեցիր մեր փրկիչ ու նրա աթոռի տե-
ղակալ Փրփատոսի դեմ: Աքա համար մե՞նք հուսացել ենք նրա

* Մալմ. 29, 3-5:

ողորմածութեանը, որը դու նախաեսցիր, թե կհատուցի քեզ
քո շարութեան փախարեն և քո պիղծ բերանը, որ բացիր թա-
գաւորաց թագաւորի, նրա բաղարի, նրա անման փառքի
տաճարի և իմ դեմ, որ պահապանն եմ Քրիստոսի աթոռի,
ապա տերը կպապանձնեցնի ըստ Դավիթ մարգարիի նշովքի,
որն ասում է, թե անօրեննությունն խոսողներին բերանը թող
փակվի, իսկ մենք «ոչ մեր աղեղով ենք պարծենում և ոչ էլ
մեր սրով ենք ապրում, այլ Տիրոջ աջը, նրա բաղուկը և նրա
երեսի լույսը պահպանող շարութեանը»* կարող են խորտա-
կել այնպիսիներին, որոնք քեզ նման պարծենում են իրենց
ամբարտավանութեամբ, և երբեք մտքովդ չի սնցել, թե քե-
զանից արյուն վրեժ կպահանջվի նրանց համար, որոնց խող-
խողեց քո սուրը, և կամ գերի տարվեցին իմ երկիրից: Քանզի
ոչ թե քո արդար գործերի համար, այլ մեր անօրեննություն-
ների պատճառով թույլ տվեց, որ մեղավորների գավազանը
հասնի մինչև արգարների շրջանը, որպեսզի ճանաչենք մեր
տկարութեանը և համոզվենք գնալ Արարչի կամեցած ճա-
նապարհով: Իսկ դու մի փորձիր մեր տեր Աստծուն, քանզի
նա կարող է քեզ քո ամբողջ բազմությունը ծովի խորքերը
ենտել, ծովի ջրերը ալեկոծելով, ինչպես խստասիրտ փարա-
վոսին ենտեց Կարմիր ծովի խորքերը: Մովսեսի գավազա-
նով էր, որ շուրջ շրջվեց եգիպտական զորքի դեմ և խորա-
սույզ անելով՝ կորցրեց նրան, իսկ այն գավազանը նույնօրի-
նակ էր, ինչպես Քրիստոսի խաչի ամենազոր նշանը, որն
այսօր քո կողմից նախատվեց:

Արդ, եթե վերագառնալով՝ հեռանա ինձանից, բարին
կընտրես քո անձի և քո զորքի համար, ապա թե ոչ, շուտա-
փույթ կատարիր այն, ինչ մազգրվել էս: Իսկ տերը կկատա-
րի այն, ինչ բարի է և նրա համար հաճելի, կանի իր դատաս-
տանը, կփրկի իր ժողովրդին, իսկ մեր նեղիչներին կորապուլիս,
ամոթապարտ հոռ կդարձնի մեզանից»:

Երբ այս հրովարտակը կարդաց [Իսմայելի գորավարը,
առավել ևս բորբոքվեց նրա բարկությունը և զայրացած դա-
զանաբար ելավ մարտնչելու [եկեղեցու] հաստատուն վեժի
դեմ: Տերը խոստացրել էր նրա սիրտը, որպեսզի՝ ընկնի որո-

գայթի մեջ, որին արժանի էր: շրաման տվեց իր գործերին
նավեր կազմել: շուտափույթ կատարվեց հրամանը, քանզի
բազում օրերից ի վեր նավերը պատրաստ էին, և իսկույն
իրենց ամբողջ աղետով մտնելով նավերի մեջ՝ գնաց մեքան-
ցավ քաղաքին: Երբ Անն կայսրը տեսավ ծովի վրա զորքի
անտառի նման բազմությունը, հրաման տվեց պարսպի վրա
երկաթե վանդակապատ ցանց պատրաստել և կողպել ամ-
բողջ շղթայակապ դուռը, ոչ որի թույլ շտվեց պատերազմել
թշնամու հետ, քանզի ի՝ վերուստ էր օգնություն սպասում
և նրանց կատարած գործերի համար վրեժխնդրություն
ակնկալում: Իսկույն հրամայեց հայրապետին սինկղիտոսով
հանդերձ և քաղաքի ամենայն բազմությամբ կատարյալ և
ջերմ հավատով իրենց հետ մարտակից վերցնել Քրիստոսի
անհաղթելի և պայծառացյալ խաչի նշանը: Ինքը՝ թագաւորը,
ամբողջ բազմության հետ իր ուսերի վրա կրում էր անպար-
տելի հաղթության [նշան], և ժողովուրդը փառաբանության
հնչյունները ի վեր (երկինք) էր բարձրացնում և տարածում
էր խունկերի անուշահոտության բուրմունքն ու մոմակայնե-
րի, շահերի պայծառությունը, որոնք առջևից ու հետևից տա-
նում էին ի պատիվ հաղթող և պատվական խաչի: Բացելով
քաղաքի դուռը՝ դուրս ելան ամբողջ բազմությամբ, ջրերի
վրա բարձրացրին խաչի նշանը, ասելով, «օգնիր մեզ, Քրիս-
տոս, որդի Աստուծո, աշխարհի փրկիչ»: Այս խոսքերը երեք
անգամ դեպի վեր՝ երկինք ուղղելուց հետո խաչի նշանը
սուղեցին ծովի ջրերի մեջ, այնտեղ դրոշմելով տերունական
[խաչի] ուրվագիծը:

(Անմիջապես) ծովի խորքը՝ զորդաց սուրբ խաչի գորություն-
նից, ալիքները ուժգին շարժմամբ եռացին, օսաստիկ նավա-
բեկություն [նշան] և Իսմայելի զորքի մեծ խորտակումը մինչև
որ զորքի մեծ մասը ընկղմվեց ծովի ջրերի մեջ և փարափոն-
յան զորքի նման ծովապատիժ բարկությունը ճաշակեց: Զոր-
քի մնացյալ մասը տախտակների վրա [ալիքները] թշեցին
տարան ծովի այն կողմը՝ թրակացոց աշխարհը, և ոմանք հե-
ռավոր կղզիներ ընկան: Զորքերի բազմությունը ավելի էր,
քան 50 բյուր մարդ: Իսկ նրանք, որ, վտանգավոր փորձու-
թյունից ազատվելով, մնացին ցամաքի վրա, [կայսրը]
ձեռնամուխ լեղավ նրանց անողորմ սրի մատնել, այլ հրա-

* Մազմ. ԽԳ, 4:

ման ավելց պաշարման մեջ պահել, որպեսզի ոչ ոք հնարա-
վորութիւն չունենա կերակուր ճարելու համար դուրս ելնելու
Մեծ սով եղա՞վ նրանց բանակում, մինչև որ սպառովեցին
ձիերն ու ջրփնները: Գրանից հետո ձեռնամուխ եղան հար-
ձերն ու ծառաները փողոտելու և ուտելու, որպեսզի իրենց
սովածութիւնը հագեցնեն: Ապա բազում աղերսանքով
[Մսլիմը] խնդրում էր (ևսն կայսրին՝ ողորմել նրան և բաց
թողնել պաշարումից, քանզի շատերից քչերն էին ողջ մնա-
ցել):

Իսկ կոն թագավորը մտածելով, որ Տերը արդեն վրեժ էր
լուծել թշնամիներից, ողորմութիւն ցույց տվեց նրանց: Իր
մոտ կանչեց [Մսլիմին] և խոսեց նրա հետ բազում դատափե-
տումներով: Հիշեցնում էր նաև նրա անամոթ լրբութիւնը,
ասելով. «Ինչո՞ւ արդո՞ք կամեցար հարձակվել մեր երկրի
վրա, և քո սուրբ անխնա կոտորեց իմ զորքը, իմ քա-
ղաքների բնակիչներին գերեզմարեցիր: Արդ, կենդանի է Տե-
րը. իսկ դու մահու որդի ես և արժանի չես կյանքի, այլ որով-
հետև իմ դատաստանը Տերը կատարեց, քո անօրինութիւնը
բերեց քո գլխին և անմեղ մարդկանց արյունը քեզնից պա-
հանչեց, ապա ես իմ ձեռքը չեմ բարձրացնի քեզ վրա և քեզ
ըստ արժանվույն չեմ դատի: Ահա քո անձը իմ ձեռքում է, և
կարող եմ քեզ սպանել կամ ապրեցնել, բայց չես մեռնելու,
այլ գնա պատմիր Աստուծո մեծամեծ հրաշքները, որ տեսար»:

Պատասխան տվեց Մսլիմը կայսրին և ասաց. «Ի՞նչ կա-
րող եմ ասել քեզ այդ մասին, քանզի արդարև կյանքի ար-
ժանի չեմ. սակա՞վ չեն իմ հանցանքները, որ քո երկրի դե՞մ
գործել եմ: Սակայն դու մեծ ողորմութիւն ցույց տվեցիր իմ
անձը կենդանի թողնելով, որովհետև իմ սխալների մասին
ինքս եմ վկայում: Բայց քանի որ քո սրտում կարեկցանք
առաջացա՞վ իմ նկատմամբ, ապա արձակիր ինձ իմ երկիրը,
և կուխտեմ քո դեմ այլևս չելնել պատերազմի»:

[Կայսրը] հրամայեց զոհացնել նրա խնորանքը, իսկ նա
պատրաստվելով նա՞վ մտա՞վ, զգուշորեն անցա՞վ Միջերկրա-
կանը և մեծ ամոթով վերադարձա՞վ իր երկիրը: Նրան դիմա-
վորում էին տարբեր քաղաքներում վա՛յով ու ճշով ճակա-
տին խփելով և վրան մոխիր ածելով: Իսկ նա մեծ ամոթով
կորագլուխ հանդիպում էր նրանց, բազում կշտամբանք լսե-

լով, և ոչ մի պատասխան չէր տալիս, բացի նրանից որ ասում
էր. «Չէի կարող Աստուծո հետ կազել»: Գրանից հետո իր
տունը գնաց և սուրն իր մեջքին չկապեց մինչև օրն իր մահ-
վան:

Գ Լ Ո Ի Խ Ի Ա

(Այդ ժամանակ Իսմայելի իշխան Հեշմը մեր հայոց ազգի
վրա [կառավարել] նշանակեց Մահմետի որդի Մրուանին,
Սեթի փոխարեն, որը Հարաշի էր կոչվում: Երբ Մրուանը
Գվին հասա՞վ, Հայաստանի նախարարները նրան ընդատալ
ելան): Զրուցեց նրանց հետ խաղաղուտե՞ր խոսքերով և իր մոտ
կանչելով վասակի որդի Աշոտին⁹⁶, Բագրատունյաց տնից,
Հեշմի հրամանով տվեց նրան պատրիկութիւն իշխանու-
թիւնը մեր Հայոց աշխարհի վրա և բազում պատիվներով
պատվեց նրան: Իսկ Մահմետի որդիները⁹⁷, իմանալով Աշոտի
ստացած պատվի մասին, թե ինչպէս նրա անձը բարձրացել
էր Հեշմի և Մրուան զորավարի աջքին, մեծ ատելութեամբ
լցվեցին նրա դեմ, մինչև որ նրանց գժտութիւնը հասա՞վ
Մահմետի որդու [Մրուանի] ականջին: Սա անմիջապէս հրա-
մայեց ձերբակալել նրանց և ուղարկեց Իսմայելի իշխանի
մոտ Գրիգորին ու Դավթին, որոնք Մամիկոնյան տոհմից էին:
Ամբաստանութիւն գրեց նրանց դեմ, թե խոսվարար և ան-
հնազանդ են Աշոտի իշխանութիւն նկատմամբ: Նա հրամա-
յեց նրանց տանել Եման կոչված երկիրը, որն անապատ է, և
բանտի կալանքի մեջ պահել մինչև իրենց կյանքի վախճանը:

Երբ Աշոտի պատրիկութիւն իշխանութիւնը հաստատվեց,
ղնաց Իսմայելի իշխանի մոտ մեր երկրի ծանր վիճակի պատ-
ճառով, քանզի երեք տարուց ի վեր չէր վճարվում Հայաս-
տանի նախարարների և նրանց հեծյալների ոռճիկը⁹⁸: Ներ-
կայացա՞վ Հեշմին և խոսեց նրա հետ պատկառելի և իմաս-
տուն ձևով: Սա մեծարեց նրան ըստ արժանվույն, կատարեց
նրա խնդրանքը և հրաման տվեց նրա համար կշռել Լրեք
տարվա [արծաթը] տարեկան 100 000 հաշվով⁹⁸, Գրանից
հետո նրա իշխանութիւն տարիներին անխափան գալիս էր
պահմանված արծաթի սակը քոլոր հեծյալների համար:

⁹⁶ Բնագրում խաթիթայ:

(Մրանից հետո բազմաթիվ զորք հավաքեց Մրուանը, Մահմանի որդին, և իր հետ վերցնելով Աշոտ իշխանին՝ նախարարներին և նրանց հեծյալների հետ մեկտեղ ասպատակեցին Հոնաց աշխարհը) Մարտնչելով քաղաքի⁹⁹ դեմ՝ հաղթեցին քաղաքային կայսրորդին և գրավեցին քաղաքը) Երբ քաղաքի բնակիչները տեսան, որ թշնամին հաղթեց իրենց և առավ քաղաքը, քաղաքացիներից շատերը իրենց ինչքը ծափ խորքը թափեցին, իսկ իրենք իրենց պահելով՝ ծովահեղձ խեղդամահ եղան: (Իսմայելի զորքը վերցրեց մնացած բազմությունն ու ավարը, և Մրուանը Աշոտ իշխանի հետ մեկտեղ վերադարձավ Հոնաց կողմերից մեծ հաղթությամբ և բազում ավարով) Երբ հասավ Պարտավ շահապտանը, գերյալներից ու ավարից անշատեց մեկ հինգերորդը¹⁰⁰ և ուղարկեց իրենց Հեշմ իշխանին՝ տեղեկացնելով հաղթանակի մասին:

Իսկ նա, ստանալով ավարի քնձաները, մեծապես շնորհակալություն հայտնեց Մրուանին ու նրա զորքերին և նախատեց իր եղբորը՝ Մսլիմին, օրինակ բերելով Մրուանի հերոսական հաղթանակը: Սա պատասխանելով ասաց. «Ես օչ թե մարդկանց դեմ էի պատերազմում, այլ՝ Աստուծո, իսկ նա՝ անբան անասունների դեմ»: Մնացյալ ավարը, գերյալներով հանդերձ, Մրուանը բաշխեց իր զորքին, մի մասը հատկացրեց Աշոտին և այլ պատվական նախարարներին, [տալով] ծառաներ և աղախիկներ¹⁰¹: Իսկ ինքը, տիրելով մեր երկրին, վերջ տվեց ամեն տեսակ հարձակումներին, և անխրավություն գործողների, ավազակների, գողերի և բարեկարգության թշնամիների ոտքերն ու ձեռքերը ծայրահատոր անելով փայտի վրա՝ մահվան գատապարտեց:

Սվ 19 տարի իշխելով՝ Հեշմը մատնակեց:

(Նրա փոխարեն իշխեց Վլիթը մեկուկես տարի) Սա պեղակազմ, զորեղ մարդ էր, սիրում էր զբաղվել բմբռական մենամարտությամբ և ուր որ լսում էր, թե կորու-

վի ուժի տնր [անձ] կա, մարդ ուղարկելով իր մոտ էր բերել տալիս, որպեսզի իր ուժը փորձի: Բացի այդ, զբաղվում էր հարբեցողությամբ և սանձարձակ վավաշոտ իզամուլության գիշուխյամբ: Համատոհմ նախարարները, տեսնելով իրենց իշխանի վարքը՝ անպիտան զազրելի պղծությունը, հարց տվեցին իրենց հավատի վստահելի [գիտուններին], որոնք նրանց մոտ կուռա¹⁰² են կոչվում, թե ի՞նչ են խորհում նրա մասին: Մրանք պատասխան տվեցին, թե «որովհետև անարգեց մեր տերության պատիվը, զանց առավ մեր օրենսդրի հրամանը և զբազվեց զազրելի պղծությամբ, արժանի է մահվան, թող մեռնի: Իսկ նրանք, ըստ կուռաներից ստացած հրամանի, մտան արքունի ապարանքը, գտան նրան գինեղիխությամբ թմբած և սրով սպանեցին:

(Նրա փոխարեն հաստատեցին ոմն Սուլեյմանի, նույն արքայական տոհմից:)

(Իսկ Մրուանը, երբ լսեց իրենց իշխան Վլիթի մահը, շուտափույթ կազմակերպեց իր զորքը, մեր Հայոց աշխարհում թողեց Մսլիմի որդի Իսահակին և ինքը զորքի ամբողջ բազմությամբ հանդերձ գնաց պատերազմելու իր ժողովրդի դեմ, որպես թե քինախնդիր էր լինում Վլիթի և որդու մահվան առթիվ: Սպանվածների տոհմից ոմանց գտնելով սիրաշահող, իր ազգատոհմի բուրբ տղամարդկանց իր մոտ հավաքեց: Իսմայելի որդիներից ուրիշ շատեր ևս միաբանելով՝ մեծ զորք կազմեցին և առաջ խաղալով՝ անցան մեծ Եփրատ գետը: [Երկու կողմերը] իրար հանդիպեցին Գամասկոսի սահմանի մոտ, Թուսփա կոչված վայրում: Այնտեղ բազում օրեր բախվել է իրար մեծ հարվածներ հասցրին) Երբ օրը երեկո դարձավ, և ետին (երեկոյան) ազոթքի ժամը մոտեցել էր, նրանք պատերազմը դադարեցրին և նստած լաց էին լինում միմյանց գոհների վրա: (Իրակները հավաքելով՝ գերեզմանին էին հանձնում, ասելով իրար՝ «մեկ մազ ենք, մեկ լեզու և մեկ իշխանություն ունենք, այլև եղբայրներ ենք, էլ ինչու՞ ենք սրով իրար խոզխոզում»:) Այս ասելով, մյուս օրը պատերազմը

վերսկսեցին, և պատերազմը նրանց միջև երկարեց: Մրուանը հաղթեց մյուսներին, սպանեց Սուլեյմանին և ինքը վերցրեց իշխանությունը 6 տարի:

(Նրա իշխանության ժամանակ Իսմայելի որդիների պատերազմը չղագարեց, քանզի Մրուանը պաշարեց Դամասկոս քաղաքը և կովելով խորտակեց երկաթե դռները՝ Քաղաքի բնակիչներին, Իսմայելի որդիներին, որոնք արդեն հասուն տղամարդիկ էին, շորս ցցի մեջ պրկելով՝ դեմքերը տաշում էին հյուսնի սուր գործիքներով և այնպես դառնությամբ զրկում էին կյանքից: Հղի կանանց մեղադրեց պատուում էին. արու մանուկներին պատերի մեջ գնելով վրան պատ էին շարում և այնպես շարամահ [նրանք] սատակում էին, իսկ աղջիկներին, որոնք տղամարդու անկողին չգիտեին, նույնպես գերեվարում էին այլ խառնիճազանը բազմության հետ: Քանզի տիրոջ վրեժխնդրությունը քաղաքի վրա էր հասել նրանց շարագործությունների հաճախության պատճառով:

Այստեղ կատարվեց Ամովսի մարգարեությունը, որն ասում է՝ «այսպես ասում է Տերը Դամասկոսի երեք ամբարշտությունների մասին, իսկ շորորդի համար ետ չեմ կանգնելու [պատժից] այն բանի փոխարեն, որ նրանք գաղապագացոց հղիներին երկաթե սղոցներով հերձեցին: Հուր եմ ուղարկելու Ազայելի տունը, որ կոչնչացնի Աղերի որդիների հիմքերը: Պիտի խորտակեմ Դամասկոսի նիզբրը, սատակեցնելու եմ Ովնի դաշտերի բնակիչներին, կոտորելու եմ Խառանի ամբողջ ազգի տղամարդկանց, գերելու եմ ասորոց ընտիր ժողովրդին»*: Իրոք Խառանի բնակիչներից հասավ նրա կործանումը ըստ մարգարեի ձայնի:

Բայց արժի հարցնել, թե ինչպե՞ս է, որ մարգարեն ամեն տեսակ ամբարշտությունները երեքի է բաժանում և շորորդն է [միայն] համարում Տիրոջ բարկության բուն պատճառը: Ինձ թվում է, որ ամբարշտների քաղաքը լցված էր բազմատեսակ շարությունք, քանզի մտրով, զգացումներով ու սրբտով ապականված կատարում էին մտքի ու զգացումների այլաեսեման արդյունք և շարության առատագույն ծնունդ հանդիսացող [գործեր]՝ սպանություն, ունեցվածքի հափքը-

տակում և վավաշտ ցանկություն: Իսկ շորորդ [ամբարշտությունը] այն էր, որ ոչ միայն չէին վախենում Աստուծո այցելությունից, այլև իրենց գործած շարիքների պատճառը նրան էին համարում, որն ամենայն բարիքների աղբյուրն է: Ահա այս էր, որ Աստուծո քաղցր ներողամտությունը անդառնալի շարժամբ վերածեց ցամառն ամբարշտության հանդեպ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

(Մինչդեռ Իսմայելի որդիների միջև շարադեռ պատերազմի պատճառով խոռվահույզ խառնաշփոթությունը շարունակվում էր, Սմբատի որդիները կալանավոր պատանդի [վիճակից] ազատվեցին, քանզի Վլիթի հրամանով բանտից արձակվել էին: Բայց նախքան նրանց Ասորիք գալը՝ Վլիթն սպանվեց, և նրանք այնտեղ բռնվեցին, ու նրանց թույլ չտվեցին ելնել այդ երկրից): Ապա երբ պատերազմը նրանց (արարների) միջև շարունակվեց, այն ժամանակ նրանք ազատվելով՝ դիմեցին Հայաստան: Երբ Հայոց աշխարհ հասան, կարճ ժամանակ անց, գնալով Վասպուրականի կողմերը՝ խոշտանգումնեւ գործեցին և երկրում մեծ տագնապ հարուցեցին: Բռնի հարկապահանջությամբ այնքան նեղեցին նրանց, որ մեր աշխարհի բողոքը հասավ հրամանատար (կառավարիչ) Մսլիմի որդի Իսահակին, որն արգելեց նրանց ապիրատություն գործել:

(Սակայն երբ տեսան մարտամբոխ կռվի ելքը, վերստին սկսեցին հակառակվել Աշոտի իշխանությանը և ջանում էին ամենուրեք որոգայթ լարել նրա անձի դեմ: Գիշերանց հարձակվելով նրա վրա, երբ հանգստանում էր և իր զորքը սփռել էր տարրեր գավառներում՝ կամենում էին սպանել նրան, սակայն պահապաններն զգալով՝ զգուշացրին իշխանին վրա հասնող թշնամուց, և նա փախչելով ազատվեց նրանց ձեռքից: Նրանք լիանալով Աշոտ իշխանի գանձերի բազում ավարով՝ հրաժարվեցին նրան հետապնդելուց: Իսկ նա հասկանալով նրանց դավաճանությունը, քանզի խաղաղության ժամանակ շարամիտ վրեժխնդրությամբ էին լցված նրա դեմ, որոշ ժամանակ անձնապահ էր լինում նրանցից:

Ապա իր տան ունեցվածքը, տիկնոջը և ամբողջ ընտանիքը հավաքեց Գարշունք ամրոցում և ամրոցի վրա պահապան թողեց պաշտպանելու համար: Ինքն անցավ գնաց Ասորիք, Իսմայելի իշխան Մրուանի մոտ, զեկուցելու համար իր և նախարարների միջև եղած խռովության մասին:

Երբ պատրիկն իր գործով հասավ կովի վայրը, Մրուանի զորքերը մեծ հաղթանակ տարան, և հակառակորդները խորտակվեցին, քանզի լսել էին նրա գալստյան համբավը, թե հասել է հայոց պատրիկը օգնություն ցույց տալու և իր հետ ունի զինված մարդկանցից 15 000 ընտիր հեծյալներ: Այս լսելով՝ Մրուանի հակառակորդները պատերազմում հուսալքվեցին, այդ օրը մեծ պարտություն կրեցին և պատերազմից հոգնելով՝ կոխվեց մի փոքր զաղարեցրին:

Այն ժամանակ, երբ Աշոտ իշխանը Ասորիքում էր, Մսիմի որդին հայոց զորքի վրա Աշոտի փոխարեն իշխան նշանակեց Գրիգորին՝ Մամիկոնյան տնից, իսկ Մրուանը, տեղեկանալով Սմբատի որդիների մասին ամբաստանությունը, թե ինչ էր արել նրան Գավթթը՝ Գրիգորի եղբայրը, սուրհանդակ հղեց Մսիմի որդի Իսահակին, որը մեր Հայոց աշխարհի կառավարիչ էր և հրամայեց նրան՝ բռնել Գավթին և հանձնել նրան ոմն Օբբայի ձեռքը, որպեսզի սա դատաստան տեսնի նրա հետ այնպես, ինչպես հրամայված էր նրա մասին: Իսկ նա, երբ հրաման ստացավ, չկարողացավ հապաղել, այլ անմիջապես նենգությունը կանչեց, ձերբակալեց ու հանձնեց անոգորմ զահճի ձեռքը, որ դառն կապանքներով կապեց նրան և մի քանի օր բանտում կալանքի տակ պահեց: Ապա զրեց Մրուանին, թե ի՞նչ կհրամայի [Սա էլ] հրաման տվեց ծայրակոտոր անել ոտքերն ու ձեռքերը և փայտի վրա մահվան դատապարտել: Այսպես ողորմելի և ամոթալի մահվամբ մեռավ, քանզի Աստուծո համար անհաճո էր միմյանց նկատմամբ ունեցած նրանց ատելությունը. և արդարև ինչպես ասվում է՝ շոր սերմերը շար պտուղ են տալիս:

Երբ այս շարագործությունները կատարվեցին, Մրուանը դարձյալ հաստատեց Աշոտի իշխանությունը և նրան մեծամեծ պատիվներով ուղարկեց Հայոց երկիրը: Այնուհետև Գրիգորը շեր զաղարում թշնամություն երկնելուց իր եղբոր մահվան փոխարեն քինախնդիր լինելու համար թեպետ բռնակալներից

ունեցած երկյուղի պատճառով խաղաղ հարաբերություն մեջ էր Աշոտի հետ, բայց միայն խոսքերով, իսկ սրտով չէր հաշտվել նրա իշխանության հետ և սպասում էր այն ժամին, կրք կկարողանար իր նպատակն իրագործել:

Գ Լ Ո Ի Ե Ի Չ

Այն ժամանակ, երբ տակավին երկարում էր պատերազմը նրանց (արաբների) միջև, մեր երկրի բոլոր նախարարները խորհեցին դեռ նետել հնազանդության լուծը, ապաստմբել և ազատվել Իսմայելի հպատակությունից: Այս խորհուրդը տվել էր Գրիգորը՝ Մամիկոնյան տոհմից, և այս խորամանկությունը նյութել էր Աշոտի իշխանությունը խելու նպատակով: Իսկ Հայաստանի բոլոր նախարարները, գալով Աշոտ իշխանի մոտ, համոզում էին նրան կողմնակից դառնալ և միաբանել անօգուտ խորհրդին:

Իշխանը, տեսնելով նախարարների և նրանց հեծյալների միաբանությունը, և որ նրանք բոլորը օգևորված էին անօգուտ խորհրդով՝ իր մեջ վարանեց և նախարարներին մեկմեկ կանչելով՝ բազում խոսքերով թախանձում էր չձեռնասկել այս ապիրատ գործը: Ենա ասում էր. «Մ՛վ եղբայրներ, խոհական միտք չեմ տեսնում այս անխոհեմ գործի մեջ, այլ միայն՝ անուղղելի խորհուրդ և անպիտան խոսքեր: Մեր զորքերը սակավաթիվ են Իսմայելի բռնության դեմ, շենք կարող պիտանդրել նրանց զորքերին և ոչ էլ մեր երկիրը փրկել վիշապի բերանից, այլ միայն տանջանքի ու վտանգի կենթարկենք նրան: Բայց եթե կամենում եք իմ խրատն ընդունել, այս բանը մի անեք և հարկ վճարենք նրանց, ինչպես ցարդ անում էինք, և պահպանենք մեր ստացվածքները, աչգիները, անտառներն ու անդաստանները»¹⁰³: Սակայն Հայաստանի նախարարները չկամեցան ընդունել իմաստուն խրատը, այլ դիմադարձ լինելով՝ ասացին. «Եթե չմիաբանենք մեր որսույթին, բո զորքից ոչ ոք չի մնա քեզ հետ, շենք կարող ժուժկալել այն տաղնալներին, որոնց մեջ է մեր Հայոց երկիրը»: Այդ ժամանակ Աշոտ իշխանը ակամայից համաձայնեց միաբանել Գրիգորի և այլ նախարարների հետ և իրար հետ ուխտի դաշինք կնքեցին տերունական խաչի միջ-

նորդութիւնք՝ համարաբարձորն արհայտենելու միտքանութիւնն սարք:

Երբ՝ այս իրաշինքը հաստատեցին, հեռացան մեր աշխարհի հրամանատարից և գնալով ապաստանեցին Տայքի ամբողջուններում, իրենց ամբողջ ընտանիքներով և ունեցվածքով հանդերձ՝ մանավանդ սպառնալով հունաց արքայի դորքերին, որոնք Պոնտոսի կողմերում էին, բանզի նրանց միջև խաղաղութիւնն ուխտ կար կոտորանդին կոչուեալ հասմանով: Եվ սպասածքների գնդին խառնվեցին բոլոր հանցանքի որդիները¹⁰⁴, որոնք ոչ Աստուծո կրկնուզն էին ճանաչում, ոչ էլ՝ իշխանների ասն ու ծերերի պատիվը, այլ իբրև աշխարհիկներ և օտարացածներ, ասպատակ սփռելով, գերեզմարում էին իրենց եղբայրներին ու ազգակիցներին և բազում ավարատութիւն կատարում, խոշտանցումներով և գանահարութիւնք տանջելով իրենց եղբայրներին:

Այս պատճառով Աստուծո զգաց իր ներողամտութիւնն համար ու բանդեց նրանց միաբանութիւնը, բանզի մի ամբողջ տարի էլ շահողից նրանց ապիրատ գործեր կատարել, այլ խսկույն նրանցից հեռացավ Աշոտ իշխանը նախարարներից ոմանց հետ եկավ հասավ Քաղթանդ գաղթաբի շահր գյուղը, կամենալով միաբանել Իսմայելի որդիներին հետ: Այն ժամանակ նախարարները, որոնք նրա հետ էին, նենգելով զեկուցեցին շարասեր Գրիգորին այդ մտադրութիւնն մասին: Իսկ սա, կամենալով գլուխ բերել վաղուց մտածված դավադրութիւնը, շուտափութ կազմեց իր զորքը և նրա ետեից հետամուտ լինելով՝ ագոսլի նման լեռներ վրա ընկնանալով, գիշերը վրա հասավ և պաշարեց նրա հանգստութեն կայանը, գիտենալով նրա գործի երկմտութիւնն մասին, որն իրոք չեկավ նրան օգնութիւն: Բռնելով նրան՝ հանձնեց Իսմայի ծառաների ձեռքը և հրամայեց աչքի լուսից զրկել: Ստիկրումած խավարով նսնմացավ մեր ամբողջ երկրի պաշտանքը, և խոր տխրութիւն մեջ պարտակվեց ոչ միայն նրա անձը, այլև իր ազգի ամենայն համատուհմ նախարարները: Նրանք հետո իրազեկ դառնալով ոչնչով շխարհացան օգտակար լինել, այլ միայն նստած ողբով ու վայնաստեճով բացում էին, քանզի քնկել էր, կործանվել իրենց գլխի պերճութիւնն պապը, և վերացել էր մեր հայոց ազգի փառքը:

Իսկ ուխտադրուծ Գրիգորը, իբրև թե մեծ բաշարգործութիւնից վերադարձած, զնաց կարծն քաղաք և աշխարհից ամեն կողմ իր հաղթութիւնն ափետիսը առարձ: Բազում օրեր անց Աստուծո դատաստանը հասավ նրան՝ իր գործերին արժանի ձևով: Նրա սրովայնը ուռեց, օւժիկն ճալվերով տառապեց նա և աշխարհ լարաշար մեռավ՝ անհիշատակ վերանալով մեղաեղից:

Նրա փոխարեն իշխան դարձրին նրա եղբորը՝ Մուշեղին, կարճ ժամանակով:

Աշոտը, 17 տարի իշխելով, ավելի փառավոր, քան բոլոր նախորդ իշխանները, դավազիր նենգութիւնն հանդիպելու Գրանից հետո 13 տարի ապրելով՝ վախճանվեց խոր ծիրութիւնն մեջ և փառավորապես տապանի մեջ դրվեց իր [տունիկ] գերեզմանոցում՝ Գարշունք (Գարինք) գյուղում: Ն

Գ Լ Ա Բ Խ Ի Է

Մենք պետք է նորից վերագանանք մեր նախկին շարակարգ պատմութիւնը:

Մինչդեռ Մրուանը Իսմայելի իշխանն էր և մարտնչում էր իր ազգի դեմ, դարձյալ մի ուրիշ մոլեկան հրդեհի հարբորբովեց արևելյան կողմերում՝ նորասան երկրից: Քանզի Իսմայելի որդիները բոլոր նախարարները, երբ տեսան, որ իրենց վրա ուժեղացավ յուրայինների անհանդուրժելի բռնութիւնը, քանում էին իրենց անձի համար փրկութիւն գտնելու նրանցից շատերը, որոնք իրենց օրենսդրի տոհմեց էին, նույնպես բաժանվելով փախան նորասան երկիր և որոշ ժամանակ թաքնված մնացին: Գրանից հետո, մեծափութիւնով նորասանի գործերը, նրանց վրա զորավար կարգեցին կահաթբային և ոմն Աբու Մալիմին¹⁰⁵, որը խորամանկ էր աստղագիտական աղանդի մեջ: Արանք միաբանելով՝ սպանեցին երկրի կառավարչին և իրենց կողմը դարձնելով նրա զորքը և այլ խառնիճաղանջ մարդկանց բազմութիւն, որոնք հարկապահանջների անտանելի բռնութիւնից նեղված էին, սկսեցին արդեն հարձակվել Ասորեստանի կողմերը: Մրուանի զորքը նրա դեմ երթալով՝ շխարհացավ զիմարքել այդ ամբողջին, քանզի Տիրոջից էր [սահմանված] նրա իշխանու-

թյան խորտակումը: Ըստերին սպանեցին և ուրիշներին փախստական դարձրին գնդերը Արզրաների¹⁰⁶, որոնք Հեշմի սրդիներ են կոչվում: Իրենք առաջ գալով՝ անցան Տիգրիս գետը և բազում քաղաքներ հնազանդեցնելով՝ նվաճեցին, և բոլոր գորքերը, որ Մրուանը ուղարկում էր իրենց դեմ, խորտակելով շահաջախեցին¹⁰⁷ և մինչև տաճկաց մեծ բանակատեղի Ակոզան¹⁰⁸ ամենքին հնազանդեցրին:

Իսկ Ակոզայի և Բասրայի բնակիչները, տեսնելով նրանց զորության ուժգնությունը, օգնեցին և հարեցին նրանց զորքին: Այս դպալով՝ Մրուանը մեծ տագնապի մեջ էր, և բացելով արքունի գանձարանները՝ բաժանեց զորքերին, ինքն էլ սպառազինված, զորքերի բազմության հետ ելավ: Նրանց դեմ: Երբ իրար մոտ հասան և ճակատ առ ճակատ դասավորվեցին, ու պատերազմն սկսվեց, երկու կողմերից շատերը վիրավորվեցին, և անթիվ դիակներ դաշտերում փռվեցին: Պատերազմը երկուսի միջև երկարաձգվեց մինչև տարվա վերջը: Իսկ Մրուանի իշխանության վեցերորդ տարվա վերջին նրա վրա հասավ Աստուծո վրեժխնդրությունը, պահանջելու համար իր ազգակիցների մեջ թափած արյան հատուցումը:

Արզրայի զորքերը հզորացած՝ գազանաբար հարձակվեցին Մրուանի վրա, դիմեցին նրա բանակատեղին, և շատերը սպանվեցին նրանց սաստիկ հարվածներից: Ասում են, որ միայն այս անգամ ընկածների թիվը 300 000 հեծյալ էր՝ այնպես, որ արյունը առվի վտակներով էր հոսում, իսկ արյան գոլորշուց առաջացավ մեզ և ուժեղ մթություն: Զորքի մնացորդներին քշելով Մրուանի բանակատեղին՝ նրանք հասան մինչև դղրակաձև շարված զորքն ու Մրուանի վրանը և նրան խփելով՝ սպանեցին: Այսպիսով 6 տարի այս բոլոր շարիքները, պատերազմների դրդյունը, քաղաքների զրավումը և արյունահեղությունը կատարելով՝ վախճանվեց:

Փ Լ Ո Ւ Խ Ի Ը

Նրա փոխարեն տիրեց Արզրան¹⁰⁹, որն ուղարկեց եզրորդ, մյուս Արզրային, շրջելու իր իշխանության բոլոր երկրներում: Սա նախ և առաջ ելավ Հայոց աշխարհը, բազում վշտերով ու նեղություններ ամենքին տանջեց և շքավոր տնանկու-

թյան հասցրեց, հարկ պահանջելով մինչև իսկ մեռյալներից: Որքերի ու այրիների բազմությունը շարալլուկ տառապեցնում էր խոշտանգումներով, այսպեսնի խարաղանու մեկերով և զանահարություններով շարալլուկ էր քահանաներին ու ատմածային խորանի պաշտոնյաներին, որպեսզի հայտնեն վախճանյալների և նրանց ընտանիքների անունները: Խոշտանգում էր և երկրի բնակիչներին բռնազույն և դառն հարկապահանջություններով: Ըստ գլխի¹¹⁰ առնելով բազում արծաթ շուգե՝ ամենքի պարանոցին կապարե կնիք էր դնում:

Իսկ նախարարական տոհմերը կամա թի ակամա ընծաներ¹¹¹ էին տալիս՝ ձիեր, չորիներ, պատվական հանգերձներ, ինչպես նաև ոսկու ու արծաթի գանձեր, որպեսզի կարողանային լցնել վիշապի բերանը, որը հարձակվում էր երկիրն ապականելու: Լցնելով իր շարունկալ որովայնի անհագությունը, նա անցավ Պարսից և Մարաց կողմերը, մինչև նորասան աշխարհը՝ և այնտեղից՝ Եգիպտոս և Պենտապոլսական աշխարհը, մինչև Ափրիկե: Ամեն տեղ, ուր հասնում էր նա իր ազահ հափշտակող ցանկությունը իբրև ուսկան ձգելով՝ որսում էր մարդկանց կյանքի պարագաները, և մինչև անգամ իր ազգը անիրավության համար կռից նրան դանգի հայր Քանգի, ինչպես խոսքի կարգն էր ասելու, դանգը (դրամը) Աստուծուց ավելի էր մեծարում: Երբ երկրից գնաց հեռացավ, Հայոց աշխարհի վրա գատավորության և հարկապահանջության հրամանատար¹¹² թողեց Ուսագի որդի եգիպտին:

Եգիպտը մեր երկրի վրա իշխան նշանակեց Հայաստանի նախարարներից Բագարատի որդի Իսահակին¹¹³, իշխան Աշոտի նույն տնից, որը նրա հորեղբորորդին էր: Սա գեղեցիկ տղամարդ էր, բարձր հասակով, ազնվական բնությունով և աստվածամախ: Ուր էլ նրան ուղարկում էին, ակամայից էր առաջնորդում իր զորքը մարտի դժվարությունների պատճառով, քանզի այդ ժամանակվանից Հայաստանի զորքը այլևս չէր ստանում արծաթի սակը, որն ամեն տարի գալիս էր արքունիքից: Հեծելազորի հաշիվը [նույնությունով] իշխաններից էին պահանջում, և նրանք հարկադրված էին զուրկան գնդերը իրենց սեփական միջոցներով հանդերձել և պահել բոլոր զրավաստակ աշխատանքների ընթացքում:

Արզւան իր իշխանութեան նորոգ օտարին լրացնելով՝ վախճանվեց, և իշխանութեանն առավ նրա եղբայրը՝ մյուս Արզւան¹¹⁴, քանակելու օտարի:

Գ Լ Ո Ի Խ Ի Ք

Նրա օրերում Հունաց թագավորը բազում և ծանրազնի զորքով շարժվեց՝ կայսերական արքունիքից եկավ հասավ Կարնո քաղաքը¹¹⁵, որ կոչվում է Թեոդուպոլիս: Երբ Լեոնի որդի Կոստանդին արքան [գրավեց], մի ակնթարթում կործանեց ամրոցի պարիսպը և բացելով դանձառունը՝ սակու ու արծաթի շատ կշիռ վերցրեց. գանձի մեջ գտավ նաև տերու-նական խաշի նշանը, որն առնելով իր հետ՝ տարա՛ւ: Նա քաղաքի գործը և այնտեղ բնակված սատակինսուներին իրենց բնասանիքներով տարավ Հունաց աշխարհը: Գավառի բնակիչներից շատերը արքայից խնդրեցին, որ [Թուլլատրի] իրենց վրայից թոթափել Իսմայելի ծառայութեան լուծը և զնալ նրա նուկից:

Նրանից հրաման ստանալով՝ շուտափույթ պատրաստեցին իրենց ունեցվածքը, առաջ խաղացին՝ ապավինելով տն-րունական խաշի զորութեանը և կայսեր փառքին: Թողեցին իրենց ծննդավայրը և բաժանվելով ընկան բարեպաշտ արքայի կողմերը:

Իսկ մյուս ամբում Եզիտը իր ձեռքի տակ եղած զորքը կազմակերպեց գնաց հասավ Կարնո քաղաքը, մարդահարկ¹¹⁶ դրեց երկրի վրա և անթիվ բազմութեան հավաքելով՝ գործավարներ նշանակեց աշխատանքին հսկելու ու փութաջանորեն սկսեց շինել քաղաքի ճեղքվածք ունեցող պարիսպը: Իսմայելի որդիներից բերեց այնտեղ բնակեցրեց իրենց ընտանիքներով՝ քաղաքը պահպանելու և թշնամուն հսկելու համար: Նա կարգադրեց, որ Հայոց աշխարհից նրանց կերակրի պարեն հայթայթվի:

Գ Լ Ո Ի Խ Լ

Այդ ժամանակներում շէր դադարում անօրեն ազգի խառնակիլ ամբոխի խռովարարութեանը մեր աշխարհում, քանզի

Թելիարի¹¹⁷ որդիները ամենուրեք շէին Թողունեմ իրենց հատուկ շարագործութեանը: Երանցից իժարաց ի հայտ եկավ անաստված մեկը, որի տնուն էր Սուլեյմանի և իր հետ ունե-նալով պարսից կողմերից¹¹⁸ եկած հանցագործ մարդկանց, ասպատակեց Վասպուրականը՝ իր շար սերմերի սենդակից-ների նման անարժան արարքներ գործելով:

Նրանց զեմ դուրս եկան Արծրունյաց տան նախարարներ Սահակն ու Համազասպը և սակավ մարդկանցով ընկան թըշ-նամիների մեջ, իրոկ սրանք, մտածելով, որ քիչ են, շրջապատելով ուղեցին սպանել: Սահակն ու Համազասպը տեսնելով, որ գիշատիչ թշնամին շրջապատել է, և քանի որ փախուստի հնար չկար, սուրը գործի դնելով՝ թշնամիների բազմաթիւնը խողխողեցին և իրենք ամբոխից մի կողմ դիմելով՝ ջանում էին ազատում գտնել:

Այստեղ սաստիկ խոցված՝ Համազասպն ընկավ երիվարից, և թշնամին, շրջապատելով նրան, սպանեց: Սահակը երբ տեսավ եզրոր սպանութեանը, նրա նկատմամբ ունեցած մեծ սիրտ պատճառով իր տնը մահվան մատնեց և երիվարից ցած իջնելով նրա շղերը կտրեց¹¹⁹, իսկ ինքը զայրագին մենամարտում էր և շատերին դիտարկելով զցեց, մինչև որ իր եղբոր որդան մրեժը լուծեց: Ապա կո՛վում պարտվելով՝ վախճանվեց: Այսպես իրենց կյանքը սվեցին բնտիր նախարարները, որոնք Վահան Արծրունու որդիներն էին:

Ապա իմաց տրվեց նրանց եղբորը՝ Գագիկին և նրա հետ եղած այլ նախարարների, որոնք վալով ու ճշով ելան մարտի վայրը, սակայն չկարողացան թշնամիներին հասնել և դարձան ողբով ու լացով թաղելու մեռյալներին: Թշնամիները վերադարձան նույն ճանապարհով, սակայն սակավ ժամանակ անց Սուլեյմանն ընկավ Գագիկ Արծրունու ձեռքը և բազում ուրիշների հետ սպանվեց:

Գ Լ Ո Ի Խ Լ Ա

... Կատավարչի իշխանութեանն անմեղած ժամանակ Եզիտը զեռայան հզեց հշուտիս արքային, որին խաղան են կոչում¹²⁰, և խնդրեց խնամութեան հաստատել նրա հետ, արարա՛լի սույզ

միջոցով խաղաղության ուխտ հաստատի իր և խաղաղաց զորքի միջև: Խաղաղաց արքան, հավանելով նրան, կնուծյան տվեց իր ջրոջը, որի անունն էր Խաթուն և նրա հետ առաքեց բազում հաժիշտներ, աղախիններ ու ծառաներ: Սակավ ժամանակ ապրելուց հետո Խաթունը վախճանվեց, և ընդհատվեց նրանց միջև եղած խաղաղության ուխտը, քանզի նրա մահը համարեցին դավի, նենգության արդյունք: Բազում զորք գումարելով՝ (Խաբանը) հանձնեց զորավարներից մեկին, որի անունն էր Ռաժթարխան՝ Խաթիրլիթթեր տոհմից, և առաքեց մեր աշխարհի վրա, որը Եզիտի ձեռքում էր: Ասպատակ սփռելով Կուր կոչված հողը գետի հյուսիսասյին կողմերում, առան բազում գավառներ՝ Հեջար, Քաղա, Ոստան Մարզպանյան, Հաբանդ, Գեղավու, Շաքե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խոզմազ, Այս գավառները Աղվանից աշխարհում են: Վերջրին և Քաղասական ցանկալի գաշտը, որտեղից անթիվ հոտերի բազմություն և կովերի նախիրներ ավարի տարան: Առան և վրաց իշխանության երկրից յոթ գավառ՝ Շուշը, Քուեշկափոր (Քուեշ կափոր), Ձեյթղ (Ձեյթ) Մուքեթ, Վելիսցիխե, Թիանեթ և Երկ(Խերկ): Հավաքելով գերիների բազմությունը և բազում ավար՝ դարձան իրենց բնակավայրերը: Իսկ այն պոռոտախոս հողակապավորը, որն ուներ մեր Հայոց աշխարհի հրամանատարությունը, շկարողացավ գուխ բարձրացնել, այլ միայն իբրև անբան կծկվել-թաքնվել էր, նրան ոչինչ էր թվում երկրի կործանումը:

Ապա սակավ ժամանակ անց նույն վայրագ բռնակալը, որը խավարեցրեց Աղվանից երկիրը, եկավ միաբանեց Իսմայելի իշխանի հետ և իր սրդուն պատանդ ուղարկեց Ասորիք, սակայն շուտով ինքը սրով սպանվեց Աղվանից գուների մերձակայքում:

Գ Լ Ո Ւ Խ Լ Թ

Ասեմ նաև այն Մալեհ¹²¹ կոչված ամբարիշտի՝ մասին, որին Արդյան էր առաքել Հայոց աշխարհը:

* Բնագրում՝ ասպտամբ:

Սա անօրեն էր և արյունարբու, որից շատերը զգուշանալով անձնապահ էին լինում, քանզի շէին կարող այսպիսի նեղության դիմանալ: Հայ նախարարներից ոմանք հրաժարվելով, լքելով իրենց ժառանգությունը, փախան Հունաց աշխարհը, ապավինելով Կոստանդին կայսրին: Իսկ Արծրունյաց տանուտեր Գագիկը, երբ փախուստի տեղ չգտավ, իսկույն տեղափոխվեց նկան կոչված ամրոցը և իր մոտ հավաքելով երկրի նախարարներին՝ իրենց հեծյալներով, ելավ ասպատակ սփռեց Ատրպատականի կողմերը՝ Զարեանդ գավառը, Բուտակ և Զիզոտ, Տասուկ, Գազնակ, Որմի, Մուրենապատ¹²² և այլ մերձակա գավառներ, որտեղ Աստուծո անհաճո գործեր կատարեց, անօրենների նման, որը վայել չէ քրիստոնյաներին: Նաև հարկ էր պահանջում երկրից՝ բազում նեղություններով խոշտանգելով: Հասավ Հեր գավառը, ուր եկավ Իսմայելացից ոմն զորավար Ռուհը և Հայոց զորքից շատերին վիրավոր ցցեց և այլոց փախուստի մատնեց մինչև նկան ամրոցը, իսկ ինքը շրջում էր Վասպուրականի գավառները, որպեսզի կարողանար նրան որսալ իր որոգայթի մեջ: Ապա երբ Արծրունյաց տերը տեսավ իր զորքի խորտակումը, այլևս չկարողացավ անօրեն գործի համար դուրս ելնել, այլ փակվեց ամրոցում և մի քիչ գաղար առավ:

Հետո այլ զորք եկավ նրա դեմ, որի զորագուխն էր Մուսեն, և մի տարի պաշարված պահեց ամրոցը: Երբ ոչինչ չկարողացավ անել գավով, նենգությամբ խաղաղության կոշեց նրան և բռնելով հանձնեց Իսմայելի իշխանի ձեռքը: Սա, կապանքների մեջ դնելով, բանտ նետեց նրան անհանդուրժելի նեղության մեջ և նրանից պահանջում էր այն արծաթը, որ հարկապահանջությամբ հավաքել էր Պարսից երկրում:

Իսկ նա գանձ լինայեց, որչափ որ իր ձեռքում կար, որ թերևս կարողանա իր կյանքը փրկել, բայց ոչինչ չօգնեց և իսկույն վախճանվեց բանտի տառապանքներից, անարգ մարդկանց վիճակում:

Նրա որդիներին՝ Համազասպին ու Սահակին, [խալիֆան] երկար ժամանակ կապանքներում պահելուց հետո, երբ տեսավ որ արհամարհում են շարաշուք դահճի կամքը, զիջեց և հաշտվեց նրանց հետ ու պատվով առաքեց մեր Հայոց երկիրը:

Այս ժամանակներում Եզրիտի¹²³ կառավարչության և մյուս Աբղլայի իշխանության օրերում հույժ ծանրացավ հարկապահանջության լուծը¹²⁴ մեր Հայոց աշխարհի վրա, քանզի դաժան թշնամու դժոխսաձև ագահությունը չգոհացավ Քրիստոսի հոտի ընտրյալների մարմինն ուտելով և, անարգանքով քմպելով արյունը իբրև ջուր, Հայոց համայն երկիրը դրեց անհանդուրժելի թշվառության մեջ: Երկրում վերջացավ արծաթի հանումը, և ամեն ոք, տալով ունեցած ամբողջ ինչքը, իր անձի փրկության գինը չէր գտնում, և շարաշար կոտանքով չեկարաններով ու կախաղաններով ու դառն տանջանքով մարդկանց կեղծքում էին: Սրանից փախչելով՝ շտտերը երկրի քարայրներում ու փայտարներում փակվելով՝ թաքնվում էին: Ոմանք ձյունահեղձ և գետավեժ էին լինում անտանելի ազեաների պատճառով, քանզի չէին գտնում այն, որ պահանջվում էր: Պահանջում էին հարկը վճարել արծաթով, այն էլ ըստ ամեն մի գլխի, որի հետևանքով զրկվում էին ամենայն ունեցվածքից: Հայոց երկիրը տնանկության կապանքներով էին կապում, և բոլոր նախարարներն ու մեծամեծերը [հավասարապես] ճաշակում էին աղքատության հեոցից:

Թեպետև բազում անգամ բողոքել էին Սահակ իշխանը և հայրապետ տեր Տրդատը¹²⁵, որը Վանանդ գավառի նախարարական տնից էր, սակայն Եզրիտը, որը մեր աշխարհի հարկի վերակացուն¹²⁶ էր, լլսեց նրանց աղաղակը: Տրտունջի բողոք բարձրանալով՝ հասավ Աբղլային, և սա խորոխտալով իր մտտ կանչեց Եզրիտին ու նրա փոխարեն առաքեց Մսլիմի որդի Թագարին: Ոչ շատ ժամանակ հետո, դեռ Թագարի մեկ տարին էլ չլրացած, [Աբղլան] նրան իր մտտ կանչեց առանց որևէ պատճառի և առաքեց Հասանին¹²⁷, քանզի նենդամիտ խորամանկությունը նրան զրգում էր Հայոց երկիրը շարաշարանքի վայրի վերածելու: Մանավանդ ոչ թե նրա, այլ իշխանների Ուղղիլ [Մատուծո] կամքն էր կատարվում, որի վկայությունն էր ի վերուստ եկած բարկությունը՝ մարախների բազմությունը, կարկուտներն ու անձրևների (պակասից առաջացած) երաշտը, Սրանք բարկության նշաններն էին մեր վրա:

Եկավ հասավ Հասանը՝ Կահաթբայի որդին, որպես կառավարիչ մեր Հայոց երկրի վրա, և նրա հետ բազում գնդեր հորասան աշխարհից, որոնք առավել դառնությունք հաճախ զազրագործություն էին կատարում և բազմացնում մեր երկրի աղետներն ու հեծությունը, քանզի, ինչպես նախապես պատմեցինք, տերը կարծացրել էր նրանց սրտերը՝ մեր շար գործերից վրեժխնդիր լինելու համար, և արդարև սով, սուր և խռովություններ եղան նրա աղապատության ժամանակ: Այս բոլորից բացի նրանք ավելացրին հայրապետներին արհամարհելը, հպիսկոպոսներին այպանելը, քահանաներին գանահարելն ու խոշտանգելը, իշխաններին ու նախարարներին շարաշարելն ու քայքայելը, որոնց շարաղանալով հանդուրժել, մեր աշխարհի զորագլուխները հեծում էին և հառաչում անհանդուրժելի տազնապից: Նրանք ուսմիկների բազմությունը խոշտանգում էին տեսակ-տեսակ շարքներով, ոմանց փոկահարությունք տանջում էին դառն հարկապահանջության պատճառով, ոմանց գելարաններով ու կախաղաններով, իսկ ոմանց էլ դառնաշունչ ձմեռվա օրերին զգեստներից մերկացնելով՝ նետում էին լճերի մեջ ու պահապաններ կարգում, որպեսզի շարաշարն նրանց և այնպես շարալուկ՝ կոտանքներով էին կեղծքում, որ պատմել չեմ կարող այդ աղետների պատմությունը:

Գ Լ ՈՒ Խ Լ Գ

Այստեղ կպատմեմ Իսմայելի վայրենամիտ ազգի կատարած խստասիրտ շարագործության մասին:

Քանզի, երբ Հայաստանի նախարարները տեսան իրենց վրա կախված սարսափելի վտանգը, մահը հանձն առան և ձեռնամուխ եղան մի բանի, որը չէին կարող իրագործել, վասնզի փոքրաթիվ էին: Սակայն լավ համարելով քաջությամբ մեռնել, քան աղետալի կյանք վարել, ձեռնամուխ եղան ապստամբության և մերժեցին Իսմայելին հնազանդվել:

Սույն դեպքերի սկիզբը կատարվեց Արտավազգի ձեռքով, որ Մամիկոնյան տնից էր: Փնալով Գլխի մայրաքաղաքը, մեծ չափով կազմակերպեց իր զորքը, առաջով զենք ու

պատերազմի գործիքներ, զինվեց զրահով ու սաղավարտով, ամենայն սպառազինութեամբ և իրեն մտերիմ ձևացրեց Իս-
մայելի գործերին իբր թե կամենում էր մարտնչել նրանց
թշնամիներին դեմ:)

[Բաժանվելով նրանց շրջանակից՝ նա հասավ Շիրակ գա-
վառի Կոմայրի գյուղը և սպանեց գլխավոր հարկահանին* ու
նրա մոտ եղած ամեն ինչը վերցնելով՝ ամբողջ տնով գնաց
Վրաց աշխարհի կողմերը՝ իր հետ տանելով մեր հրկրի բազ-
մաթիվ** նախարարներին:)

Ըստ հասավ Գվին քաղաք, թե Հմայելի որդիները այդ-
պիսի դառն ոճիւր էին գործել: Մահմետը շուտափույթ բազում
զորք հավաքեց, [վերցնելով] նաև Աշոտի որդուն՝ Սմբատին,
հայոց սպարապետին և այլ նախարարներին ու նրանց հե-
տապնդելով հասավ Վրաց աշխարհի այն գավառը, որ կոչ-
վում էր Սամցխե¹²⁸: Գրավելով կիրճերը՝ նա ավարի մի մա-
սը խլեց և նրանց հալածելով փախցրեց Հայոց աշխարհից:
Իսկ նրանք գնացին ու պատասպարվեցին Եգերաց¹²⁹ աշխար-
հում, և նա [Արտավազը] ստանձնեց Եգերաց իշխանու-
թյունը, ինչպես նաև Վեոհայի, այսինքն Վիրքի:

[Այս դեպքերի հետևանքով առավել զայրացավ կառա-
վարիչ (հրամանատար) Հասանը և շուտափույթ մարդ ուղար-
կեց իր իշխանութեան բոլոր կողմերը՝ հրամայելով հարկը
մեծ բռնութեամբ հավաքել: Ընդ սաստկացավ մեր աշխար-
հի հեծեծանքը հարկապահանջների ձեռքից: Քանզի արծաթի
հանրամը Հայոց աշխարհում բոլորովին նվազել էր:

Այստեղ արգեն նախարարներից մեկի սիրտը ցասումով
լցվեց: Սա Մամիկոնյան տնից Հրահատ կոմսի որդին էր,
որի անունն էր Մուշեղ: Իր կողմը գրավելով Հայաստանի
նախարարներից ոմանց, նա Իսմայելի հնազանդութունից
դուրս եկավ և իր գավառում ու իր տանը Իսմայելի սուր-
ներից մի քանիսին գանելով, որոնք եկել էին իրենց տոհմից
մի քանի սպանվածների արյան զինը պահանջելու, խողխո-
ղեց նրանց ու սրի քաշեց, իսկ ինքը իր տնով տեղափոխվեց
Արտազերս ամրոցը:)

* Բնագրում՝ հրամանատար հարկին:

** Բնագրում՝ ամենուր:

Այդ ժամանակ նա 260 հոգու հետ զնաց Բագրևանդ գա-
վառը և, բռնելով հարկահաններին, Ապու Մճուր կոչված
[գլխավորին] և ուրբեր նրա հետ էին՝ սպանեց սրի քաշելով:
Այսպիսով միառժամանակ զաղարկեց հարկի պահանջումը
մեր հրկրից: Երբ [գործն]՝ այսպիսի ընթացք ունեցավ, նրա
մոտ հավաքվեցին բոլոր վշտացյալները ու հոգով տառա-
պածները: Իրանից հետո նրա դեմ կանգնեցին թշնամիներն
ամեն կողմից: Նախքան այդ Իսմայելի որդիներին մոտավո-
րապես երկու հարյուր մարդ կարճ քաղաքից կուտ սպառա-
զինութեամբ վրա հասան: Նրանց դեմ նա դիշերանց սակա-
վաթիվ մարդկանցով զնաց Խարս գյուղը, որտեղ այդպեսու-
ների մեջ էին բանակ դրել, և շրջապատելով նրանց, փլեցրին
այգեստանների թույլ պատերը, որոնք առանց հուշի բարեկով
էին շարված: Ուժեղ դրդումով զլորվող քարերի հարվածի
տակ ընկած երիվարները [մարդկանցից] շատերին ոտքի տակ
առնելով սատակեցրին: Իսկ [Մուշեղը] ընկածների գեներ ու
կողոպուտը, ինչպես նաև երիվարները և զինքի ամբողջ սար-
քը առնելով, տվեց իր զորքին, և ինքը շարժվեց զնաց իր
ամրոցի կողմը:

Երբ այս ազետի լուրը Գվին քաղաքը հասավ՝ Իսմայելի
զորավար Մահմետին, ամեն կողմից տագնապալի [բողոք-
ներ] ստացավ նա և Գվին քաղաքի գորքը հավաքելով՝
տվեց մի զորագլխի ձեռքը, որի անունն էր Ապունճիպ, սպան-
վածների արյան վրեժը լուծելու: Զորավարը վերցրեց մո-
տավորապես 4000 ընտիր հեծյալներ, ուշադիր անցավ ար-
քունի պողոտայով և հասավ Բագրևանդ գավառի Բագավան
գյուղը: Այստեղ նրանց վրա հասավ Մուշեղը ու նրա հետ
շուքը 200 մարդ: Մարտնչեցին իրար դեմ, Տիրոջից արագ
օգնություն հասավ Մուշեղի գնդին, և բազում հարվածներ
հասցնելով՝ սատակեցրին Իսմայելի զորքերին: Մնացյալնե-
րին փախուստի մատնելով՝ հետապնդեցին մինչև Արուճ
ալվանը, իսկ շատերին բռնելով, նույնիսկ հենց իրեն՝ զորա-
գլխին, հարվածների տակ սատակեցրին: Մեծ հաղթութեամբ
վերադառնալով նրանց մոտից՝ թշնամու ավարով մեծապես
լիացան:

Շատերից միայն քչերը որպես փախուստական հասան Գվին
քաղաքը: Ապա նրանց ընդատալ էլան համազգի տղամարդիկ

ու կանայք վայրով ու ճշոցով, հողը գլխներին թափելով՝ իբնեջ ճակատին էին խփում, օձիբը պատառոտում, և նրանց ողբն ու կոծը լցրել էին լայնանիստ քաղաքի ամեն փողոցները: Մեծ աճ ընկավ սառակիներուների գնդի վրա, և համարձակություն չունեին քաղաքից դուրս գալու, այլ ապավինել էին քաղաքի ամրությունը:

Երբ Հայաստանի նախարարները այս գործի հաջող ընթացքը տեսան, ամենքը վստահ հետևեցին անմիա խորհրդին, բանդի կարծում էին, թե Իսմայելի իշխանությունն ժամանակը լրացել էլ Մանավանդ ազնվի շատ խարժած էին մի միայնակյացի*¹³⁰ կարծիքով, որը, մոլորության ռզով տարված, մարգարեանում էր սնտոի և ունայն խոսքերով: «Ահա մոտեցել է ձեր փրկության ժամանակը, բանդի այժմ շուտով թաղավորության գավազանը կրկին կվերադարձվի Քորգոմի տանը՝ ձեր միջոցով վրեժ լուծելու Իսմայելի ազգից: Իսկ դուք մի վախեցեք նրանցից փոքրաթիվ լինելու պատճառով, բանդի ձեզանից մեկ մարդը հազարների կհաղթի և երկուսը՝ բյուրավորների, բանի որ ձեր պատերազմը Տերն է մղելու, զորացնք և մի վախեցեք»: Այսպես օրրօտօրն սուտ և սրտի բաղձալի տեսիլք էր պատմում, և նրանք բոլորը, հավատարմով նրան տեսանող (մարգարե) էին կոչում: Այս խոսքերից բոլորը խարժելով՝ գրգռեցին մեծ սպարապետ Սմբատին՝ Աշոտի որդուն, այս խորհրդին հավանություն տալու: Իսկ նա ակամայից դավաճանեց իր հաստատուն և անընկճելի պաշտպաններին ու գնաց այդ խաբեբա և մոլեկան մարդու ետևից:

Իսկ Հայաստանի ամենայն նախարարները ի մի վայր հավաքելով՝ իրար երգում սովին և ուխտի դաշինք դրին՝ միասին ապրելու և մեռնելու: Այսպես բոլորը միախուռն հավաքված՝ 5000 մարդ դարձան, բանդի ռամիկ ժողովրդից շատերը եկան խառնվեցին նրանց գնդին: Ապա այդ կողմերից ելան գնացին պաշարելու Քեղզուպոլիս քաղաքը, որը Կարնո քաղաքն է, և այն պաշարեցին խրամատներով** և ամբողջ

ձմեռային ժամանակը մատուցելով կավում էին նրանց դեմ, աշտարակներ* կանգնեցրին և անցքեր բացեցին բաղաբնարտաքին պարսպի կողմից: Սակայն ոչինչ չկարողացան անել, բացի նրանից, որ մեքենաների քտրերով քաղաքի որոշ մարդկանց սպանեցին:

Իսկ Աշոտը, Բաղրատունյաց տնից, Սահակ իշխանի որդին, որ խոհական հանձարով այր էր, շմիբառանց վնասուկար աղետալի գործին, այլ նրանց ևս խրախուսում էր հրաժարվել մոլեկան միայնակյացի վնասակար խրատներից և գգույշ լինել իրենց անձի և ընտանիքի համար: Բանդի, ասում էր, «երեսուսարդներ եք և տարիքով կրտսերագույն, գիտե՛մ, որ չեք կարող դիմագրել բազմազուխ վիշապի զորությունը, բանի որ հզոր է նրա ուժը և [գործի] անթիվ բազմություն կա նրա ձեռքի տակ ու դեմքերի՝ անշափ պաշար՝ նրա պահեստներում: Բուրթ թագավորությունները, որոնք հակառակ կեցան նրա իշխանությանը, փշրվեցին բրուտի անթիլ նման, քանդի հոռոմայնոց թագավորությունն էլ չկարողացավ ձեռք բարձրացնել, այլ սարսուռով դողաց նրա առջև և չհանդգնեց դեմ գնալ տերունական կամքին: Դուք ևս անտեղյակ չեք Հունաց արքայի ամբողջ զորության, անձնական բազմության և զորքի բազմության ու պատրաստության մասին, սակայն ամենևին մտքից անգամ չանցկացրեց Հայոց աշխարհը նրա ձեռքից առնել: Ահա կեսնի որդի Կոստանդինը, որը մի որ մենամարտելով ահավոր գազանների հետ, առյուծին սպանել էր ուղի նման: Այդ, նա, որ այս զորությունն ուներ, այնպես է ընկճված երկիրն ապակառուց շարաթույն գազանի ահից: Իսկ դուք ո՞ւմ եք ապավինել և կամ ինչպիսի՞ զորություններ և ուժով կարող եք նրանց անհաղթահարելի իշխանության դեմ կանգնել: Արդ, եթե հաճելի թվա ձեզ, ընդունեցեք իմ խրատը, բանդի նրա մեջ ես տեսնում եմ ձեր օգուտն ու շահը և մեր երկրի անդորրությունը: Քանզի այս գործը [երկու] ելք ունի. կամ պետք է ետ դառնաք ու հնազանդվեք նրանց և հանդարտ ու խաղաղ ապրեք ձեր երկրում և կամ փախուստով հեռանաք ձեր երկրից ամբողջ ընտանիքով, լքեք ու թողնեք ձեր հայրերի ժառանգությունը, ձեր

* Թագրում՝ մոնոլոն:
** Թագրում՝ պատեհիչոր:

* Թագրում՝ մահարձան:

բնակավայրերը, անասունները, անդաստաններն ու ձեր հայրերի գերեզմանները և ձրթաք որպես պանդուխտ բնակիչք Հունաց արքայի մոտ: Կամ եթե նույնիսկ անմիջապես լքենկներ ձեզ նեղողներին ձեռքը և դաժան մահովամբ ձեր կյանքը շտաք, ապա ևս գիտեմ Իսմայելի իշխանի անասոված բարքերը, քանզի նա չի դադարի, մինչև իր վրժը չլուծիք:

Իսկ նրանք լքնդունեցին նրանից լսած խրատական օգտակար խոսքերը, այլ քմծիծաղ ավին, նենգ խորհուրդ համարելով, քանզի հույժ հավատացած էին այն մոլորչալ ստապատում մարդուն, որն օրրստօրե հորդորում էր նրանց՝ պինդ կառչել առաջադրված գործին և երկմտությամբ իրենց շկորցնել: Իսկ անմիտ խորհրդի նկատմամբ նրա անուղղելի կամակորուժյան սնանկությունը շուտով երեսց, քանզի, անմիաբան դառնալով, իրարից հեռացան: Արծրունյաց տան նախարարները՝ Համազասպն ու իր եղբայրները, և նրա զորքը մնացին Վասպուրահանում, իսկ Վասակը՝ Աշոտի որդին, ինչպես նաև Ամատունչաց և Տրունչաց առճմի անդամները, նույնպես այնտեղ մնացին, ոմանք Գարյունք (Գարինք) գյուղի ամբոց-բերդում ու Մակվի ձորում և ոմանք էլ Արագեղտի ձորում ամրացած՝ շրջում էին շրջակա գավառները, կերակրի պետքը հոգալու և ապա դառնում էին իրենց ամբողջունները:

Իսկ տաճկաց զորքերը, որոնք Դվին քաղաքում էին, գուշա գալով՝ ասպատակում էին շրջակա գավառները, ավարի էին տալիս և արշուն թափում Պտղունք, Թալին, Կոզբ գյուղերում և այլ բազում տեղերում սուրբ զործի զնկելով շատերին դիաթավալ էին թողնում:

Երբ գարունը եկավ, Իսմայելի իշխանը գունդ կազմեց Հայոց երկիրը ուղարկելու համար: Նա Խորասանի գնդերից 30000 ընտիր հեծյալներ հավաքեց ընտիր երկվարներով ու կուռ սպառազինությամբ և տալով մի զորավարի ձեռքը, որի անունն էր Ամր, ճանապարհ գրեց նրան այն լայնանիստ ու հուշակավոր քաղաքից, որը շինել էր հենց ինքը՝ Արգլան, ապահովության համար ամրացնելով հզոր ու անառիկ պարսպով և որի անունն էր Բաղդազ:

Տեղից շարժվելով՝ զորավարը Ասորիքի կողմերով եկավ հասավ Հայոց աշխարհը, Խլաթ քաղաքը մեծ զգուշությամբ

և զենքերի լավ պատրաստությամբ: Երբ քաղաք մտավ, ախտեղի քաղաքացիներին տեղեկացավ հայոց զորքի որպիսությունը, թե քանի՞ հողի են, որո՞նք են զորագլուխները, երար հետ սիրով միաբա՞ն են, թե՞ տարակարծիք, քաջահա՞ղթ են, թե՞ անարի և կամ զենքերի պատրաստություն ունե՞ն, թե՞ ու: Այս ամենը տեղեկանալով՝ ըստ այնմ պատրաստեց իր զորքի զորագլուխներին:

Իսկ Աշոտը՝ Սահակի որդին, որն այդ քաղաքում էր, թըշնամիների գալստյան մասին զնկուցեց Հայաստանի նախարարներին, որպեսզի որտեղ էլ լինեն՝ ի մի-վայր հավաքվեն, միասին ապրելու և միասին մեռնելու համար: Իսկ նրանց անհավատալի թվացին նրա նամակի տեղեկությունները, կարծելով, որ դավուղ խորամանկությամբ կամենում է փրկել [Կարեն] քաղաքը պաշարումից, որպեսզի իրեն իսմայելացոց մտերիմ ցույց տա: Այսպիսի բաներ մտածելով, նրա խոսքերը լքնդունեցին, այլ տակավին մտածում էին իրենց նախկին ձեռնարկն իրագործել: Սրանից հետո Արծրունյաց առճմի նախարարները՝ Համազասպն ու եղբայրները, հավաքեցին Վասպուրական աշխարհի զորքը, նույն ձևով նաև Ամատունչաց առճմի նախարարները և իրենց զորքը: Օգուսթյան կանչեցին Աշոտի որդի Վասակին, Մմբատ սպարապետի եղբորը՝ Բագրատունյաց առճմից ու նրա զորքը և առաջ խաղացին Արճեշ ավանի վրա, այն հիմնահատակ քանդելու և նրա զորքը սրի քաշելու համար:

Երբ հասան Առքերանի գավառի Թերկրի գյուղը, մնացին, որ բոլորը հավաքվեն: Թամիկներից (շինականներից) շատերին հրապուրելով՝ իրենց ետևից հետխան տարան պատերազմի: Մինչդեռ այս ծրագիրն ուզում էին իրագործել, շուտափույթ լուր հասավ Իսմայելի զորքի մասին, քանզի մեկը եկավ ու պատմեց նրանց, թե Իսմայելի որդիների բազմամարդ զորքը հասել և սպասում է ձեզ: Նրան լսեց Արծրունյաց տեր Համազասպը, այլ հարվածներով տանչեց նրան իբրև սուտ լուր տարածողի, իսկ ինքը խրոխտացած՝ իր զորքով գնաց Արճեշ ավանի դեմ: Երբ գյուղաքաղաքի մոտ հասան, բնակիչները Խլաթ քաղաքում հարսնեցին Ամրին հայոց նախարարների գալուստը: Նա իր զորքերի բազմություն հետ առաջ խաղաց և, գալով, դարանամուտ կղավ Ար-

ճեշ գյուղի մոտ: Մինչդեռ հայոց գունդը մարտնչում էր ամրոցի դեմ, զարանամուտ եղածները անմիջապես հլան թաքստոցից, թափվեցին հայոց զորքի վրա և, փախուստի մատնելով, կոտորեցին հետևակ զորքի մեծ մասը, որ ամիկ* (շինական) մարդկանցից էր բաղկացած, որոնք մնրկ էին, առանց գեների և պատերազմի մեջ՝ անհմուտ: Սրանք անմիջապես այդ օրվա գառն լույսին հանգիպելով՝ անողորմ սրով կոտորվեցին, իսկ ոմանք, վախենալով անորոշ ճակատագրից, գետավեժ և ծովահեղձ եղան: Նախարարական տոհմերից վախճանվեցին 4 հոգի, որոնցից երեքը Տրունյաց տոհմից էին և մեկը՝ Ուրծա գյուղից, իսկ ռամիկ ժողովրդից վախճանվեց 1500 մարդ: Ուրիշները, փախուստի դիմելով, հազիվ կարողացան իրենց անձերը փրկել: Այս զծոխային լար աղետը տեղի ունեցավ հրոտից ամսի չորսին, շաբաթ օրը: Քշնամիները հետամուտ լինելով՝ հալածեցին հայոց զորքը մինչև այն տեղը, որ կոչվում է Տայ գյուղ և ապա դադարեցին նրանց հետապնդելուց և մեծ ուրախություն եղավ նրանց բանակատեղիում:

Այն ժամանակ մեր Հայոց աշխարհը մեծ տառապանքի մեջ էր, իսկ անհավատ թշնամիները ցնծություն և հրճվանք էին ապրում: Նրանք շունչ քաշելուց հետո գարձալ հարձակվեցին, Ապահունիքի միջով ուղղվեցին՝ դեպի արքունի պողոտան: Հասան Քաղաքանդ գավառի Արձնի գյուղը և այնտեղ բանակ դրեցին գետի եզերքում, որը նրա միջով է անցնում: Նրանց հետ կային զինագործներ՝ ամեն տեսակ զենքերի արհեստավորներ, որոնք պատրաստում էին պատերազմի զենքեր ու սարքեր (անոթներ):

Իսկ այն զորքը, որ Կարնո քաղաքն էր պաշարել, [քնակիշներին] հուսահատության էր հասցրել, քանզի սաստկացել էր քաղաքի սովը, և նրանք ստիպված պատրաստվում էին քաղաքը հանձնել: Սակայն երբ [հայկական] զնդի պարտության լուրը հասավ Կարնո քաղաք, այն ժամանակ հայոց պատերազմող զորքերը հուսալքվեցին և քաղաքի պաշարումը վերացրին: Նրանք թեպետև կարող էին հունաց կողմէնը մեկնել և իրենց անձերը փրկել կեղեքիշների շարասեր ապի-

րատությունից, սակայն լավ համարեցին իրենց անձերի լահը, քան մեր երկրի կորուստը և Քրիստոսի եկեղեցիների անպատվությունը տեսնել: Այսպես մտածելով, թեկուզև սակավաթիվ էին, քան թշնամիները, ինքնակամ հոժարությամբ դեպի տառապանք դիմեցին և, հավաքելով իրենց զնդերը, որոնք 5000 հոգուց էին բաղկացած, հեռացան Կարնո քաղաքից, անցան Բասենի սահմանը դեպի Բագրևանդ գավառը: Հենց որ անցան Արածանի գետը, սրտի արիությունը թշնամու վրա հարձակվեցին, [նախապես] իրենց աղխը (ունեցվածքը) և երիվարները երկու ասպարեզ հետո թողնելով և իրենք հետոտն, գայրագին պատրաստվեցին թըշնամու հետ պատերազմի: Քշնամիների զնդերը նույնպես ելան նրանց դեմ բազում պատրաստությամբ:

Արեգակը ծագելուն պես պատերազմն սկսվեց: Երբ իրար բախվեցին, նախ հայոց գունդը ուժգին բազում հարվածներ տվեց և, թշնամիներին փախուստի մատնելով, շատերին սատակեցրեց: [Սակայն] կրկին ուժ անելով՝ նրանք փախուստից ետ դարձան և գայրագին ցասմամբ դիմադրելով՝ արհավիրքով լցրին ռամիկ ժողովրդի բազմությունը, փախուստի մատնեցին նախարարներից ու հեծյալներից ոմանց և նրանց հետ եղած ռամիկներին, քանզի նրանցից շատերին սպանելով՝ դաշտերի վրա փռեցին:

Իսկ քաջահաղթ նահատակները, թեպետև սակավաթիվ էին շարաշուք որսողների մեջ, սակայն դառնաշունչ օրհասական ընդհանրապես հասնելով, այլ բոլորը միահամուտ հավաքվելով՝ իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով՝ «քաջություն մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար և թող մեր աչքերը շտեմենք մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրբ թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի, ապա թող անեն, ինչ կկամենան: Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք»:

Այսպես իրար քաջալերելով իրենց աչքերն ի բարձունս կարկառեցին, բարձրալից օգնություն էին հայցում, ասելով՝ «Աստված, զո հայացը մեզ ուղղիր և փութա մեզ օգնու-

* Բնագրում՝ աշխարհարենակի

Քյանը Քո՛ղ մեծապես ամաչեն նրանք, որ մեր անձերն են ուզում [զոհել], իսկ մենք, Տեր, քո անունն ենք արտասանում մեր նեղութեան մօջ և քո անունն ենք փառավորում մեզ պաշարող անձկութեան մեջ, քանզի ահա մեզ շրջապատված են պահում շարերը, որոնց թիվ չկա, և մահվան երկունքն է մտանում մեզ»:

Այս և դեռ ավելի աղերսական խնդրանքներ ու փոփոզելի մաղթանքներ էին մատուցում Քարձրյալին: Մրանից հետո դարձյալ զորանալով Վերնայինի օգնականութեամբ, ետ չկանգնեցին նախապես ընդունված որոշումից, թեև հազար հոգուց ավելի չէին երեսուն հազարի դիմաց, Եվ ինչպես հենց թշնամուց իմացանք, նրանք (հայերը) ասում են իրենց հետ մարտակից ունեին հրեշտակների բազմությունը, որոնք մարդկային կերպարանքով երևացել էին թշնամիներին: Նրանք հավաստում էին նաև, որ տեսնում էին երեցների ու քահանաների*, որոնք ավետարաններով, մոմերով ու խնկով առջևից երթալով՝ քաջալերում էին նրանց:

([Հայերը], անխնա կոտորելով, վրեժխնդիր էին լինում թշնամուց, մինչև որ նրանց ձեռքերը միանգամայն հոգնեցին զենքերի ծանրությունից: Ոմանք առանց զենքի մնալով՝ ընկան նրանց ձեռքը և իսկույն հրաժեշտ տալով մեզանչական կյանքին՝ դիմեցին հանդերձյալ հույսի ակնկալությանը: Այդ նրանելի և քաջ նահատակները հետևյալ զորագլուխներն էին՝ Քաղարատունյաց տնից Սմբատ սպարապետը և նրա բարձակից ու նիզակակից Սահակը: Մամիկոնյան տնից Մուշեղ զորավարը և Մամիկոնից տեր Մամուելը, մատաղահասակ և զեզեցկություն մտույզ, որը մեծ սպարապետի աներձագն** էր, Գնունյաց տնից Գաշույն վահանը և բազում նախարարներ և ռամիկներ, որոնց մեկ առ մեկ անունով հիշել չեմ կարող: Մոտ 3000 հոգի ընկան, որոնց մահը սրաճամիկ էր ու վախճանը՝ անագորույն, և հողը նույնիսկ բավական չէր պատերազմի թշվառ զոհերի դիակները թաղելու, այլ ընկած էին քացօթյա վայրում արևի ու փոշու, անձրևի և հողմերի մրրիկի դիմաց:

* Բնագրում՝ պապասու
** Բնագրում՝ աներ:

Այն ժամանակ սաստկացավ հաճախակի՝ ողբն ու կոծը Հայոց աշխարհում, քանզի մեծ առաջնորդները և պատվական զորագլուխները մի վայրկյանում վերացան, և սմբողջ երկիրը... խոր տխրություն մարակված, մեծապես կոշում էր և ողբում հզոր և քաջ նախամարտիկների վախճանը. որոնք օգնականությունից զուրկ մնալով՝ մատնվեցին դազանարար և անողորմ թշնամու ձեռքը: [Մարդիկ] իրենց նեղության մեջ հիշում էին նաև պաշտպան Աստուծուն, որի ողորմությունը սկզբից էլ պահել է մարդկային ազգը և մանավանդ իր անուներ փառաբանողներին: Հայցում էին նրա հոգաւոր ներողամտությունը, որպեսզի այս աշխարհի կյանքում տարակուսյալներին և հուսահատուր եղածներին զորավիգ լինի, քանզի Արճեշ ավանում պատահած աղետից հետո ահա վրա հասավ այս շարիքը նույն Հրոտից ամսի 14-ին¹³¹, երկուշաբթի օրը: Առավել ևս զմոզակ էր նեղությունը նաև այն պատճառով, որ նեղեցյալներին նույնիսկ համարձակորեն լալու և ողբալու հնարավորություն չկար, ոչ էլ իրավունք՝ իրենց տներում սգո հաց կտրելու կամ վախճանյալներին գերեզման դնելու:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ե

(Իսկ թշնամիները, ասպատակ սփռելով Քաղրանդում և նրան սահմանակից գավառներում, մեծ տազնապ պատճանեցին երկրի բնակիչներին) Համառորեն մտածում էին աղոթքի տաճարները՝ կործանել և ապականել Քրիստոսի եկեղեցիների սրբությունը (տորակում էին Քրիստոսի պայծառացյալ խաչի նշանը), որն իբրև ապավեն ու հովանի կանգնեցրած էր [եկեղեցիների] ելքի ու մուտքի առջև¹³² համագո երրորդությունը երկրպագելու համար և դրանք հրկիզելով՝ մեջտեղից վերացնում էին: (Կատաղի դաժանություններ էին վարվում քահանաների ու մոնոզոնների (միայնակացիների) և նրանց պաշտոնակիցների հետ, նրանց համարելով պատերազմում զոհված [ապստամբների] առաջնորդներ): Զանա-

* Բնագրում՝ քաղարատ:

զան տեղերում հափշտակում էին եկեղեցու սուրբը և Աստուծո սրբերի նշխարները վերցնելով՝ ավարի էին տալիս: Երբ անօրին զորքերը ուռճացան Հայոց աշխարհի ավարից, ելան ամրոցների դեմ և նվաճում էին ամրություններում ապաստանածներին, կոչ էին անում խաղաղության և երզման գիր տալով, իջեցնում էին ամրոցներից:

Ինքը [Ամր զորավարը] կարծես պանծալի և քաջ հաղթություն տարած լիներ, թողեց գնաց Հայոց աշխարհից, անցավ Պարսից աշխարհը, կամենալով հանդիպել Իսմայելի իշխանին, որպեսզի իր հավատարիմ ծառայության փոխարեն [վարձատրություն] ստանա: Սակայն նույն ժամանակ նրա վրա իջավ իրավագատ Աստուծո դատաստանը և սատակեց Պարսից երկրում: Նա շարաշար ցավերով տանջվելով սատակեց և ըստ արժանավույն ստացավ վրեժխնդրության հատուցումը, քանզի նրա ձեռքով թափված անմեղ արյան փոխարեն իրավացիորեն [մեղավոր] արյուն թափվեց, թեպետ և ոչ մարդկային սրով, այլ Բարձրալի հրամանով, աներևույթ սրով, որն ամեն սրից հատու է, ազդու թափանցող զորությունը և ծակում է հոգին, շունչը, հոգերն ու ուղեղները: Այդ սրով [Տերը] իր որդիների արյան վրեժը լուծեց և իր ատելիների հատուցումը տվեց, սրբեց իր ժողովրդի երկիրը, խնայեց իր ժողովրդին և նրանից հեռացրեց ժողովրդի [խրատի] զավազանը, և [մարդիկ] նորից ապահով եղան իրենց բնակավայրերում:

Գ Լ Ո Ւ Խ Լ Զ

{ Այդ ժամանակ Իսմայելի իշխանը Հայոց աշխարհի վրա Հասանի փոխարեն նոր հրամանատար (կառավարիչ) ուղարկեց Եգիպտին: Իսկ ինքը՝ Աբդուլան, իր շարասեր կամքի ամենայն ցանկությունները կատարելով և իր հոգին ճնշված արծաթափրուսիան բաղձանքի ախտով իր ցեղին հատուկ շարազանությամբ՝ ենթարկվեց մարգարեի նզովքին և իսկույն հուսակորույս սատակեց նույն տարում:

Նրա վրա գալիք հանդերձյալ դատաստանի մասին բոլորին հատուցողը հայտնել էր իր արժանավոր ծառաններից մե-

կին՝ մի քահանայի: Նրա կյանքի վախճանից սակավ օրեր առաջ սրան տեսիլքի մեջ երևաց խոշտանգումների տեղը, ուր կար մի գուրի վիհ՝ անբավ խորությունով, իսկ վիհի բերանին գրված էր երկաթե դուռ: Երկու զինվոր նրան բերելով կանգնեցրին գուրի բերանի մոտ և, բաց անելով վիհի կափարիչը [նա] տեսավ, որ վիհից բոցը ելնում էր վեր, մինչև երկինք: Այնտեղ նետեցին շարի կամակատարին և դարձյալ նրա վրա փակելով նույն դուռը՝ թողեցին անտանելի կապանքների մեջ՝ ընդունելու արժանի հատուցումը: Տեսիլքի այսպիսի հայտնությունը գուշակեց նրա մասին, որն արդարև արժանի էր իր շար ընթացքի համար այսպիսի հատուցում ընդունել արդար դատողից:

Գ Լ Ո Ւ Խ Լ Է

(Նրանից հետո իշխանությունը ժառանգեց նրա որդին՝ Մահմետ Մահադին:

Սա իր հոր համեմատությամբ ազնիվ էր և ավելի լավ բարբով¹³⁵: Բացեց բոլոր գանձատները, որոնք կողպված էր պահում ամբարիշտ Աբդուլան, և պարզեցրեց բաշխեց իր զորքին: Արձակեց և մարզերի փակ զոները, որպեսզի վաճառականները կարողանան վաճառքի հանել իրենց ապրանքները և կարոտայինների պետքերը դոհացնեն: Երկրում առատություն եղավ, արծաթ գտնելը հեշտացավ, և երկրի բնակիչները բռնի հարկապահանջությունից թեթևացան: Թեպետ և նա հարկային լուծը ժանրացրեց, սակայն քանի որ արծաթը ճարվում էր, երկիրը փոքր-ինչ հանգստացավ շարաշար սառապանքներից: Նրա իշխանության օրոք Հայոց աշխարհում արծաթի լեռներ (հանքեր) հայտնվեցին, փողերանոցներում՝ սկսեցին դուռ արծաթ դրամներ¹³⁶ հատանել մարդկանց պետքերի համար:

Իսկ ինքը՝ Մահմետը, սկսեց սպառնալ հուռաց իշխանությունը, զորք հավաքելով՝ զորավար նշանակեց իր եղբորը, որի անունն էր Աբաս և նրան առաքեց Հունաց աշխարհը:

* Բնագրում՝ խնուս արծաթույ:

Քանզի-նուշն տարում, երբ սատակեց Արզլան, փախճանվեց. նաև Կոստանդին կայսրը, և նրա որդին՝ Անոնը, փոխանորդեց իր հորը: Ու մինչդեռ նա մտածում էր զորքով Հունաց աշխարհն ասպատակել, արքան շուտափույթ բազում զորք առաքեց Քասանաստանի վրա, որը Քիշան է կոչվում: Նրանց վրա երեք զորավար նշանակեց, որոնցից երկուսը Հայաստանի նախարարներից էին՝ մեկի անունը Տաճատ էր. Անձե-վացյաց տնից և երկրորդինը՝ Արտավազը՝ Մամիկոնյան տնից, իսկ մյուսը հունաց զորավարներից էր: Բազում զորքով առաջ խազարով՝ նրանք հասան Կիլիկիայի և Քիշանի կողմերը և, երկրում ասպատակ սփռելով, բազմաթիվ քաղաքներ, գավառներ ու գյուղեր գրավեցին: Նրանց, որոնք իրենց դեմ դուրս եկան, մանր փոշու նման փշոնցին և, իրենք առնելով խոտնիճազանը բազմությունը՝ գերեվարեցին, և գերյալների թիվը ասում են թե 15 բյուրից ավելի էր, որոնց քշելով տարան Հունաց աշխարհը: Նրանք երթալով ներկայացան հունաց կայսեր՝ բազում ավարով հանդերձ, Անոն կայսրը շատ գովեստներով ընդունեց իր զորքը ու մեծամեծ պատիվներ ընծայեց իր զորագլուխներին:

Եվ այդ տարին դադար տվեցին:

Գ Լ Ո Ւ Ե Լ Ը

(Իսկ մյուս տարում Իսմայելի իշխանը դեսպաններ ուղարկեց, մեծ-մեծ փթվում էր՝ կամենալով խրոխտանքով զարհուրեցնել:

Ինչպես լսեցինք, նա պատգամավորի հետ ուղարկել էր երկու գրվանի լափ մանանեխի սերմ և գրել հունաց թագավորին, թե «շուտով քո երկրի դեմ ուղարկելու եմ իմ զորքերի բազմությունը քո տեսած մանանեխի հատիկների թվի լափ. [տեսնենք] թե քո երկրի հողը կբավի՞ իմ զորքերի անլափ բազմությունը ընդունելու: Արգ, եթե քո ձեռքին զորություն կա, պատրաստվիր իմ դեմ պատերազմի»:

(Կարգալով նամակը կայսեր խորհուրդները տակնուվրա չեղան, այլ հաստատուն մտքով պատասխան գրեց.) (Սխառդիկ, ասաց, իրենք չեն, որ հաղթություն են ձեռք բերում,

այլ նրանց Աստված է պարգևում, քանզի Աստված կարող է քո զորքը իմ զորքերին կերակուր դարձնել.) քո ուղարկած մանանեխի առակի նման, իսկ դու ինչ որ խոստանում ես անել, արա՛, և թող կատարվի այն, ինչ հաճելի է Աստուծո՛ւ:

Նույն ժամին հրաման ելավ կայսրից գյուղի՞* բնակիչներին փաղթեցնել քաղաքները, ամրությունները և ամուր աշտարակները: Իսկ (Իսմայելի իշխանը անթիվ զորք հավաքեց, նրա վրա զորավար նշանակեց) նույն մարդուն, որին վերևում հիշեցինք, և նրան բազմության հետ առաքեց Հունաց երկրի դեմ: Սրանք գնալով հասան Գաղատացոց երկիրը և պաշարեցին լայնանիստ քաղաքը, որ Ամուրիա է կոչվում: Զորքերի այս բազմությամբ նստելով, այն պաշարված պահեցին երեք ամսվա լափ, սակայն չկարողացան գրավել: Քանզի պարսպով ամրացված էր, իսկ շրջակայքը ոչ պակաս էր նպաստում դիմադրություն ցույց տալուն: Քանզի քաղաքի շուրջը բխում էր Սագանոսի գետի ակունքը, որով ճահճախուտ տիղմը անառիկ էր դարձնում ամուր դիրք ունեցող քաղաքը: Եվ ոչ մի կերպ չկարողացան վնասել, այլ միայն հստամ պաշարում էին:

(Իր զորքը հավաքեց նաև Եգիտը, որը մեր Հայոց աշխարհի հրամանատարն էր, Աքաս զորավարին օգնության հասնելու համար) Գնալով Պոնտոսի կողմերը, հասավ Կողոնիա բերդ-քաղաքը, Գովաթան, Կաստիղոնը և Մարիթենես գավառը, որի դեմ մարտ մղեց, սակայն ոչ մի արդյունք չտանալով՝ մեծ ամոթով դարձավ Հայոց աշխարհը: (Իսմայելի զորքերը նույնպես թողեցին Ամուրիա քաղաքի պաշարումը և գնացին իրենց բնակության երկիրը:)

Գ Լ Ո Ւ Ե Լ Թ

Մեզ մնում է պատմել նաև հետևյալ դեպքը: Մահմետի յոթերորդ տարում¹³⁵ վախճանվեց Անոն կայսրը՝ Կոստանդինի որդին, և նրա փոխարեն թագավորեց մատա-

* Բնադրում՝ աշխարհին:

դահաւ պատահնի՝ որդին՝ Կոստանդինը։ Երբ Իսմայելի իշխան Մահմետը լսեց հունաց արքայի մահը, բազում զորքեր հավաքեց, նրանց վրա զորավար կարգեց իր որդուն՝ Ահարոնին, և առաքեց Հունաց աշխարհի դեմ։ Երբ Իսմայելի զորքերը Հունաց աշխարհ հասան, հունաց զորքերը անմիջապէս նրանց դեմ ելան և սկսեցին հսկել նրանց վրա, փակելով ճանապարհները։ Իսմայելի զորքերը շարժուցան զուրս գալ կերակուր ճարելու, և մեծ սով եղավ Իսմայելի բանակում։

Իսկ Գրիգորի որդի Տաճատը¹³⁶, Անձևացի տնից, որի մասին նախապէս պատմեցինք, մի ժամանակ փախուստ էր տվել Իսմայելի իշխանից Կոստանդին կալսեր մոտ՝ Հունաց աշխարհ, և սա խնդութեամբ ընդունել էր նրան, մեծ շքեղութեամբ մեծարել նրա քաջութեան համար, քանզի նախապէս լսել էր նրա արիութեան համբավը։ Նա իր արիութիւնը խկույն ապացուցեց արքային՝ Սարմատացոց կողմերում, որը կոչում են Բուլղարք, և զարձակ մեծ հաղթութեամբ։ Տեսնելով նրա քաջասրտութիւնը, կայսրը նրան զորավար կարգեց Յբուր մարզկանց վրա, և նա 22 տարի ծառայեց արքային։ Իսկ Կոստանդինի և որդու՝ Լեոնի, վախճանվելուց հետո¹³⁷ երբ թագավորութիւնը վեցրեց Կոստանտինը, նրա հետ արհամարհանքով էր վարվում թագուհին, որը Կոստանդին կալսեր մայրն էր։ Ահա այս պատճառով էլ նա ձեռք մեկնեց Իսմայելի իշխանին։

Երբ Իսմայելի զորքերը հույներից պաշարման մեջ ընկան, այն ժամանակ նա երգման գիր խնդրեց նրանից՝ իր երկիրը դառնալու և խոստացավ նրանց պաշարումից հանել և տանել իրենց բնակավայրը։ Իսմայելի իշխանը լսելով՝ արագորոն կատարեց խնդիրը և երգմամբ տվեց նրան ամեն ինչ, որ խնդրում էր ու վստահելով այս երգման գրին՝ ելավ Հունաց երկրից իր ամբողջ տնով և Իսմայելի զորքը այդ պաշարումից հանեց։ Ահարոնը՝ Իսմայելի իշխանի որդին, նրան հայր անվանեց և մեծամեծ պատիվներ ընծայեց։ Երբ Տաճատը ներկայացավ Իսմայելի իշխանին, սա ընդունեց նրան բազում շնորհակալութեամբ և արքունի գանձարանից բազում ստացվածքներով լիացրեց նրան, Հայոց երկրի վրա իշխանութեան պատիվ տվեց և մեծ շքեղութեամբ առաքել նրան իր երկիրը։

Երբ Տաճատ իշխանը Իսմայելի իշխանի հրամանով հասավ Հայոց աշխարհը, երկրիս հրամանատար (կառավարիչ) ու ազգապետ Օթմանը¹³⁸ շուրջ ընդունել նրան, շկատարելով իր իշխանի հրամանը, նա հապաղեց և դեսպաններ հղեց, իրենց իշխանին հայտնելով, թե Հայաստանի նախարարները միաձայն չեն կամենում, որ քո իշխանութեան ենթակա հպատակները վրա իշխան գառնա մի մարդ, որը քո իշխանութեան դեմ ապստամբել է, ձեռք է մեկնել Հունաց արքային և որը գուցե նորից դավաճանի մեր զորքին։

Թեպետ Տաճատը բազում անգամներ կամեցավ Իսմայելի իշխանի ակնշիջ հասցնել իր իշխանութեան խանգարումը, սակայն շկարողացավ, քանզի ամենուրեք պահպանում էին ճանապարհների անցքերը¹³⁹ և բռնելով նրա ուղարկած դեսպաններին՝ բանտ էին դնում։ Նրա բողոքը Մահմետ իշխանին ու նրա սրդուն՝ Ահարոնին, չհասավ մինչև այդ աստիճանը։ Դրանից հետո, երբ տրտնջման բողոքը հասավ Մահմետ իշխանին և նրա Ահարոն որդուն, մեծ անախորժութեան հասավ մեր երկրի հրամանատար Օթմանին։ Իսմայելի իշխանի հրամանով նա ակամայից իշխանութիւնը տվեց Տաճատին։

Ապա որոշ ժամանակ անց Օթմանը հավաքեց Հայոց նախարարների զորքը տարավ Ադիանից երկիր, Կասպից դռների մոտ, Դարբանդ կոչեցյալ քաղաքը, որը պարիսպ ու ամրութեան պատվար է շինված հունաց ու խաղարաց զորքերին դիմագրելու համար։ Կանչեց Տաճատ իշխանին, սպարապետ Բագարատին, ներսեհ Կամարականին և այլոց Հայաստանի նախարարներից հրագագաթ Լեփեստոսի տապախառն ծագման օրերին և իր բանակը դրեց Քերան կոչված դաշտում, տապ խորշակի դժնդակ ու անհանդուրժելի շերմութեան ներքո։ Ամառային բոլոր օրերը անցկացրեց հնոցանման ապառաժ դաշտում։ Չկարողանալով դիմանալ, հայոց նախարարները տապախառն օդից վախճանվեցին, շարաքախտորեն զրկվելով երկրային կյանքից։ Վախճանվեցին Տաճատ իշխանը, Բագարատ սպարապետը, ներսեհ Կամարականը և ուրիշ զորականներ։ Իսկ Իսմայելի իշխանը, հույժ դայրացած լինելով Տաճատ իշխանի և նրան ընկերացող նախարարների եղերական մահվան առթիվ, խափանեց նրա (Օթմանի) իշ-

խանութիւնը և նրա փոխարեն առաքեց սմն Ռոճի¹⁴⁰ որպէս իշխան ու հրամանատար Հայոց աշխարհի:

(Իշխանութիւնը Յ տարի պահելուց հետո Մահմետ սատակեց Ռոճի գալստյան ժամանակ:)

Գ Լ Ո Ւ Խ Ե

Ապա նրանից հետո մեկ տարով իր հոր իշխանութիւնը վերցրեց նրա որդին՝ Մուսնն:

Սա ժանտ՝ մարդ էր, անսանձ և դիվահար) Իր մեջ եղած դեռ այնպէս էր նրան գրգռում, որ զվարճանում էր անարժան բարբի խաղերով՝ նպատակակետի փոխարեն մարդկանց էր կանգնեցնում և վարժութիւն համար խփում սպանում էր նետեր արձակելով:

Իր իշխանութիւնը հաստատելուց հետո նա Հայոց երկիրն առաքեց Ռոճի փոխարեն սմն Խազմի¹⁴¹, որն արդարև իր անվան նման խազմարար էր և դժոխաբարու: Երբ հասավ Դվին քաղաքը, նրան ընդառաջ ելան Հայաստանի բոլոր նախարարները, ընդառաջ ելան նաև Արծրունչաց իշխանները, Համազասպը, Սահակը և Մերութանը:

Իսկ բարին ատող թշնամին՝ տեսնելով նրանց փառքը, գեղատես վայելչութիւնը և նրանց ազատախումբ գնդի բարեզարդութիւնը, անմիջապէս բռնելով կտրիճ ու քաջ զորավարներին՝ բանտարկել տվեց և Յ ամիս կապանքներում կալանավոր դարձրեց: Նրանց զեմ ամբաստանութիւնն ուղարկեց Իսմայելի իշխան Մուսնին և նրանից հրաման ստացավ կյանքից զրկել նրանց: Ապա մահվան հրամանը և ցամաքն անիրավ վճիռը ուղարկեց բանտ, ուր բռնված պահված էին երանելի նահատակները:

Երբ ընթերցվեց նրանց մահվան վճիռը, կապվածները հարցրեցին նրանցից մեկին Քուրեղա անունով, որը շատ սիրելի էր նրանց և բարեկամ. «առա՛ մեզ, ի՞նչ հնար կա ազատվելու անիրավ մահվանից, որն սպառնում է մեզու Ասաց նրանց. «Ձեզ ոչ մի հնար չկա ազատվելու նրա ձեռքից, բայց եթե միայն հանձն առնեք մեր հավատքին դառնալ և հավանել մեր մարգարեի խոսքին», այդ գեպքում կազատվեք

* Բնագրում՝ ձայնի:

դավադիր մահից»: Լսելով այս հրամանը՝ Մերութանն զարհուրեց զայրկենական մահից և իրնն մատնեց հափտեանական գեհննի կորստյան, խորտակեց Քրիստոսի հավատքի քաղցր լուծք, անշատվեց Տիրոջ հոտից, հազավ զայլի կերպարանը և պարտավոր դարձավ տիեզերական ատանին: Սակայն քանի որ ոչ կամքով, այլ վերահաս մահվան կրկնուղից արեց այն, թերևս Քրիստոս գթա նրա սրտանց զղջումին:

Իսկ քաջ նահատակները, հագնելով հավատքի զրահը և իրենց գլուխներն ամբացնելով փրկութեան օտազավարտով, ասում էին նրան. «Քավ լիցի», թե Աստուծո ճշմարտութիւնը փոխանակենք ստութեան հետ, կամ հափտեանական կյանքը՝ վայրկենականի՞ հետ, կամ մշտնջենավոր կյանքը՝ անցավորի հետ, կամ բոլորի հույսը Քրիստոսի նկատմամբ՝ մեր անարժեք արյան հետ»: Այսպես իրենց բանտարկութեան ժամանակ միմյանց մարդում էին, ասելով. «Քավականալափ վայելել ենք անցավոր փառքը, ս՛վ եղբայրներ, արդ, այսուհետև մեզ չեն խաբի ոչ մեծութիւնները, ոչ անցավոր փառքը, ոչ մեր շքեղութեան ոսկեհոտ պատմութեանները, ոչ մեր ձեռքերը, ոչ մանուկների գուժը և ոչ այլ ինչ մերձակա բարիքներից, որոնց ցանկանալով շատերն անվերադարձ կորուստը ժառանգեցին»: Այսպես միմյանց քաջալերելով բանտի վշտերի ժամանակ աղոթքով Աստուծուն միավորված՝ հալցում էին հանդերձալ հույսի ակնկալութիւնը ժառանգել:

Քրիստոսի հայտնութեան սուրբ և փառավորյալ օրերին, որն ութօրյա տոնախմբութեամբ երգաբանում են Քրիստոսին հավատացողների դասերը, նրբ փորձութեան ժամը հասավ նահատակութիւնը կատարելու, անիրավութեան գործավարը հրամայեց իր ատանի առջև կանչել նրանց: Առաջվանից ծանոթ լինելով նրանց սրտի արիւթյանը և ի Քրիստոս ունեցած հավատքի ջերմութեանը, վերոհիշյալ առաջարկը չկրկնեց, այլ նախ ասպարեզ մտքրեց երանելի Իսահակին: Եվ տանջարանը, որ պատրաստեցին, նորագույն ձևով էր, բանգի երկնյուղ փայտ էին ցցել գետինը, պինդ հաստաւալած աչից ու ձստից: Նահատակին կանգնեցնելով՝ նրանց միջև երկնդի փայտերը գցեցին, անութների տակ, նրա ձեռքերը

* Բնագրում՝ առօրեայ:

պրկելով՝ պնդագույն կապեցին փայտին և շալտոններով՝ ծեծելով նրա թիկունքը՝ սաստկագույն տանջեցին, մինչև որ մարմինն առհասարակ բզկտվեց:

Իսկ երաննիի Համագասպին կապանքներով պահում էին գրտում: Նա իր սրտում ազոթում էր Տիրոջը, նրա շրթունքը չէր շարժվում, և խոսքը լսելի չէր, այլ միայն իր սրտից գուշում էր հառաչանքով, օգնության էր կոչում Տիրոջը այժ տառապանքի համար, որի մեջ ընկել էր:

Երբ այնպես սաստկագույն ձեռով տանջել էին, քանդեցին նրա դառն կապանքները և երաննիի Համագասպին բերին տանջանքի վայրը: Նույն օրինակով կապեցին նրան երկու փայտերի միջև և դառնագույն ձեռով նրա թիկունքը ևս տանջեցին: Երբ նա ևս արիաքար համբերեց տանջանքներին, ապա հրաման տվեց նրանց սրով սպանել, և դահիճները, լսելով դատավորի հրամանը, շուտափույթ նրանց վրա սուր բարձրացնելով՝ կտրեցին գլուխները: (Այսպես հոգիներն ավանդելով՝ հրածեշտ տվին այս աշխարհին¹⁴².)

Հենց մյուս օրը [Խազմբ] հրաման տվեց նրանց մարմինները փայտից կախել և զինվորներ կարգեց, որ քրիստոնյաներից ոչ ոք չզօղանա և թաղի նրանց մարմինները: Իսկ անօրենն դատավորը, որ սրտով անզիշում էր, նրանց լաշաշար մահվանից հետո էլ սրտի դառնությունը չբաղցրացավ, այլ փայտից իջեցնելով, հրով վառեց երաննիի զորավարների մարմիններն ու ոսկորները: Նույնիսկ փոշին չհամաձայնեց գերիզման հանձնել, այլ գետի ջրերին հանձնեց: Քանզի ըստ առաքելական խոսքի՝ այս աշխարհում նրանց կրած ծանր տառապանքների փոխարեն պարզևատուի վարձատրությունները հարյուրապատիկ հատուցում կտան: Ըստ Տիրոջ խոստումի, թե ռամեն ոք, որ թողել է հայր կամ մայր, կին կամ որդիներ, կամ ազարակներ իմ անվան համար, հարյուրապատիկ կառնի այն աշխարհում և հավիտենական կյանք կժառանգի^{**}:

Այս բանը պատահեց Մուսեի իշխանության, Խազմի ազգապետության ժամանակ, Տիրոջ սուրբ հայտնության օրերին, երբ Հայոց 233 թվականն¹⁴³ էր:

* Սեծի գործիք:

** Ղուկ. ԺԷ, 29—30:

Եվ Մուսեի իշխանությունը 1 տարի պահելով՝ վախճանվեց:

Սրա օրոք շարաշար մահվամբ սպանվեց նաև Վրաց իշխանը, քանզի, բարձրացնելով նրա ոտքերից ու ձեռքերից՝ մատաղ հասակը մեջտեղից կտրեցին: Այսպես, իբրև սպանդի տարված գառն, նա հրաժարվեց այս կյանքից:

Այս ամեն շարիքները գործելուց հետո (Մուսեն) մեկ տարի անց սատակեց: |

Գ Լ Ո Ւ Խ Խ Ա

(Սրանից հետո եկավ Մուսեի եղբայր Ահարոնը¹⁴⁴ Մահմետի որդին, ազաճ և արծաթասեր:

Սրա իշխանությունը, օրերին նրան հակառակորդ էր եղբայրը՝ Ովբեղլան, և միմյանց նկատմամբ եղած հակառակություն պատճառով նա բաժանեց և տվեց եղբորը Ատրպատականն ու Հայաստանը՝ Վերքով ու Աղվանքով հանդերձ¹⁴⁵: Իր լար բարբի համաձայն, մեր երկրի վրա կարգեց անսամձ և ժանտաբարո անաստվածությունը հրամանատարներ, որոնք Աստուծո երկյուղը նույնիսկ միտք չէին ածում: Նախ Մզղեի որդի ոմն Եզիտի, նրանից քիչ հետո՝ Աբգալքերիին, որը ոչ բարի գործ արեց և ոչ լար, այլ լավ հույսեր էր ներշնչում: Նրանից հետո [եկավ] ոմն Սուլեյման, ամենից ժանտը և շարագործը: Նրանից հետո ինքն իսկ Ովբեղլան եկավ Պարտավ¹⁴⁶ քաղաքը և Սուլեյմանին¹⁴⁷ հաստատեց մեր երկրի իշխան ու նրա ձեռքը հանձնեց Տիրոջ ժողովրդին՝ իբրև ուշխարներ՝ ապականիչ գայլերի մեջ:

(Իսկ նա այնպիսի անբառնալի ծանր [հարկային] լուծողնց մարդկանց վրա, որ չէին կարող տանել, և եթե ամբողջ ձեռքում եղածը տալին, բավական չէր իրենց անձը ազատելու: Այս Սուլեյմանը հղեց մի անօրենն ու վատթարագրի մարդու՝ աղախնի որդու, որն ազգությունը հոռոմ էր, և իր փեսան՝ Իքն Գոկե անունով: Գալով Դվին քաղաքը՝ սաստիկ դաժանություններ սկսեց խոշտանգել մեր աշխարհի բնակիչներին հարկապահանջություններ: Սրա մոտ հավաքվելով բոլոր նախարարներն ու ռամիկները՝ եկեղեցականներով ու կաթողի-

կոսով հանդերձ, որի անունն էր Եսայի: աղաչում էին թե-
թեանցնել տուրքերի (սակ) ծանրութունը, որ պահանջում էր,
սակայն ոչ մի օգուտ չտվեց, քանզի Տիրոջ բարկութունը
անօրենների ձեռքն էր տվել քրիստոնյա ազգը: Նա խելույն
մեր աշխարհի տարբեր կողմերը հարկահաններ հղեց և հրա-
ման տվեց ամենակարճ ժամկետում* հավաքել կրկնակի, քան
ամբողջ տարում պահանջվածը, և հրամանը կատարվեց: Իսկ
երբ այն գլուխ եկավ, սատանայի որդին շուտափույթ այլ
լարիք խորամանկեց: Նա կարգադրեց կապարե կնիք զննել
ամենքի պարանոցին և ամեն մի կնիքի համար բազում զուգա
էր պահանջում, մինչև որ մարդիկ հետին տնանկության հա-
սան շարաշուք դահճի անտանեիկ նեղութուններից:

Գ Լ Ո Ի և Խ Ո

(Ովքեղալի գալու մյուս տարում նույն ծանր դժբախտու-
թյունները առավել ևս շատացան, քանզի դրանից հետո ոչ ոք
իր ինչքի տերը չէր, այլ ամեն ինչ ավարի էին տանում):
Շատերն ինքնակամ թողնում էին հոտերն ու նախիրները և
փախստական էին դառնում, լկարողանալով աղետների ծան-
րությանը դիմանալ, իսկ թշնամիները քշում էին անասուն-
ներն, ու ավարի տալիս ունեցվածքը:

Ապա երբ այսպես ունեցվածքից զուրկ մնացին, մերկ,
բորիկ ու սովամահ և, իրենց ապրուստի միջոց չգտնելով,
բաշվեցին փախստական գնացին¹⁴⁸ Հունաց աշխարհը՝ նրանց
թիվը ասվում է թե 12 հազարից ավելի էր, կանանցով ու
մանուկներով հանդերձ, և նրանց առաջնորդներն էին Ամա-
տունյաց տոհմից Շապուհը, նրա որդի Համամը և ուրիշներ
Հայաստանի նախարարներից ու նրանց հեծյալներից: Անօրեն
լարաշուք թշնամիի փախստականների կտից իր զորքով հե-
տամուտ լինելով՝ հասավ Վրաց սահմանը՝ կող գավառը: Ընդ
որում մարտի մեջ մտնելով, փախուստի մատնվեց, և ոմանք
սատակեցին, իսկ իրենք (փախստականները) անցան Ակամ-
սիս գետը, որը, Տայքի կողմերից բխելով, գնում է հյուսիս

արևմուտք, անցնելով Եգիպտոս երկիրը՝ մտնում է Պոնտոս:
Սրբ. գեորգ. անցան, շուտափույթ իմաց տվեցին Հունաց
կոստանդին արքային: Սա իր մոտ կանչելով նրանց նախա-
բարններն ու հեծյալներին՝ պատիվներ շնորհեց և մնացյալ
խառնիճազանը ժողովրդին բնակեցրեց բարվոք ու արգավանդ
երկրում: Սակայն ժողովրդի կեսը, որ մնաց [հայրենիքում],
սաստիկ կարստության պատճառով ստրկական ծառայության
անձնատուր եղավ, փայտահատ ու ջրաբեր դարձավ գաբավո-
նացիներին¹⁴⁹ նման:

Վարձյալ նոր շար խորհուրդ [հղացավ] Սուլեյմանի կող-
մից Դվին քաղաքի կառավարիչ նշանակված դժոխաբարո ու
լարաշուք ամբարիշտ մարդը: Փանզի այդ ժամանակ առ
Քրիստոս էր փոխադրվել նրանելի սուրբ և նշողահավատ
Հայոց կաթողիկոս Սապիաուր¹⁵⁰: [Իբն Դոկինն] խորհեց համա-
րակալել ու քննել եկեղեցու ամենայն ունեցվածքն ու սպաս-
քը: Իր մոտ կանչելով բոլոր կղերիկոս սպասավորներին, ուժ-
գին սպանալիքով զարհուրեցրեց նրանց՝ սոխեք, ասաց,
ոչինչ չծածկեք ինձանից, այլ ամեն ինչ ի հայտ բերեք: Ապա
թե մեկը որևէ բան թաքցնի և հետո ի հայտ գա, ինքն իր
անձի կորստյան համար մեղապարտ կդառնա: Իսկ նրանք,
վախենալով սպանացող պատուհասից, ամեն ինչ նրա ձեռ-
քը տվեցին և ամեն ինչ, որ ծածուկ գանձարաններում կար,
ցույց տվեցին և ծածուկ բան չմնաց, որ շղենին նրա առջև՝
պատվական սպասքներ ոսկուց և արծաթից և պատվական
բարերով, թագավորական հանդերձներ, որոնք Տիրոջ սուրբ
և փառավորյալ աստվածընկալ խորանին էին նվիրաբերել:
Սրբ այս բոլորը տեսավ, խորհեց ամբողջն ավարի տալ, սա-
կայն ետ կանգնելով այդ մտքից՝ առավ գանձերից, պատվա-
կան հանդերձներից և այլ սպասքներից ինչ որ իր անձին
ցանկալի էր թվում: Իսկ ինչ որ մնաց, հանձնեց եկեղեցու
ունեցվածքի ավանդապահներին, մինչև որ հայրապետական
աթոռին հաջորդեց Ստեփաննոսը, որ բազում կաշառքով հա-
սավ հայրապետական աթոռին, վատնեց ամեն ինչը և ունեց-
վածք, մինչև որ [եկեղեցու] գլուղերը, ծառաները ազատուց
ու պարտքերը [վճարեց]:

* Բնագրում՝ ի միում վայրկենի:

ՉԻՆԱՏԱԿԱՐՆ

Վերջացավ Ղևոնդի վարդապետությունը Քորդոմի տան ժամանակագրության ժառանգության¹⁵¹, Տեր Շապուհ Բաղրատունու հրամանով ի փառս և ի գովեստ ամենատուրք Երրորդության, որն օրհնյալ է այժմ և միշտ, ամեն:

Տեր Համազասպը Մամիկոնյան պատվավոր սոհմից, ցանկանալով սրանից [օրինակ] ունենալ, իր արդար ունեցվածքից տալով անպիտան գրիչ Մարգրիտ՝ հրամայեց ընդօրինակել, Աղաչեմ, հիշեցեք ինձ ողորմած Աստուծո առջև, և նրան փառք Հավիտյանս, ամեն:

1. Ղևոնդի գրի վերևագրի լաբյում բանաւերների մաս կամ որչա տաւակարձություններ:

Երևանի Մատենադարանում գտնվող Ղևոնդի ճնագրայն գրչագիրը (ձեռ. 1902, ժԳ դ. էջ 3 ա) այսպես է սկսում.

«Պատմարանսիսն Ղևոնդեա մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս էրեկոյն Մանմախի և զկնի նորին, թէ որպէս և կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց ևս առանկ թէ Հայոց ազգիս»:

Նյաւտի անենալով, որ այստեղ թեև ապում է, որ Մանմետի (Մանմախ մարզարեի) մասին է պատմվելու, այսուհանդերձ շարադրանքն սկսում է Մանմետի մանվամբ, ապա որչա բանաւերներ (օր. Ն. Ալիեյանը) եղրակացրել են, թե պատմության մատչանի սիկքը պակաս է (Ն. ԱկունճԱն, Ղևոնդ եւեց, էջ 47—48):

Գլխակարգությունը մենք պահպանել ենք ըստ Կ. Իզյանի և Ս. Մալխասյանի նրատարակության (Ա—Խր), որի առաջաբանում նշված է, թե գլխակարգությունը նշանակված է ըստ իբեց մաս եղած՝ 4584 (1668 թ.) գրչագրի գրութների բաժանման: Անհրաժեշտ է նշել, որ ճնագրայն ժԳ դարի ձեռագիրը (1902, 3 ա—130 բ) և ընտիր համարված ժչ դարի 3070 (233 բ—300 բ) ինչպես նաև 5501 (1683 թ.) և 3583 (ժԳ դ.) նեազրեեր ունեն նեաեկալ գլխակարգությունը՝ Ա—ԽԹ (էջ 18):

2. Ամիր ալ-Մումինիքը, աբաբերեն ամիր ալ-Մումինին (իշխան հափաստացեղաց), այսինքն՝ խալիֆա աբուսահայտոյան հայկական նոգեակի վերջավորության ընդունած ձևն է: Ղևոնդն օգտագործում է նաև իշխան տանկաց և իշխան Իսմայիլի աբուսահայտոյունները:

Նեաագայում Հովհաննես Դոստանակերացին հետեց ամիրապետ ըստը, և պատմագրության մեջ ամիր ալ-Մումինիքը մուսուլման արվեց: Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Գիտողություններ «օստիկան» բառի մասին, Պատմարանասիրական հանդես, 1964, № 2, էջ 246 (էջ 18):

3. Մանմետը կամ Մանմախ իբն Աբդալլահը, ձեվել է Աբաբայի Մեքքա խազմում մուսուլմանաց 570 թվականին Կուրյալ զեղիք պատկանող մի համեստ ընտանիքում: Նրիտասարդ հասակում նախ եղել է նովիլ, ապա առևտրական բարձրանների հետ նախապահորպէս է Ասորիք և ծաւորացել քրիստոնեական ու ժովբիսական (ճրեական) կրօններին: Անուսնացել է հարուստ այրի ետիշոյի հետ և վարել նա առևտրական գործերը: Մուսուլմանաց 610 թվականին սլսեց բարոզել մի ճոր միստվածյան կրօն, որը պահանջում էր անվերապան ճնագանդություն ալլահին:

Սակայն Մեքքայում ընդունելություն չգտնելով և ճեղվելով իշխող մուսուլման առնմից՝ 622 թվականին իր հետեւողների հետ փախալ կամ զազրեց (աբար. հիջրա) Յաւիթ (հետադայում՝ Մադինա), որտեղ հիմնեց նավաայլունների նոր համայնք: Նա պայմար օխեց Մեքքայի Ասորիք գնացող բարձրանների գեմ և վերջապես մեքքացիները, նեղվելով, 630 թվականին Մանմախին իրավունք տվին պաաս մուսուլմանաց զործել Մեքքա

ի. հասցիւ կը կրօնք: Եւ հուանք հազարից է հովառայաճներն բնակար ձևով: Մնա՞վ 832 թվականին:

Մուսամմադի կենսագրությունը գրվի է երա մանկանից շատ հետո Իբն Իսհակի (մեռ. 788) կողմից, սակայն երա տեղեկությունները մեզ հասել էն. Իբն Զիյադի (մեռ. 834) վերամշակումով: Ասաջի՞ն սուուլազա-տում գրամիշը. որ խոսում է երա մասին Սերնուս է, քր ժամանակակիցը: Հնարագ. պատմիչներից երա մասին տեղեկություններ են հազարից Քովմա Արժուհին. Մովսես Կազանկավազյին և ուրիշներ:

Երա կենսագրությամբ գրողվի են բազմաթիվ արևելագետներ, ինչպես օր. Գ. Վալլը, Մ. Փոգֆրուս-Դումոսիեր և ուրիշներ (էջ 18):

4. Աբու Քաբր (632—634) հաջորդից Մուսամմադ մարգարեին և կողմից խալիֆա՞ հաջորդ: Երան բնորեցին մանմեղապան համայնքի Մեծամեծները: Երա օրով խալիֆեում նեականեին մանմեղապանությունը ընդունած արաբական ցեղերը պատումբեցին, բայց Հիջազում կենտոնեացած մանմեղապան եամայնքը կարողացավ խեղդիլ բնրոսությունը և ազանովի Արաբիայի միամեղապանությունը որպես մեկ պետություն՝ խալիֆայություն:

Արևել 633 թվականին արաբներն անցան արսափին նվաճումների: Hitti, History of the Arabs, p. 178. (էջ 18):

